


ANAHIT, REVUE ARMÉNIENNE, LITTÉRAIRE ET ARTISTIQUE



DIRECTEUR : A. TCHOBANIAN.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ի՞նչ կը սղասենք Մեր Նորընտիր ՀԱՅՐԱՊԵՏԷՆ	Ա. ՉՕՊԱՆԵԱՆ
ԱՌ ԻՏԱԼԻԱ (ԼԷՕՓԱՐՏԻ),	Թարգմ. Հ. ԱՐՄԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ
Քեզի բննեցի ՊԻՏԻ ԸՍԵՄ	Ա. ՀԱՍՐՈՆ Ս. ՏԱՏՈՒՐԵԱՆ
ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՍ	ՏԻԿԻՆ ՀՐԱԶԵԱՅ
ՀԱՅ ԷՋԵՐ . — ՏԱՂ ՍԻՐՈՅ	***
ՍԻՐԷ ԶԻՍ	ԽՈՐԷՆ ԱՐՔ. ՆԱՐՊԷՅ
ԿՈՅՍԸ	»
ՏԱՂԻԿՆԵՐ	ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒԶԱՔ
ՀԱՅ ԱՐՈՒԵԱՍ . —	ԷՋ ՄԸ ՀԱՅ ՀԻՆ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
ԾԵՐ ԿՈՒՌԿԵԸ	ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ
ՉՐԱՂԱՆԻ ՊԱԼԱՏԸ	ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶԵԱՆ
ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶԵԱՆ	Ա. ՉՕՊԱՆԵԱՆ
ԵՄՄԱՒՈՒՍԻ ՃԱՄԲՈՐԴՆԵՐԸ	ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ
ՀՍԿՈՂՆԵՐԸ ԳԻՇԻՐԻՆ ՄԷՋ	ՍՈՒԻՆՊԸՐՆ
ՎԻՇԱՊԸ	Ա. ՉՕՊԱՆԵԱՆ.
ՆԻՔՈԼԱ ԿՈԿՈԼԻ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ	
ՓԱՐԻՋԻ ՀԱՅՈՑ ՄԻԹԻՆԿԸ	—
ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ	—
ՖՐԱՆՍԱ Կ ՀԱՅԵՐԸ	—
ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	—

ՏԻԿԻՆ ՀՐԱԶԵԱՅԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մեր այս թիւով կը սկսինք հրատարակութիւնը Հայոց ամենամեծ դերասանուհւոյն՝ Տիկին Հրաչեայի՝ Յիշողութիւններուն : Այդ պարզ անսքեւեք ու այնքան անկեղծ (ու բնական ձեւով մը գրուած էջերը ուր հռչակաւոր արուեստագիտուհին իր քասերական գործունեութեան ինչպէս եւ սոսկական կեանքին գլխաւոր գրուագները կը պատկ, շահեկան են ինչպէս հոգեբանական վեպ մը, եւ կարեւոր՝ իբրեւ պատմական տիպարներ :

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա Ն Ա Հ Ի Տ Ի

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԵՇՐԶԱՆԻՆ

Բաժանորդագրութիւնը պէտք է կԱՆԽԻԿ վճարել :

ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ազգային, Գրական, Գեղարուեստական

ԺԱ. ՏԱՐԻ 1909

ԱՊՐԻԼ - ՄԱՅԻՍ

ԹԻԻ 1, 2

ԻՆՉ ԿԸ ՍՊԱՍԵՆՔ

ՄԵՐ ՆՈՐՇՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԷՆ

Կացութիւնը որու հանդէպ պիտի գտնուի Իզմիրլեան՝ երբ ի մօտոյ երթալ բազմիչ Լուսաւորչի աթոռին վրայ, վարդազոյն ըլլալէ հետեւ է, բայց եւ բնաւ երբեք չէ յուսահատական ինչպէս շատեր կը կարծեն: Կացութիւն մըն է՝ լի գծուարութիւններով ու բարդութիւններով, որոնց լուծումը դիւրին պիտի ըլլայ սրատես հայեացք ու հզօր կամք ունեցող պետի մը համար: Վերջերս առիթ ունեցած ըլլալով բաւական մօտէն ուսումնասիրելու այդ կացութիւնը, կը ցանկամ այդ մասին պարզել իմ տեսութիւնս:

* * *

Հինգ վեց ամիս առաջ, Կովկաս ոտք դնելնէս մինչեւ Էջմիածին հասնելնիս, իւրաքանչիւր ուստանայ որու կը հանդիպէինք, կ'ըսէր մեզի՝ կաթողիկոսական ընտրութեան թրքանայ պատգամաւորներուս. « Ողորմելի գրութեան մէջ պիտի գտնէք Էջմիածինը. անխլանութիւն, կազմալուծում, աւերակ...»: Ոմանք ատոր պատճառ կը բռնէին միաբանները, « ազէտ, մոլեռանդ, անձկամիտ, ևսա-

մու »՝ ըստ իրենց. այլք, աւելի բազմաթիւ, այդ անկման պատասխանատու կը նկատէին հանգուցեալ Խրիմեան կաթողիկոսը:

Էջմիածնայ մէջ գտայ իսկապէս անխլանութիւն եւ անկում, բայց հաստատեցի որ այդ կացութեան ստեղծիչը, ոչ թէ միաբաններն են եղած, այլ Խրիմեան կաթողիկոսը:

Ըսել չեմ ուզեր որ միաբանները՝ ամբողջութեամբ՝ անթերի մարդիկ ըլլան: Անթերի մարդ չկայ աշխարհիս մէջ: Իրողութիւնն այն է որ միաբաններուն թերութիւնները չեն որ Էջմիածինն այդ անկման հասուցած են, այլ Խրիմեանի յոռի վարչութիւնը, որ միաբաններուն թերութիւնները խրախուսած եւ յատկութիւնները չէ քաջալերած:

Մինչեւ Էջմիածին երթալս, ես միշտ ամենախօր հիացում ունեցած էի Խրիմեանի համար՝ իբր բնածին սաղանդ, իբր խոշոր գործիչ, իբր ժողովրդական զանգուածներ խանդավառող ու շարժող պարագլուխ, իբր՝ ամէն բանէ առաջ՝ սրտի մարդ, ազնիւ ու ազգասէր մարդ. իր թերութեանց մասին դառնութեամբ խօսող անձեր տեսած էի, կ'ծու յօգուածներ կարգացած էի, բայց ատոնք չէին խախտած համոզումս: Դիւրաւ կուռք կոտորողներն չեմ. հայ ազգը ամէն օր չի հասցներ մեծ մարդեր, որպէս զի վուրկոտ ըլլանք հսկայ պաշտումի մը արժանացած հայ անհատ մը մէկ օրէն միւսը գետին զարնելու: Կ'ընգու-

նէի որ « տէրվիչ մարդ » էր, անվարչագէտ . կ'ընդունէի որ ունէր բացասական կողմեր . բայց այդ թերութիւնները ինծի կ'երեւային լսի բիծեր՝ արեւու մը վրայ : Մօտանց քննելով գործը զոր ան կատարած է իբր կաթողիկոս , սուսկելով միեւնոյն իրողութիւնները՝ բոլորովին տարբեր կուսակցութեանց ու վարդապետութեանց վերաբերող անձերու բերնէն . շօշափելի փաստերով անձնապէս հաստատելով անդի ունեցած քայքայումը , ես այն եզրակացութեան եկայ որ Խրիմեանի պակասութիւնները իբր կաթողիկոս՝ շատ աւելի մեծ ու կարեւոր եղած էին քան պարզ բիծեր արեւի վրայ : Խրիմեան ինծի համար միշտ կը մնայ մեծ մարդ մը . ԺԹ . դարու Հայութեան մէկ քանի ամենէն հզօր գէմքերէն մին , բայց մարդ մը՝ սուսար թերութիւններով . եւ այնպիսի թերութիւններով որ կ'նշանեն նոյն իսկ գեղեցկութիւնը բարոյական մտատիպարին զոր մենք երազած էինք իր մէջ , մարդ մը՝ ոչ թէ անվարչագէտ , այլ կարգատեսցուիբր կաթողիկոս՝ յոսեգոյններէն մին է որ ունեցած ըլլանք երբեք : Երբ կը բաղդատենք զինքը Գէորգ կաթողիկոսին հետ , տարօրինապէս կը փոքրանայ Խրիմեան : Գէորգ՝ քաղաքական հարցերու մէջ՝ իր ծայրայեղ թրջասիրութեամբ՝ ի նկատի ունենալով իր ժամանակին հանգամանքները , կ'ընայ քննադատելի ըլլալ . բայց այդ վերապահումէն զատ՝ — թեպէտ այդտեղ իսկ իր հաստատ ու խոր համոզումը , իր հիմնական ու անյողդող թաքթիբը , զինքը ասոր մէջ տարամերժօրէն ներշնչող ազգասիրական զգացումի՝ նորէն արժանի են խոր համակրանքի — կ'ունենանք հոյակապ գէմք մը կաթողիկոսի , որ գիտցած է ըլլալ իսկական պետ , կարող կառավարելու , կարգաւորելու , ծաղկեցնելու . իրեն յանձնուած Տունը , որ՝ առանց գրագէտ ըլլալու՝ եղած է իսկական սիրող ու պաշտպան ուսման եւ գրականութեան , — հիմնադիր Գէորգեան ճեմարանին , կառուցիչ Մերոպայ եկեղեցւոյն եւ ուրիշ բազմաթիւ շինութեանց , թելադրիչ ու հրատարակիչ Թաշեհանի խմբագրած երաժշտական Շարականին , — հեղինակաւոր ու պատկառելի պարագլուխ , որ կաթողիկոսական աթոռին վարկը գիտցած է միշտ բարձր բռնել ,

խղճամիտ վարիչ , որ հարստացուցած է էջմիածինը եւ իր մահուան բողբոջն այդ Տունը ձգած է կէս միլիոն բուպլիի անձինս միսլի զբամազուի , գումար մը որ միջեւ այժմ ալ՝ միակ դրամական ստացուածքն է էջմիածինի : Նոյն իսկ Մակարը , թէեւ չհասնի Գէորգի մեծութեանը , մեզի թողած է յիշատակ մը լուրջ ու խելացի կաթողիկոսի , հետատես , խոհեմ ու կորովի պետ , հոգւին կապուած Հայ եկեղեցւոյ շահերուն , հարական գործով լեցուն գէպի վանքն ու միարաններն ու ամբողջ տղաք , ծանրգլուխ ու ազնիւ մարդ : Խրիմեան եղած է Հայրապետ մը ինքնամուլ , անկարգապահ եւ քայքայիչ : Սրբէն ի ծնէ՝ կարգի ու կանոնի ձկիլ չգիտցող մարդ , « ազգին շփացած զաւակն » ըլլալու հանգամանքը իր այդ թերութիւնը աւելի շնչուած է եւ զինքը մղած՝ իր անհպելի կոտորի գիտակցութեանը մէջ՝ ինքզինքը Միաբանութիւնէն , Լուսաւորչայ գանէն , իր նախորդներէն , իր ազգէն գերազանց էակ մը նկատելով խելքին փչածն ընելու : Իրմէ առաջ , Հայոց կաթողիկոսը ամբողջ աշխարհիս մէջ՝ եւ մանաւանդ Ռուսիոյ մէջ , յաչս նոյն իսկ ռուս արքունիքին , ամենախորին պատկառանքով պաշարւած , վեհապետի դերը ունեցող անձնաւորութիւն մըն էր . ինքն իսկ Խրիմեան՝ երբ կը հասնի կովկաս , կը գտնէ ընդունելութիւն մը արքայապետի թէ՛ հայ ժողովրդէն եւ թէ՛ ռուս իշխանութենէն , ընդունելութիւն մը նոյն իսկ աւելի փառաւոր քան ինչ որ գտած էին իր նախորդները , շնորհիւ իր « սուրբ մարգու » , ժողովրդական մեծ գործիչի տիեզերական համբաւին :

Չյարգել ո եւ է « էթիքէթ » , մոռնալ ամէն պահ՝ պաշտօնին պարտադրած կարգուսարքը : միս-մինակ ձիու մը վրայ նստուիլ ու պտրտելու ելլել , սիրտը նեղացած ասեն՝ երթալ թիֆլիս կամ Բագու , մասնաւորներու հիւր ըլլալ , ասոնք եւ ասոնց պէս բաներ , այն արդիւնքն ունեցած են , որ վերջ ի վերջոյ հայ հասարակութիւնը կաթողիկոսը սկսած է նկատել իբր պարզ վանահայր մը , ռուս իշխանութիւնները՝ Հայոց հայրապետին ընդ առաջ փոխանակ մեծագոյն պաշտօնատարները ուղարկելու՝ աննշան պաշտօն-

եաներ զրկելը բաւական համարած են : Ասոնք ինքի կր համարէր պարզասիրութիւն : Բայց պաշտօններ կան որոնց հետ ծայրանել պարզասիրութիւնը չի հաշտուիր : Լսեցէք հետեւեալ միջագէտի : Երբ Խրիմեան կը հասնի Փեթերսպոլի՝ Չարին ներկայանալու համար. Արքունիքէն իրեն կը զրկուի շքիղ կառք մը , որպէս զի ա՛նով գոյ պալատը . Խրիմեան կը մերժէ նախ այդ կառքը նստիլ . եւ իբր թարգման իրեն ընկերացող հանգուցեալ Եզեանին կ'ըսէ . « Փողոցի կառք մը գանեմք , եւ անով երթանք » . « Այս պատիւը Խրիմեանին չէ որ կ'ուզողուի , կը պատասխանէ Եզեան , այլ Հայոց կաթողիկոսին » , ու թեւէն բռնելով արքունական կառքը կը մտց'ի գահն . . . Այս կառքի մանրամասնութիւններ բազմաթիւ են , առոնք հոս թուելն աւելորդ է : Աւելորդ է նաև թուել բոլոր անքաղաքագիտութեան ցա՛մերը զոր Կրիմեան գործած է՝ իբր կաթողիկոս : Հազիւ հայրապետական գահուն վրայ բարձրացած , Փեթերսպոլէն կը հրաւիրուի ներկայ գանուիլ Չարին թագադրութեան հանգէսին . ուս եւ հայ յարմարութեանց բարոքա՛ն նպաստելու եւ մանաւանդ ադ միջոցին արեան մէջ տասլակիղ տաճկահայ հասարակութեան ի նպաստ Ռուսները լաւ արանադրելու համար թանկագին առիթ մըն էր որ կը ներկայանար . Խրիմեան կը մերժէ երթալ , եւ կ'ուզարկէ ուսուրէն չգիտցող եպիսկոպ ս մը :

Ծանօթ է անգլո-հայկական ընկերութեան զրկած իր օրհնութեան կոնգալը , որ ուս կառավարութիւնը մեզի դ'մ կաողեցնելու միայն ծառայեց : Ծանօթ է իր Քէնիլըսլըրի արքեպիսկոպոսին ուղղած կոնգալը՝ հայկական դասին համար աջակցութիւն խնդրող եւ ուր Հայ եկեղ'ցին կը կոչուէր « մին ի հնագոյն եկեղեցեաց Արեւելից » , բայց ծանօթ չէ թեւեւ ինչ որ Քէնիլըսլըրի արքեպիսկոպոսը զայն կարգալով ըսած է պատպանաորներուն . « Ի՛նչպէս թէ՛ մին ի հնագոյն եկեղեցեաց » , մենք կ'ընդունինք որ հայ եկեղեցին հնագոյնն է քրիստոնեայ եկեղեցիներուն . . . » Անկէլքան եկեղեցւոյն գերատոն ներկայացուցիչը աւելի հայ-հայրապետ քան մեր կաթողիկոսը . . . :

Եւ ոչ իսկ , աւաղ , կարելի է իբր կա-

թողիկոս իր գործած սխալները ներել , նկատի ունենալով իր կատարած դերը եկեղեցական կալուածներու գրաւման դրուագին մէջ . որովհետեւ իրողութիւնները մօտէն քննողին՝ դատութիւնը վերապահուած է հաստատելու թէ այդ դերն ալ ինքը ինքնաբերաբար չէ կատարած , այլ ժողովրդական կամքին բուռն ճնշման տակ . այո՛ . Խրիմեան չէ եղած , ինչպէս կը կարծենք , այն կորովի ու անձնուէր պառք , որ այդ եղերական բոպէին . իր իսկ ներքին մղմամբ ցցուէր կողոպտիչ հրովարտակին դէմ եւ իրօք տար ժողովրդին՝ առաջին օրինակը հայ եկեղեցւոյ արդար իրաւանց պաշտպանութեան համար պայքարին : Առաջին վայրկեանին՝ ընդհակառակը՝ Խրիմեան փութացած է յայտարարել թէ պէտք է խոնարհիլ ճարական հրամանին առջև եւ յանձնել մեր գոյքերը . . . Ժողովրդի տիրական պահանջն է որ զինքը բռնադատած է առնելու այն կեցուածքը զոր առաւ . անշուշտ՝ եթէ ինքնաբերաբար չէ կատարած այդ դերը , զայն լաւ է կատարած . իր տաղանդն ու ճարպիկութիւնը վէճի տակ չեն :

Իսկ ինչ աւեր որ գործած է Խրիմեան՝ էջմիածնայ վանքին , եկեղեցւոյն , միաբանութեան , Գէորգեան ճեմարանին մէջ՝ նիւթապէս , բարոյապէս , վարչապէս . — անհաշուելի է : Ոչ միայն չէ ջանացած՝ իր անուանին ու դիրքին մեծ հեղինակութեամբը հալեցնել բոլոր երկպառակութիւնները որ արդէն իսկ որոշ չափով կարող էին գոյութիւն ունենալ ինչպէս ամէն խումբերու՝ նոյնպէս եւ էջմիածնայ միաբանութեան մէջ , այլ եւ ինքն իսկ քաջալերած , սաստկացուցած է այդ երկպառակութիւնները , եւ յաճախ ինքն իսկ ծնուցած է գանոնք՝ նոյն իսկ իրարու հետ սիրով եղող միաբաններ գժտեցնելու համար մաքիալէլական միջոցներու դիմելով , մինչև իսկ փոխադարձ լրտեսութեան մղելով միաբաններէն ոմանք : Միջադէպները , փաստերը անթիւ են իր այդ մութ քաղաքականութիւնը ապացուցանող :

Հալածելու համար Գէորգեան ճեմարանը , — որու դէմ սրտագին առելութիւն մը սնուցած է , ինչպէս ամէն բանի դէմ զոր Գէորգ մեծ կաթողիկոսը հաստատած է , — ոչինչ խնա-

յած է . յարգելի բանասէր եւ պատուական ուսուցիչ Պ. Կոստանեանց , ինչպէս եւ ուրիշներ , շատ բան ունին պատմելու այդ մասին : Եթէ ձեռքէն գար , կը փակէր այդ վարժարանը կամ պարզ նախակրթարանի կը վերածէր . « գիւղացի տղաք պէտք չունին բարձր ուսում ստանալու » կ'ըսէ եղեր . . .

Այդ նախանձի զգացումը՝ միմիայն Փէորգ կաթողիկոսի յիշատակին նկատմամբ չէ որ ցոյց տուած է . տարապայման ինքնամոլութիւնը որով լեցուած է եղած , զինքը մղած է արգելելու . ո եւ է ջանք իր նախորդներէն մէկուն մեծութիւնը հրապարակել ձգտող : Պ. Քարամեանց , հմուտ բանասէրը , Փէորգեան վարժարանի ուսուցիչ եղած ասին . Արարատին համար ուսումնասիրութիւն մը կը պատրաստէ մեծագործ Երեւանցի Սիմէոն կաթողիկոսին գործունէութեան վրայ . Խրիմեան կը կանչէ Քարամեանցը եւ կ'ըսէ անոր խնդալով . « Հա՛ , Սիմէոն կաթողիկոսը կ'ուզես գովե՞լ . . . Ըսել կ'ուզես թէ ես անոր պէս մեծ կաթողիկոս չե՞մ եղած . . . իշտե՛ այդ յօգուածը չպիտի երեւայ Արարատին մէջ » : Եւ իսկապէս ալ յօգուածը չ'երեւար : Այս իրողութիւնը նոյն ինքն պ' Քարամեանցէն իմացած եմ :

Ինք՝ Հայաստանեայց եկեղեցւոյ գերագոյն պետը՝ « ազատամիտ երեւալու » Բխտէն բռնուած , լուրջ ու նուիրական բաներու մասին կատակ ընելու տգեղութիւնը չհասկնալով , յաճախ ինքն իսկ քարոզած է Փէորգեան ձեւարանի աշակերտներուն ինչպէս երիտասարդ միաբաններուն՝ հակալրօնական սկզբունքներու կ'իմանայ որ Փէորգեան ձեւարանի այս ինչ աշակերտները մտադիր են կրօնական ասպարէզն ընդգրկել , կը կանչէ զանոնք . « Ին՞նթէք , կ'ուզէք կուսակրօն ըլլալ . կին չ'երող մարդը մարդ չէ . . . »

Միաբանութեան լաւագոյն ուժերը միշտ ջախջախել ձգտած է՝ հեգնոտ արհամարհանքի մը տակ . ոչ միայն երբեք չէ քաջալերած զանոնք , այլ եւ վհասեցուցած է . անոնք որ բանասէրի կամ ուսուցչի փայլուն կարողութիւններ ունին՝ փոխանակ պահելու վանքին մէջ կամ Փէորգեան ձեւարանը , հեռու տեղ պաշտօններու ղրկած է , որպէսզի իր շուրջը

ո եւ է ուրիշ մտաւորական փայլ ունեցող զէմք չ'երեւայ . իսկ անոնք որ աւելի վարչական կարողութիւն ունին՝ յաճախ էջմիածին պահած է եւ ուսուցչական կամ բանասիրական գործերու յատկացուցած . ո եւ է միաբան պաշտօնի մը վրայ երկար չէ պահած , որպէս զի ամուր համբաւ մը չ'ընէ . միշտ փոփոխութիւն , միշտ անհաստատ դիրք : Արհամարհանքը զոր ունեցած է միաբաններէն ոմինէն ուսեալներուն համար , յայտնած է անոնց՝ ամենէն բիրտ ձեւովը . զանոնք ծաղրած է « համալսարանական » , « աստուածաբան » ըլլալուն համար . . . Համալսարանականին պաշտամունքը չունիմ . առանց համալսարան տեսած ըլլալու՝ շնորհիւ իրենց բնածին տաղանդին եւ ուշիմ ինքնաշխատութեան՝ եղած են մեծ գրագէտներ ու արուեստագէտներ . աստուածաբանութիւնն ալ սիրած բաներէս ըլլալէ հետո է . հազար անգամ կը նախընտրեմ Առատարանին պարզ ու խորին բանաստեղծութիւնը՝ աստուածաբանական չոր ու մաթեմատիքական պատճառաբանութիւններէն . բայց վերջապէս ներելի չէ մարդու մը մեղադրել՝ իր համալսարանական կրթութիւն ստացած ըլլալը . կը գանգատինք մեր կղերականներուն մեծ մասին տգիտութենէն . անիմաստ չէ՞ որ երբ՝ շնորհիւ Փէորգ ու Մակար կաթողիկոսներուն ուսումնասէր գործունէութեան՝ 10-14 միաբաններ զացեր Փերմանիա եւ ամուր կրթութիւն մը ստացեր զարձեւր են , Հայոց հայրապետը ծաղրէ զանոնք . ու անիմաստ չէ՞ դարձեալ որ հայ եկեղեցւոյ պետը , այդքան բացարձակ քամահրանքի մը ենթարկէ աստուածաբանութիւնը , որ ինձ համար կարող է սիրելի չ'ըլլալ՝ թէեւ միշտ հետաքրքրական կողմեր ունեցող իբր մարդկային մտքին մէկ որոշ շրջանի աշխատութիւնը , բայց քրիստոնեայ վանականի մը համար անտարակուսելի կերպով անհրաժեշտ է : Եւ ինչպիսի ծաղր , ինչ ձեւով քամահրանք , Լսեցէք սա քանի մը իրողութիւնները : Մերոպ վարդապետը նստեր՝ ձեռագիրներու զէզի մը մէջ ծոկը՝ կ'աշխատի , Խրիմեան կը մօտենայ . « Ինչ կ'ընես » . — Կ'աշխատիմ : — Ինչ կ'աշխատիս , բան չես ըներ , պարապ բաներ են ատոնք : Հա՛ , համալսարանական ես , աստուածաբան

ևս, ևս քու Եւրոպայի աստուածարաններէդ շատ աւելի բան գիտեմ» Կոմիտաս վարդապետը Հայ եկեղեցական ու ժողովրդական երաժշտութիւնը կը գտէ, կը գտնէ բուն հայկական տարրը, եղանակներէն շատերը քառաձայնի կը վերածէ. ոչ մէկ քաջալերական, գնահատական խօսք, ոչ մէկ օգնութիւն այդ աշխատութիւնները հրատարակելու. Սուքիաս Պարզեանց եպիսկոպոսն է որ՝ գնահատելով երիտասարդ երաժշտագետին կարողութիւնը՝ կը խոստանայ անոր որոշ գումար մը՝ իր ուսումնասիրութիւններէն մէկուն՝ հայկական հին խաղերուն լուսարանութեան նուիրուած գործի մը (որ ի մօտոյ կ'աւարտի) հրատարակութեան համար իսկ Խրիմեան կը տրանջայ. « պարզ չէ . . . օփերա է, ևն» : Գարեգին վարդապետ Յովսէփեան, խանդոտ, հմուտ, գեղարուեստաւէր վանականը, Վարզանանց տօնի օր մը, ըստ՝ կանխաւ եղած որոշման՝ կը պատրաստէ քարոզ մը հանդէսի միջոցին արտասանելու համար. ճիշդ այն բոպէին ուր միաբանը բեմ կ'ելլէ ևւ առաջին բառերն ըսել կը պատրաստուի, Խրիմեան իր տեղէն կը գոչէ. « Վար իջիր, զուն չես կրնար Վարզանանց վրայ խօսիլ. ևս պիտի խօսիմ » . ու իրօք ալ կ'ելլէ բեմ ևւ ինքը կը խօսի, մինչ խեղճ Գարեգին վարդապետը յուզմունքէն զողալով կը փախչի իր խցիկը ու նուազած կ'իյնայ հոն : Միևնայն Գարեգին վարդապետը, որ մեծ խնամքով ու գիտակցութեամբ ուսումնասիրած է ընդհանրապէս քրիստոնէական հին ձևագիրներու մանրանկարչութեան արուեստը ևւ մասնաւորապէս էջմիածնայ մէկ քանի հրաշայի հին հայերէն ձևագիրներու մանրանկարչութիւնը, կը ցանկայ ասոնցմէ գեղեցկագոյններէն մէկը ամբողջութեամբ նոյնատիպ հրատարակել, այդ մասին բանակցութեան կը մաննէ գերմանական մեծ տան մը հետ, որ կը հաւանի տպագրութեան ծախքերն ստանձնել. բայց պէտք է կաթողիկոսէն արտօնութիւն, պէտք է որոշ գումար մը՝ պատրաստելու համար գործը : Խրիմեան կ'արհամարհէ ու կը մերժէ « Պարայ բաներ են » ըսելով : Խրիմեան իր արհամարհանքին ու ատելութեան ամենէն ստուար բաժինը թափած է Կարապետ վարդապետին

վրայ, բաղմանմուտ պատուական միաբանը, որ վանքին ամենէն ազնիւ ու համակրելի գէմքերէն մէկն է. մեր թրքահայ պատգամաւորներէն շատերը, որ իրեն նկատմամբ աննպաստ կանխալ կարծիքով եկած էին էջմիածին, հմայուած՝ իր անձին ազնուական վեհութենէն ևւ իր անկեղծ ու հմտալից գործիչի արժանիքներէն, զարձած ատենին կ'ըսէին՝ « Ապագայ կաթողիկոս մը կրնայ ըլլալ » : Այդ ազգասէր ու գիտնական վանականը սաստկապէս հայածուած է Խրիմեանէն : Խրիմեանի տասերկու տարուան հայրապետութեան շրջանին, էջմիածնայ Արարորդ եղած է աժդոյն հրատարակութիւն մը. իսկ վանքին տպարանէն լոյս տեսած են չափազանց սակաւաթիւ գրքեր : Կարապետ ու Երուանդ վարդապետները ստիպուած կ'ըլլան դիմել Գերմանիա՝ հրատարակելու համար քրիստոնէական եկեղեցւոյ պատմութեան համար մեծ նշանակութիւն ունեցող « Սրբոյն իրենիոսի ցոյցք առաքելական քարոզութեան » գործին (որուն բնագիրը կորած է) հայերէն հին թարգմանութիւնը՝ գերմաներէն թարգմանութեամբ ևւ ծանօթագրութիւններով . ևւ մեծանուն աստուածարան Հարնաքը կը շնորհէ անոնց օգնութիւնը զոր Խրիմեան կը զլանայ ահա հրատարակութիւն մը, զոր էջմիածնայ վանքը եթէ ինքն իսկ կատարած ըլլար, իր վարկն ու պատիւը բարձրացուցած պիտի ըլլար, ևւ որ Խրիմեանի չկամութեամբ, լայնօրիկեան տան մը ձեռքն ինկաւ : Իր « Հայ եկեղեցւոյ պատմութեան, յառաջաբանին մէջ՝ Կարապետ վարդապետ, տողերուն մէջէն կը զգացնէ որ այդ աշխատութիւնը շատ աւելի լիակատար, մանրամասն կերպով կատարուած պիտի ըլլար՝ եթէ « անակնկալ կերպով նոր պաշտօնի կանչուիլն ու Մայր-Աթոռից հեռանալը արգելք չլինէր ևւ ինքը չգնուէր այսպիսի աշխատութեան բոլորովին աննպաստ պայմաններում » : « Տիմոթէոսի Աղեքսանդրեայ եպիսկոպոսի հակաձառութիւն առ Սահմանաւան ի Ժողովոյն Քաղկեդոնի » գործին հին թարգմանութեան հրատարակումը՝ Կարապետ վարդապետի ևւ Երուանդ վարդապետի ձեռքով, ևւ Երուանդ վարդապետի « Հայոց եկեղեցւոյ յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների

հետ » աշխատութեան հրատարակումը՝ կատարուած են էջմիածին, բայց Պարզեանց Սուքիաս եպիսկոպոսի ծախքով :

Ամենէն կարեւոր եւ ուրախառիթ հրեւոյթներէն մէկը որ յայտնուեցաւ էջմիածնայ վանքին մէջ Խրիմեանի հայրապետութեան վերջին տարիներուն, հայ պատմագիրներու բազմաթիւ ձեռագրաց համեմատութեամբ խնամոտ հրատարակութեան գործին սկսուին էրարդ, ո՛վ եղաւ այդ գործին նախաձեռնակ ու խորխուսիչ. Խրիմեան, ո՛չ. այլ Պարզեանց արքեպիսկոպոսը, որ իր քսակէն սուղար գումար մը յատկացուց այդ նպատակին :

Գրեւեմ Խրիմեանն այս մասին չքմեղացնելու համար մէջ բերուած առարկութիւնը. « Խրիմեանի հայրապետութիւնը զուգարիպեցաւ հայ ժողովրդեան վրայ խուժող ահաւոր աղէտքին հետ. երբ ազգը այնքան վէրքեր ունէր դարձանելու, այնքան թշուառութիւններ ամոքելու, կարելի՞ էր պահանջել Խրիմեանէն որ ժամանակ ու դրամ վատնէր՝ մատուցական գործերու համար . . . » : Այս առարկութիւնը տղայական է : Ազգը դժբաղդ ըլլայ կամ երջանիկ, մտաւորական գործը ամենէն էականն է : Ան ազգի մը անցեալն է, ներկան է, ապագան է : ամէն բանն է : Շատ լաւ կարելի էր եւ անհրաժեշտ էր, ազգին թշուառացութեան դարման տանելու մասին խորհելով հանգերձ, երեսի վրայ չձգել հայ մտաւորական գործին յառաջացումը. այդպէս որին մեր ժողովրդին բոլոր մտաւոր գործիչները՝ այդ ցաւի օրերուն : Այն մեծ գումարներէն որ Խրիմեանի ձեռքն անցան՝ այդ տասերկու տարուան միջոցին, եթէ հարիւրին տասն իսկ մտաւոր գործին յատկացուած ըլլար. Ու հոտարդէն կը հասնինք Խրիմեանի հայրապետական վարչութեան դրամական կողմին : Հոտ ալ ուրիշ բան չենք գտներ բայց եթէ անկարգութիւն, խառնաշփոթութիւն, քմահաճոյք, ծրագրի պակաս, սեւեական ու լուրջ գործ տեսնելու անկարողութիւն : Երբ իր վրթխարի ժողովրդականութեամբը փառազարդուած՝ Խրիմեան էջմիածնայ գահուն վրայ բարձրացան, ամէն կողմէ՝ ու մանաւանդ կովկասէն՝ խոչոր նուիրատուութիւններ սկսան

տեղալ էջմիածին. քանի մը տարուան մէջ, միլիոններ թափած են Խրիմեանի ձեռքը : Ինչի՞ գործածուած են այդ գումարները. դիմող հայ խեղճերուն ողորմութիւն բաշխելու. եւ միայն ատոր. եւ այդ՝ առանց կարգի կանոնի, անհաշիւ ու աննպատակ կորչելով յաճախ : Չեմ յիշեր որ մէկ որբանոց մը բացուած ըլլայ Հայաստանի մէջ՝ Խրիմեանի նախաձեռնութեամբ : Ոչ մէկ հաշիւ տալ խորհած է երբեք Խրիմեան. ինքզինքը հաշուեւտութիւնէ բարձր համարած է. իր վախճանած ատեն՝ սանթիմ մը չկար իր օրով եկած դրամներէն գանձին մնացած. իր հետը տարած է իր հաշիւը : Սակայն այդ անկարգութեան հետեւանքը այն եղած է որ վերջերս կովկասի մէջ կասկածուութեամբ սկսած են վերաբերուել դէպ ի էջմիածին, եւ հարուստները որ առաջ սիրալոթար կ'ուղարկէին Խրիմեանին ինչ որ ցանկար, սկսած են խուսափողական պատասխաններով հեռու մնալ նուիրատուութիւնէ. ու գրտնուած են իսկ հարուստներ, ինչպէս ծանօթ բարեգործ Պ. Դաւիթ Աւան-Իւզաբաշևան որ՝ կամենալով օգնել էջմիածնայ մէջ գեղակոտոյց մատենադարան-թանգարանի մը կանգնումին, փոխանակ՝ ըստ օրինի՝ նոյնինքն կաթողիկոսին յանձնելու ատոր համար հարկ եղած գումարը, զայն վստահած է միարաններէն մէկուն, իր անձնական բարեկամ Մեսրոպ վարդապետին : Ասկէց աւելի կրնա՞ր ինչալ հայրապետական աթոռին վարկն ու նշանակութիւնը :

Վերեւ ըսի թէ Խրիմեան իր ձեռքը անցած դրամները միմիայն ողորմութիւն բաշխելու գործածած է : Ճիշդ չէ : Գործածած է նաեւ կարգ մը շէնքեր շինելու եւ կարգ մը էջմիածնայէն Կաթողիկոսի տունը : Իր շինել առւած շէնքերը այնքան անճաշակ, յիմար եւ աննրպատակ բաներ են ընդհանրապէս, որ՝ իր մահուընէն անմիջապէս յետոյ՝ միարանութեան առաջին գործերէն մին եղած է այդ շէնքերէն մէկը, եկեղեցւոյ մօտիկ՝ բաղնիքի նման ապուշ ու ազեղ շինութիւն մը, քանդել (եւ ամենայն իրաւամբ). Օշական, Ս. Մեսրոպայ եկեղեցւոյն մօտ, Վահան Ամատունիի հինաւուրց մահարձանին սեղձոր քանդել տուած է, իր կանգնել տուած յիշատակարանը՝ իսկական յիշատակարան մըն է ծիծաղելիութեամբ :

թեան ու այլանդակութեան : Իսկ աւերածութիւնը զոր կատարած է էջմիածնայ եկեղեցւոյն մէջ, սանմոկեցնող ու կատղեցնող բան մըն է. նաղաչ Յովնաթանի ձեռքով ամբողջ ներքին որմերը պճնաղարդող հոյակապ սրմնանկարները մեծ մասամբ կտարել քակել փճացնել տուած է, պատերէն կախուած իւղաներկ պատկերներէն շատերը հանած, հետաւոր գիւղեր զրկած կամ պահարանին անկիւնները նետած՝ փոշիներու մէջ, հւն, եւն. (այս մասին ուրիշ անգամ պիտի գրեմ աւելի մանրամասն) :

Կաթողիկոսական ընտրութեանց միջոցին, օր մը, Խրիմեանի մահուան տարեգարձի օրը, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ հանգուցեալի գերեզմանին վրայ. հոգեհանգստէն յետոյ՝ ոչ մէկ ճառ : Ճաշի միջոցին՝ թրքահայ եկեղեցական պատգամաւորներէն մին գանգատ յայտնեց այդ լուսթեան համար. ուրիշներ ի պատասխան՝ քննադատական ակնարկներ սկսան նետել Խրիմեանի գործունէութեանը. այս բոլորը անճան էին. ներքի չէ մահուան տարեգարձի օր մը հոգեհանգստէն անմիջապէս յետոյ, գերեզմանին մօտիկ՝ քննադատութիւնն ընել մարդու մը, որ ունեցած է մեծ թերութիւններ, բայց եւ եղած է՝ հակառակ ատոնց՝ երբ իր ամբողջ կեանքը նկատի ունենանք՝ ժողովրդական գործիչի դեր կատարած մարդ մը, եւ ունեցած է շատ մը տաղանդներ, ու անոնց է՛ն դժուարը՝ մեծ մարդ ըլլալու տաղանդը : Ատոր համար միջամտեցի, եւ ըսի որ այդ յիշատակի օրը՝ պէտք էր հանգուցեալին առաւելութեանցը վրայ միայն խորհիլ. եւ առ նուազն լռել : Բայց այսօր տարեգարձի օր չէ. այսօր ես կը խորհիմ, ոչ թէ Խրիմեանի անձին, այլ իրմէ աւելի մեծ բանի մը, հայ կաթողիկոսական աթոռին. — եւ ուզեցի ըսել ինչ որ ճշմարտութիւնը կը նկատեմ. եւ ինչ որ հարկաւոր կը համարիմ որ ըսուի այդ աթոռին շահուն համար :

Ինչ որ ըսի, Խրիմեանի հայրապետական գործունէութեան ամբողջական քննադատութիւնը չէ անշուշտ. քանի մը էջի մէջ անհնար է լիալիբ պատկերացումն ընել այդքան բարդ ու առեղծուածային դէմքի մը. ուզեցի միայն՝ քանի մը մեծ գծերով՝ ապացուցանել թէ էջմիածնայ արդի

անկեալ կացութիւնը հանգուցեալ հայրապետին վաստակ վարչութեան հետեւանքն է, եւ ատով իսկ ցոյց տալ ինչ որ կը սպասենք մեր նորընտիր հայրապետէն :

Իզմիրլեանի ընելիքը շատ պարզ է : Ունենալ Խրիմեանի ընթացքին ճիշդ ներհակը : Կովկաս, շատերը տեսանք կասկածոս դէպ ի Իզմիրլեանը. ատոնք կ'ըսէին. « Խրիմեան մեծ ազգասէրի համբաւ ունէր, ու կաթողիկոսական աթոռին փորձանք եղաւ. հիմա կը վախնանք « ժողովրդական » մարդոցմէ. մի գուցէ Իզմիրլեան երկրորդ Խրիմեան մը ըլլայ մեր գլխուն » : Ուրիշներ կը վախնային Իզմիրլեանէն՝ նկատելով զայն ծայրայեղ ազատական, յեղափոխական, կը պատասխանէի. « Դիտեցէք որ Խրիմեանը կաթողիկոս ընողը մենք թրքահայերս չինք, այլ դուք ուսանայերք. մենք կը յարգէինք զինքը իր որոշ ձիրքերուն համար, բայց հայրապետական պաշտօնին անյարմար կը նկատէինք զինքը. դուք պնդեցիք, եւ մեր խորհուրդին չանսալով՝ կաթողիկոսացոցիք զինքը : Այժմ մենք կը պնդենք որ Իզմիրլեանը կաթողիկոս ընտրուի, որովհետեւ՝ այնքան ժողովրդական ըլլալով հանգերձ օրքան էր Խրիմեան, իր բնաւորութիւնը բոլորովին տարբեր է Խրիմեանի բնաւորութեանէն. Իզմիրլեան կարգ սիրող, օրէնք յարգող մարդ է. լուրջ հարցերու վրայ կատակ ընելու սովորութիւն չունի, ջերմեանդ ու անկեղծ հաւատքի մարդ է, — հաւատք առ Աստուած, հաւատք առ հայ եկեղեցին, հաւատք առ հայ ազգը, — դրամական հարցերու մէջ իր կանոնաւորութիւնը հանրածանօթ է. միշտ հաշիւ տուած է. գալով իր յեղափոխականութեան, հեքեաթ մըն է ատ. Իզմիրլեան երբէք չէ եղած յեղափոխական, այլ կորովի ազգասէր պահպանողական մը. եւ կը սիրէ ազատութիւնը՝ որովհետեւ ազատութեան շնորհիւ միայն կարելի է « պահպանել » հայ ժողովրդի գոյութիւնը եւ հայ եկեղեցւոյ դարաւոր աւանդութիւնները » :

Իզմիրլեանի առաջին գործն ըլլալու է մէկ մը նետել վրայէն սա խրիմեանական — եւ ըստ ոմանց խրիմեանաստեղծ — « շայրիկ » մականունը, զոր չեմ գիտեր ինչո՞ւ. իր անունին փակցուցին : Իզմիրլեան անունը, առանց մա-

կանուհի, բաւական է՝ սէր ու յարգանք ներ-
չնչելու համար: Ու մենք այլ եւս չենք ուզեր
« հայրիկ », այլ « հայրապետ » մը, այդ բառին
ներամփոփած բոլոր լրջութեամբը, վեհու-
թեամբը եւ մաքրութեամբը:

Հայրապետը պիտի մնայ հեռու, եւ բարձր,
ամէն կուսակցութենէ, ամէն դասակարգէ:
Ունենալով հանդերձ իր որոշ աշխարհայեացքը,
ան պիտի չըլլայ ո եւ է կուսակցութեան
մարդը, այլ Ազգին մարդը. ամէն դասակարգի,
ամէն կուսակցութեան հանդէպ ան պիտի ու-
նենայ վարմունք մը անկողմնակալ ու սիրալիբ,
եւ անոնց միջեւ գերագոյն հաշտարարը, մեր-
ձեցնողը պիտի ըլլայ, ազգային ընդհանուր
կեանքին ներդաշնակիչը, միութեան գիծը
մեր ժողովրդեան բոլոր հատուածներուն միջեւ,
Հայրութեան հողոյն անձնաւորումը, որ սրելի
եւ յարգելի է ո եւ է կարծիքի կամ կուսակ-
ցութեան պատկանող Հայու համար:

Ան մասնաւոր հոգածութիւն պիտի ունե-
նայ Գէորգեան ձեւարանին վրայ, որ կովկասի
Հայոց մտաւոր զարգացման, հայազրոյժ դաս-
տիարակման ամենէն կարեւոր վառարանն է՝
Ներսիսեան դպրանոցին հետ: Գէորգեան ձե-
ւարանը արդէն իսկ ունի այժմ իբր անօրէն՝
պատուական Հայ մը, ուսնալ, ճաշակաւոր,
ազգասէր, Պ. Մ. Բերբերյանը, եւ իր ուսու-
ցիչներուն մէջ՝ Մանուկ Աբեղեանի, Կոմիտաս
վարդապետի, Յովհ. Յովհաննիսեանի, Ս. Կա-
նայեանցի, Երուանդ վարդապետի պէս առաջ-
նակարգ ուժեր: Պէտք է ո եւ է ջանք չխնայել
որպէս զի այդ հաստատութիւնը հետզհետէ
աւելի կատարեալ եւ հզօր դառնայ, Հայոց
ազգին տայ հայ սրտով եւ ամուր կրթութեամբ
Հայեր, ու լուսամբիտ եկեղեցականներ:

Ան պիտի կարգը վերահաստատէ էջմիած-
նայ Միաբանութեան մէջ: Այժմու դրութիւնը
ողբալի է: Միաբանները բաժնուած են երկու
կուսակցութեան, որոնք իսկական կուսակցու-
թիւններ ալ չեն, որովհետեւ բաժնողը անձնա-
կան հակառակութիւնն է այդ երկու խումբերու
պարագլուխներուն միջեւ, եւ ոչ թէ իմաս-
տասիրական կամ քաղաքական ըմբռնմանց խոր
տարբերութիւններ: միաբանական կեանքը եղ-
ծուած, խախտուած է՝ այդ երկպառակութեան
պատճառով. մէկ խումբը գրեթէ բարեւէջի

տար միւսին. այլ եւս միաբանները չեն իսկ
միասին եղբայրարար ճաշեր հասարակաց սե-
ղանատան մէջ, ինչպէս որ պէտք է ըլլայ
վանքի մը մէջ, այլ իւրաքանչիւր միաբան
իր սենեակին մէջ առանձին կը ճաշէ: Տեղա-
պահ Սուրէնեանց արքեպիսկոպոսը՝ գործիքն
եղած է այդ խումբերէն մէկուն. իր վրայ
ազդող խումբին հաճելի ըլլալու համար է որ
այրել տուաւ Արշապի այն թիւը որ Երուանդ
վարդապետի մէկ յանդուգն բայց բացարձա-
կապէս ազնիւ ազատամտութեամբ մէկ յօ-
գուածը կը պարունակէր, եւ խմբագրութենէ
հրաժարեցուց Գարեգին Վ. Յովսէփեանը, որ
սակայն ամենայրմար անձն է այդ պաշտօ-
նին, ու յանձնեց Մատթէոս վարդապետին,
որ չի կրնար համեմատուիլ Գարեգին վար-
դապետ Յովսէփեանի հետ: Հայրապետը չպիտի
ճանչնայ ո եւ է կուսակցութիւն վանքին մէջ,
այլ միայն միաբաններ. ամէնուն վրայ հաւա-
սարապէս պիտի տարածէ իր հայրական հոգա-
ծութիւնը. պիտի զիտնայ ամէնքին յարգել
տալ օրէնքը, կարգապահութիւնը. պիտի քա-
րողէ ամէնուն՝ հեռու մնալ անձնամոլութենէ,
համեմալ զործել վանքին ընդհանուր շահե-
րուն ի նպաստ. պիտի զիտնայ պատժել անոնք
որ պիտի համարձակին խանդարել վանքին
կարգը. պիտի զիտնայ խրախուսել բոլոր ու-
ժերը, ուր ալ երևան:

Կան ուժեր, ու շատ էջմիածնայ միա-
բանութեան մէջ: Բաց ի Կոմիտաս վարդապե-
տէն, որ գեղեցիկագիտական տարրը կը ներ-
կայացնէ հոն հոյակապօրէն, կան՝ մասնաւոր՝
գիտական լուրջ կրթութիւն ստացած կար-
ծուածէն աւելի բազմաթիւ միաբաններ, որ
կարող են ձեռնհասօրէն նախնեաց անտիպ
գործերը հրատարակել, Հայոց հին պատմու-
թեան, գրականութեան, արուեստի մասին ինք-
նատիպ ու հիսթալից ուսումնասիրութիւններ
երևան բերել, զբաղիլ բարոյական-կրօնական-
ընկերական հարցերով, եւն: էջմիածնայ վանքն
ու եկեղեցին, պատկառելի հնութեամբ ու մեծ
յիշատակներով պատկուած հաստատութիւններ,
կը դանուին աշխարհիս ամենէն մեծվայելուչ
ու վեհ բնապատկերին մէջ, որ քարին իսկ
ներշնչուած ու կրակ պիտի տար. այդ վանքին
չուրջ՝ Հայոց հին չպատմութեան ամենէն գե-

զեցիկ օրերուն ստուերները կը ծածանին դեռ՝ մշտակենդան. ու վանքին մէջ, կայ ամենէն ճոխ հաւաքածուն հայ հին ձեռագրերու, սքանչելի արուեստով պատկերազարդուած ձեռագիրներ, պատմական, բարոյախօսական, գրական եւ այլ նիւթերու վրայ անթիւ անտիպ կտորներ պարուհակող: Ատեն է որ ա՛լ էջմիածնայ Միաբանութիւնը իրեն վիճակուած դերը ամբողջութեամբ եւ հզօրապէս կատարէ: Ուժեր կան հոն. պետ մը պէտք է, վարիչ մը, խրախուսիչ մը. — հայրապետ մը: Կը սպասենք որ Իզմիրլեան այդ Հայրապետն ըլլայ:

Գալով էջմիածնայ դրամական կացութեան վերականգման, այդ հարցը ինքնին կը լուծուի երբ ազգը՝ տեսնելով եկեղեցւոյ գլուխը պետ մը խոհական ու կորովի, իր նախկին ջերմեռանդ անձնութիւնը եւ պատկառայից վստահութիւնը վերստանայ զէպ ի Մայր-Աթոռը: Ո՞րն է այն հայ հարուստը որ իր լիալիբ նպաստը չպիտի փութացնէ էջմիածին, ո՞րն է հայ չքաւորներուն ամենէն չքաւորը, որ իր լուծման պիտի յօծարակամ չձգէ էջմիածնայ գանձանակին մէջ: Էականն այն է որ ազգը գիտնայ այսուհետեւ թէ ի՞նչ կըլլան, ի՞նչ ձեւով կը գործածուին իր տուած դրամները: Ու յետոյ, էջմիածինը ունի մեծ կալուածներ, որոնք չեն շահագործուած ինչպէս պէտք է: Նորընտիր հայրապետը պիտի կազմէ ձեռնհաս մասնագետներու յանձնաժողով մը՝ գիտակցօրէն ու լրջօրէն շահագործելու համար այդ կալուածները:

Արտաքին դժուարութիւնները որոնց հանդէպ պիտի գտնէ ինքզինքը մեր հայրապետը, թերեւս աւելի մեծ են ու կ'ընտոտ քան ներքինները:

Իզմիրլեան կը հասնի հայրապետութեան՝ այնպիսի բոպէի մը, երբ հակահայ զգացումներ դժբաղդաբար դարձեալ սաստկացած են ոռու կառավարական շրջանակներուն մէջ. ոռու դիւանագիտութիւնը եւ Տու մայրն մեծամասնութիւնը, պաշտօնատարները գրեթէ ամբողջապէս, հակակիր են մեզի. խօսք կայ թէ Փութերպուրկ արդէն պատրաստուած է նոր Պալատենիա մը, մեզի համար շատ աւելի աննպաստ, եւ թէ կառավարութիւնը պիտի առաջարկէ հայրապետին գայն ընդունիլ: Հայոց դպրօցնե-

րուն հարցն ալ դեռ չէ լուծուած վերջնապէս: Անհրաժեշտ է մեծ խոհմտութիւն, ճարպիկութիւն, միացած՝ հաստատամիտ կորովի: Չանալունք որ հին Պալատենիան մնայ անփոփոխ (հիմա ու է փոփոխութիւն չարափոխութիւն մը միայն կարող է ըլլալ): Այդ կարգի հարցերու մէջ իր բռնելիք ուղղութեան համար մեր հայրապետը, տեղական հանգամանքներուն իրագեկ՝ ազգասէր ու բանիմաց Հայեր պիտի ունենայ խորհրդատու՝ ամէն կուսակցութենէ: Երբ էջմիածնայ մէջ իր օժումը ստանալէ յետոյ, Իզմիրլեան իբր Հայոց Հայրապետ երթայ ներկայանալ Չարին, մեծ դեր մը ունի կատարելու, այն է՝ փորձել, իր անկեղծ ու տաք խօսքովը, փարատել անիմաստ թիւրիմացութիւնները որ Ռուսերուն մէջ հայատեցութիւն ստեղծելու կը նպաստեն (մինչև Ռոստով տարածուող հայկական թագաւորութեան մը կանգնման ծրագրի հերեալը, եւն.): Եւրոպական հռչակ ունեցող, անձնական խորին ու մաքուր հրապոյրով զօրեղ՝ Իզմիրլեան Չարին ու ոռու կառավարական գերագոյն շրջանակներուն մօտ կարող է ուշիմօրէն և ջերմօրէն պաշտպանել հայ ժողովրդին դատը, անոնց մէջ գոյացնել համոզումը՝ ինչպէս ան գոյացած է Կովկասի հեռատես ու խոհական փոխաբքային մօտ՝ թէ հայ տարրը օգտակար եղած է միշտ Ռուսիային եւ միշտ կարող է օգտակար ըլլալ, եթէ թոյլ տրուի իրեն իր մտաւոր ու տնտեսական խաղաղ զարգացման մէջ յառաջանալ:

Ահագին, գեղեցիկ, էական, բազմաբեղուն է գործը, զոր մեր նոր հայրապետը պիտի ունենայ կատարելու: Ես յոյս ունիմ որ պիտի կատարէ զայն լիովին: Ու այն ատեն, « երկաթէ պատրիարքը » պիտի դառնայ « ոսկի կաթոզիկոս »ը:

Ա. ԶՕՊԱՆԵԱՆ



Ա Ռ Ի Տ Ա Լ Ի Ա

Ո՛վ հայրենիք իմ, կը սեսնել պարիսպներն,
 Ու կամարներն եւ արձաններն ու սիւներն,
 Ի աւարակներն ամառի մե՛ր պայտերուն .
 Բայց ո՛ւր է փառքն, ո՛ւր է դափնին, ո՛ւր երկաթն
 Որով մեր հին հայրենն էին բեռնաւոր :
 Արդ զէններդ կողոպտուս՝
 Կը ցուցրնես մերկ կուրծք, նակաս հողանի :
 Ո՛հ աւա՛ղ, ո՛րքան վերեւ, ի՛նչ երաշխեպ,
 Ի՛նչ արիւն, ո՛հ . ի՛նչ վիճակի մէջ ըզնեզ
 Կը սեսնեմ, ո՛վ չըմնաղագեղ սիկին դու :
 Կը հարցրնեմ ես երկրնի՞ն ու երկինն .
 Ըսէ՛, ըսէ՛, ո՛վ զինքն հասցուց այդ դիրի՞ն .
 Եւ չարագոյնն ա՛յն որ իր գոյց բազուկներն
 Են կապկրպուած զողբաներով ծանրաբեռն .
 Այնպէս որ հէ՛ր սերարձակ, Բողազուրկ,
 Անսրիսիբար, բողի՛ք գէտն կը նքսի
 Ծուկներուն մէջ ծածկելով դէմքն ու կուլայ :
 Լա՛ց, լա՛ց, ո՛վ ի՛մ Բաւեառ, լա՛ց, սե՛ղր կայ,
 Դուն որ ծրնած էիր զրել անցնելու
 Ազգերն՝ յաջող թէ անյաջող բախտիդ մէջ :
 Եթէ աչերդ ըլլային գոյց աղբիւրներ
 Յաւերձանոս պիտի չգօրէր արտառն
 Հաւատարիլ նախասիկնիդ ու վնասուդ :
 Տիկի՛նդ երբեմն, արդ աղախի՛նքդ չըլաւ :
 Ո՛վ՝ էու վրադ խօսողներէն, զբողներէն՝
 Գու անցեալ փառքդ ու պարծաններդ յիշելով՝
 Չքաւր . եղաւ երբեմնք մեծ . արդ նոյն չէ :
 Ինչո՛ւ, ինչո՛ւ, ո՛ւր է Ըն հին արուսիւնդ,
 Ո՛ւր են զէններն, ո՛ւր կորովն, ո՛ւր պնդութիւնն,
 Ո՛վ մէջէդ սուրբ խրկեց .
 Ո՛վ է մասնիչդ, ի՛նչ նեղ եւ կամ ո՛ր հնարք,
 Կամ ո՛ր այն բո՛ւրն զօրութիւն՝ որ կըրցաւ
 Կապել լողիկդ ու ծանակալրդ ոսկի :
 Ե՛րբ կամ ի՛նչպէս զորեցար
 Այնպիսի վեհ բարձրութենէ ա՛յտան ցած :
 Ու ո՛չ ո՛վ կա՛յ խելիներէդ՝ որ կրուի
 Գեզի համար . հանդիսանայ թեզ պաշտպան :
 Ձէնե՛րք, հո՛ս զէններ, ես մի միայն
 Պիտի կրուիմ, ու պիտի՛ իյնամ միայն ես .
 Ընե՛նք երկինն, որ արիւնս
 Ըլլայ կրակի իսպախան կուրծքերուն :
 Որդիդ ո՛ւր են . ձայն կը լրբեմ զէններու,
 Կանչիւններու, բըմբուկներու, կառնբու .
 Օտար երկրի մէջ կը կրուսին զաւկներդ :
 Լքու՛, լքու՛ . Բաւիա : Կը սեսնեմ
 Կամ կը բըւիմ սեսնել վէտ վէտ ծրփումներ
 Հեփներու, կիներու, ծո՛ւխ ու փոփ
 Եւ սուրբու շողիւններ,
 Ձերդ փայլակներ ամային մէջ :

Ու չե՛ս սփոփուիր, եւ չե՛ս ուզեր դարձրնել
 Շրլմոր աչուիդ դէպ ի կրուսն անորո՛ւ :
 Այն դաւաճանն մէջ ինչո՛ւ
 Մաւր կը մրդէ ծաղիկ հասակն իսպախան ;
 Ո՛վ ասուածներ, ո՛վ ասուածներ . կը կուսին
 Ուրի՛ց երկրի համար սուրբն իսպախան :
 Եղո՛ւկ անոր, որ կրուսի մէջ կը մեռնի՝
 Ո՛չ հայրենի ափերուն, ո՛չ ծրնաւոր
 Հարսին եւ ոչ սիրուն որդուր համար,
 Այլ օտարին ստիպներէն՝ օտարին
 Համար, եւ չի՛ կըրնար բսել մեռնելուն .
 • Կեսնեմ որ զուր ինձի՛ արդ թեզ կը դարձնեմ :
 Ո՛վ բարեբախտ, սիրուն, օրհնեալ հին դարեր,
 Ուր հայրենեաց համար մարդիկ զուգազուգ
 Կը վազէին մահուան . եւ ո՛վ միտ զովեալ
 Ու փառաւոր թեսաղական դուք կիրներ,
 Ուր մէկ Բանի արի, մեծանն զկիներ
 Պարսկաստանէն . նակասազրէն աւլի
 Բաշակորով հանդիսացան : Կը կարծեմ
 Որ ձեր տուկներն եւ ալիքներն ու ժայռերն
 Ու ձեր լեռները կը պատմեն անցորդին՝
 Շրփոք ձայնով մը՝ թէ ի՛նչպէս ծածկեցին
 Բոլոր այն ալմն՝ անպարսկի այն զուգներն
 Յունաստանի նուիրուած իրենց անձերով :
 Այն ասեմ խո՛ւժ դուժ, վաթարէր, ցած Գաւրճան
 Հելլեպոստէն կը փախչէր . ծա՛ղր ու ծանակ
 Եղած յեսին դարերուն ;
 Եւ Անեղա բըլրան վրայ՝ ուր սուրբ զունդն
 Անմահացուց ինձ ինձ հա՛ն մեռնելով՝
 Սիւննիդէս կ'ելլէր վեր .
 Ու կը նայէր դէպ ի եթեր, ծովն ու հող,
 Ի՛նչ արտառաւոր աչերով,
 Քասուն կուրծով եւ ոտներով դանդալուն,
 Գրծարք ձեռնը կ'առներ .
 « Ձեզի հազար երանի
 Որ կուրծներնիդ զուր ստիւ զգերուն՝
 Անո՛ր սիրոյն, որ ձեզի լոյս պարզեց :
 Հելլադա ձեզ կը պաշտէ,
 Բոլոր աշխարհ կը հիանայ ձեր վրայ :
 Ի՛նչ վեհ սէր ձեր մասաղ միտերը մրդեց
 Դէպ ի զէններն ու վրասնդ .
 Ի՛նչ սէր մրդեց ձեզ դէպ ի բախտն անհամբոյր :
 Ի՛նչպէս ձեզ, ո՛վ որդեակներ,
 Այնքան զուարթ երեւցաւ ժամը յեսին,
 Որ ծիծաղկոս վազէցի՛ք
 Դէպ ի այն անցր մահահոս ու դրձե՛ .
 Կարծես պարի երթար եւ ոչ թէ մահուան՝
 Ձեզմէ ամէն մէկը, կամ մեծ կոչունքի .
 Բայց մութ դրձոխն ու մեռած
 Ալիք ձեզ կը սպասէր :
 Ոչ ձեր հարսներն էին ձեր հով, ոչ որդիք
 Երբ դուք դրձեմ ամիսն վրայ
 Մեռաք առանց համբոյրներու եւ լացի :
 • Բայց քմբոսնել զուրի՛ Պարսից Գանգաններ՝

Չարհուրելի եւ սազնապներ անաւոր :
 Չերդ ցուրեռու երամակին մէջ առիւծ՝
 Մեր կը ցասկէ մէկուն շալակն , ու այնպէս
 Ժանիկներով քամակն անոր կը փորէ ,
 Այս կողմ մեր կ'ասամացէ մեր այն զիտն ,
 Այսպէս պարտիկ գունդերու մէջ կը մոլեր
 Յասոյքն հելլէն կուրծկերու , բոցն աւխուծից :
 Զի , ձիաւոր հոս յորայս ,
 Հոն քաւազլոր վրաններ , կառեր՝ խոչընդոս
 Պարտեալներու փախուստին ,
 Ուր առաջնոց հետ Քսերսէսն
 Ինք կը սուրհար գիտախորի եւ սրժոյն .
 Եւ հոս հելլէն զիւցազներ
 Ներկուած քրմուած այն բարբարոս արիւնով ,
 Պասնառ Պարսից սազնապներուն անբապառ ,
 Քիչ քիչ նրկուն իրենց հասոյք վերհերկն՝
 Մին միւսին վրայ կ'իյնայ : Կեցցէ՛ք , ո՛հ , կեցցէ՛ք ,
 Դուք երանեակ հողիներ ,
 Յորչափ տեսն աւխարհի մէջ խօսն ու զիր :
 « Ասողե՛րք նախ զանապիժին պիտի ծով՝
 Երլուած իրենց կայէն ու խոր անդունդին
 Ալիերուն մէջ շառաչելով շիջանին ,
 Եւ յետոյ ձեր յիշատակն
 Ու սէրն անցնի կամ նուազի :
 Է սուրբ սեղան մը ձեր դամբանն , ուր պիտի
 Դան ու ցուցնեն մայրերն իրենց զուակաց
 Չրմնադազեղ հետքերը ձեր արիւնին :
 Ահա զետին խոնարհած եմ , ո՛վ օրհնեալք ,
 Կը համբուրեմ ես այս քարէն , այս բունձերն ,
 Որք պիտի՝ ըլլան յաւերժապէս զովելի
 Եւ անուանի մէկ բեւեռէն մինչեւ միւսն :
 « Իցի՛ւ ես ալ ձեզի հետ հոս քաղաւթի ,
 Եւ արիւնովս քրքուէր սիրուն այս երկիրն .
 Բայց եթէ է՛ նախասաղորդ սարբեր ,
 Ու չի հանիր որ մահամուտ իմ բիթերս
 Յաւաստանի համար փակեմ մարտի մէջ
 Ինկիւմ գլորած դիտապաստ ,
 Դոնէ համբաւն ամօքեամ ձեր երգչին թո՛ղ ,
 Եթէ ուզէն աստուածներն ,
 Յիշատակին մէջ յետոց՝
 Տեւէ այնչափ՝ որչափ որ ձերդ տեւ :

ԼԵՈՐԱՐՏԻ

Թարգմ. Հ. ԱՐՄԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ



ՔԵԶԻ ԲԱՆԵՐ ՊԻՏԻ ԸՍԵՄ

Քեզի բաներ պիտի բտեմ , ո՛վ քրուառ ,
 Խոնջէնկիդ մէջ կրտսնաքոր ,
 Եւ երջանիկ պիտի ըլլաւ :
 Պիտի բտեմ քեզի խօսներ անմանօր՝
 Բերուած հիւղէն , սանարներէն , ամպերէն ,
 Եւ ցաւքս վա՛րդ պիտի՝ ըլլայ :
 Նաւաստիի զրարք երգով մ՛այն ասեմ
 Պիտի պարզես առազասներն ախարի
 Փրփրաղէզ ծովակներու վրայէն
 Դէպ ի ափերն անկարելի երազին :
 Դիտեմ , զիճուորն ես զըմբախս . . .
 Տառասովիդ մէջ կարմիր
 Չամբիկիդ հետ կը վարզես
 Տրխուր զոմին պերն արիւնիդ եւ սերիդ :
 Ուխտաւորն ես ձեռնունայն
 Մարմարին մօտ ձեր սուրբին :
 Դիտեմ՝ Մարդն ես բափառկոս
 Տիեզերի աւազին վրայ՝ անօրաւ .
 Դեզի բաներ պիտի բտեմ , ո՛վ քրուառ ,
 Թող ան աղօթքիդ ըլլայ ,
 Եւ զայն կըրկեն՝ մարգարէի արցունքով
 Դու կրճագգետս Աստուածիդ՝
 « Մինչեւ ե՛րբ , Տէ՛ր , մինչեւ ե՛րբ
 Անձրեւներուդ , շանթերուդ սակ զըլխիլոր
 Պիտի քալեն քրուառն ու ձերն անարեւ : »
 Վա՛րն երջանիկն . ո՛վ քրուառ ,
 Ծիծաղելով ոսկորներդ յար կը բախէ
 Եւ կը խրմէ կրտսնիդ շիքք աղի :
 Մի՛ նայիր վերն ալ ասողին ,
 Ըսպին է ան անհունութեան հին ցաւին ,
 Եւ ամպին ծոցն արժապեղջիւր լուսնին
 Դարերու վերէն է պայծառ :
 Եկո՛ւր , քայլերդ քեքերնքաց պիտի՝ ըլլան
 Վէտ քեւին պէս արժիւին :
 Թրմբիներուն սակ , ե՛կ , հանգչիցն խաղաղիկ
 Ուր պիտի՝ քափի պասմունակիդ մէջ բարի
 Խարտեաւ ծաղիկը անոց :
 Եւ պիտի զայն հոտոտեմ
 Մեր հրնդիկի հողիով՝
 Անապասի քսաւախին հետ հոտեւան
 Առաքեալի մաղախիդ :
 Մեր հրակէզ շուրթերն յաւէս պիտի՝ ըմպեն
 Ծորան ծաւալ ալեակէն
 Թրխակալլակ աղբիւրին :
 Շուկերուն սակ զովազին՝
 Պասմէ՛ ինձի , ո՛վ քրուառ ,
 Հին հե՛տքերը կեանիդ :
 Եւ շունչիդ սակ մրկախոտ՝
 Ճանապարհին վրայ խրլուած ծաղիկիդ՝

Մերուքինդ ինձ բող բըւի
 Ձիւնասպիտակ կասարին պէս լեռներուն :
 Եւ հոն յիւէ՛, ո՛վ բրուառ ,
 Պարմանեկան արեւին մէջ խայտաղին՝
 Սրբակապանի սրբանքէր հեռամներն
 Եւ քաղցրութիւնը ամբա
 Գեղեցկամէջ բուրազըւարք կոյսերուն :
 Նահապետին առջեւէն
 Օր մը այսպէս կ'անցնէին
 Վարդակարմիր աղջիկներն
 Երջանկաւէ՛ Սիւնմին :
 Յիւէ՛ նոյնպէս, ո՛վ վարկութեան ողջակէզ ,
 Պոչիւնն անմեղ՝ բազիկներու երինջին
 Գիւղակներու երջանկութիւնն աղերսող .
 Ձի կը զրցուի բօնքնկէցին մէջ հեռուն
 Նոր խաչափայտը դրձնէ
 Բազմաչարչար Յիսուսներու արիւնին :

Առաւօտեան հովերուն
 Սուր նեղութիւնը անա՛
 Սարէն Ուրի կը բերէ
 Գրբիցը դո՛ւժ Չարքօնին :
 Պիտ' արքրննառ , պիտ' հեծես ,
 Եւ նառագայքն Երդիւին
 Ճակիցի վրայ պիտ' սառ ,
 Միմչլւ այրես , ո՛վ բրուառ ,
 Մոխիրներուն մէջ դրձխմ ,
 Չարաշուք կայծը սրբիդ :
 Պիտի գոչես ամենօրէն բախելով
 Անհաւատ վիճը կուրծիդ .
 « Բաւ է ա՛յ , Տէր , բող մեռնիմ : »
 Մենք այն ասեմն ցօղին մէջէն պիտ' երբանէ
 Ուր որ չը կան մարդեր , սէրեր , ժրպիտներ ,
 Դէպի Աստուածը հողին
 Մրտադալար , անբարբառ :
 Հոն պիտ' հանգչիս սրբակաթ՝
 Մայրական գիրկ մը իբրև ,
 Թւումամ աչկոյ երկիմին :
 Շիրմախարիզ վրան Ես
 Գեղի բաներ պիտ' բսմ
 Եւ պիտի գրեմ Աւետարանը կեանիդ՝
 Տող մը միայն , տող մ'անցիկն՝
 « Ա՛յո է նամբուն , ո՛վ բրուառ : »

Ա. Հ. Ա. Բ. ՈՐ. Ս. Տ. Տ. ՈՒ. Բ. Ն. Ն.

Վ. Ա. Ա. Ս. Ի.



ՏԻՎԻՆ ՀՐԱԶԵՍՅ

ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՍ



Բանաստեղծ Յովհաննէս Խուճանեանին,

Ազնիւ բարեկամ ,

Ի՛նք խնդրեցիք եւ ստիպեցիք որ գրեմ իմ յիշողութիւններս : Առաջին պահուն , ինձ համար՝ աս դժուար եղաւ ձեր խնդիրքը կասարել : Իրիչս անգօր կը զգայի արտայայտելու իմ զգացումներս . կենդանի գոյներով պատկերացնելու իմ անցեալի յիշատակներս : Մուսան ինձ չէ ընորհեր իր բնարի թելերէն եւ ոչ իսկ ամենափոքր մասնիկ մը . բնարը նուիրեր է ուրիշներուն եւ ինձ բողեր է լոկ արձագանգի պատճօնը : Ի՛նչ փոյթ : Ձեր սիրալիւր խախուսանէն մըղ-

լած , ես գրեցի : Եթէ չեմ ալ յաջողած կենդա-
նագրել իմ հին օրերուս պատկերը՝ ինչպէս կը
ցանկայի , գեթ մեր բարսունի պատմութեան մէկ
զուլիսը ուրուագծած եղայ . բոյլ տուի որ
ձեզի՛ ձօնեմ զայն :

ՀՐԱՉԵԱՅ

Պարու , 1904

Ա.

Ծնած եմ Կ. Պոլսոյ Բերա թաղը՝ 1859
մայիս 20 ին : 1866 ին Հայրս վախճանեցաւ :
Հայրական սերէն զրկուիլս զիս շատ կը մաշե-
ցնէր ու սիրտս կը կրծէր : Ի՛նչքան լաց եմ
եղած ու խեղճ մայրս և ուրիշներն ալ լացու-
ցած՝ երգելով թրքերէն կազէլի մը սա տողերը .

Պարիք Արսն , սեւ ճագար իջ , պեւ քափիր
քայեհիզ եւ .
Ձիրս եօք իսսսս պիր եքրեւն , իսսսսսսսս , քա-
յեհիզ եւ .
Իւրիսիւս սեւ սին , հազիշսս , պոյուն էյ-
սիրմէ իսսսսսս ,
Նե քուքսոււմ քայր էյիսսս , վա՛հ պսնս քա-
յեհիզ եւ .
Պապաւսան եօքսիզ քայրս , վա՛հ պսնս ,
քայեհիզ եւ 1) :

(Բարի Ասուած . դուն այդ վրաս դարձուր , ես խեղ
անբաղդ եմ .
Վասնզի ոչ մէկ տեղ , ոչ մէկ յոյս չունիմ , անբաղդ եմ .
Յոյսս դուն ես , Ամենողորմ , ոչ մէկուն վիզը ծուռ մի՛
ձգիր .
Ինչ բռնեցի՛ ձեռս մնաց , վա՛յ ինձի , անբաղդ եմ .
Հօրմէս որք մնացի , վա՛յ ինձի , անբաղդ եմ .)

Եւ այս զգացմանս գրգռմանը ուժ կուտային
Խրոնաուլայի ուսումնարանի երախաները , որտեղ
կ'երթայի ամէն օր Սաղմոս կարգալու . անոնք
միշտ կը խօսէին իրենց հօր մասին , թէ ի՛նչ
կ'ըսէ իրենց , թէ ինչե՛ր կ'առնէ իրենց համար :
Անոնց արտասանած ամէն մէկ բառը իմ ներքին
կրակս կը հրահրէր : Ես տուն կը դառնայի ,
ոչ իբր երախայ , այլ քսանեւթը տարեկան

1) Վերջին տող երգին մէջ ստացա եր՛ Տիւնեայ
կէսիմ կէլէլի կիւլմէսիմ , քայեհիզ եւ (Աւսարմ գալէս
ի վեր՝ չիմրացի , անբաղդ եմ) . ես այդ տողը փոխած եւ
վիճակիս յարմարացած էի :

պատանի , որ իր սիրուհին նոր թաղած է :
Մայրս , զիս սաստիկ սիրելուն , գրեթէ արգելք
կը գառնար ուսումնարան երթալուս , օր մը
“տաքութիւն ունիս” , ուրիշ օր մը՝ “տկար ես”
ըսելով : Յաճախ եկեղեցի կը տանէր , յոյս
ունէր կրօնական զգացմամբ մեղմացնել իմ վիշ-
տըս . փոքր առ փոքր ես սկսայ յարիլ՝ այն
վարդապետին որ եկեղեցւոյ բեմէն քրիստոսի
չարչարանքները կը պատմէր : Երբ տուն կը
դառնայինք , անմիջապէս բարձրաւանդակի մը
վրայ կ'ելլէի , գլուխս կ'անցընէի տուրակ մը՝
իբր վեղար , և ձեռքս առնելով փայտ մը , կը
կրկնէի մեծ ոգևորութեամբ այն խօսքերը զոր
լսած էի եկեղեցւոյ բեմէն . մայրս ու մեծ
մայրս լալով մտիկ կ'ընէին ինձի . յանկարծ
մեծ մայրս կը սկսէր ողբասացութեան . “Իմ մէկ
որդիս , իմ մէկ որդիս , ո՛վ է մատնէր Յիսուս
որդիս” : Այս ներկայացումները տեւեցին մինչև
այն օրը ուր մայրս իմ խնդրանքս զիս զրաւ-
Քրանսացի Գթութեան քոյրերու Թագսիմի ու-
սումնարանը : Ես մինչև այդ վայրկեանը եղած
էի , և հոտ ալ շարունակեցի ըլլալ . ծոյլ աշա-
կերտ մը :

Պարգևաբաշխութեան հանգէսի համար կը
պատրաստէին վճարիլ մը , այս վճարիլին մէջ
կար ծեր կնոջ դեր մը , զոր յանձնած էին
գասընկերուհւոյս՝ օրիորդ Անժէլին . անոր փոր-
ձերը անյաջող էին , ևս համարձակեցայ խնդրել
Գթութեան քոյրէն՝ որ այդ դերը ինձ տրուի .
“ծոյլ , ըսաւ , ամէն օր դասատան մէջ գէշ նօ-
թեր կ'առնես , ասոր մէջ ի՛նչպէս պիտի յաջո-
ղիս” : Խնդրեցի , թախանձեցի որ անգամ մը
փորձէ , և հաւանեցաւ : Թէ ի՛նչ եմ զգացած
այն րոպէին ուր դպայ այդ խաղը պարունակող
տետրակին , նկարագրել անկարող եմ : Եթէ
աղքատ մարդ մը վիճակահանութեան տոմսակ
մը ունենար , և ինք առանց գիտնալու թէ իր
տոմսակը արդէն մեծ թիւը շահած է՝ յանկարծ
բերէին ոսկիները և ըսէին՝ Ահա՛ , քուկդ է ,
ինչ որ պիտի ըլլար այդ մարդուն հոգեբանա-
կան գրութիւնը՝ ահա այդ գրութեան մէջ էի .
չէի գիտեր ո՛ւր պահեմ տետրակս : Երբ տուն
հասայ , մայրս տեսնելով արտասուելից աչքերս ,
լեղապատառ հարցուց . “Ի՛նչ է , ի՛նչ ունիս” :
— “Անուշիկ մայրիկս , ըսի , ասոնք ուրախու-
թեան արցունքներ են . ես միշտ դասերուս

Համար գէշ նօթ եմ առեր, այնպէս չէ՞. բայց այժմ ես ալ պարգեւ պիտի ստանամ, կը տեսնես»:

Այդ գիշերը մինչև լոյս աշխատեցայ, և երկրորդ օրը դերս անգիր գիտէի: Երկու թէ երեք օրէն տեղի ունեցաւ պարգևաբաշխութեան հանգէսը: Այդ օրը իմ յաղթանակի օրս էր: Ծափահարուեցայ, տասնի չափ պսակներ ու գրքեր ստացայ, Բերայի Փրանսական լրագիրները գովեստով խօսեցան իմ մասին: Ուրախութեանս ոչ չափ կար ոչ սահման: Այժմ ես ալ ուսումնարանին մէջ իմ տեղս ունէի:

Քանի մը շաբաթ յետոյ, արդէն մեր տան սրահը թատրոնի էր փոխուած: Մէկ քանի երախայ՝ միանալով՝ խումբ մը կազմեցինք. շաբաթական հինգ շաբաթ վճարողը անգամ էր. այդ դրամով շինեցինք թղթէ վարագոյրներ, սաղաւարտներ, մէկ քանի պատմական զգեստներ, ևն: Առաջին ներկայացումն էր «Սուրբն Ներսէս»: Հանդիսականներն էին մասնակցողներու ընտանիքները. իսկ փողոցէն անցնողները տան առջևը խոնուած՝ կը գոռային. «Մենք ալ կ'ուզենք տեսնել. դրամով չէ՞, առէք, ու թոյլ տուէք որ մենք ալ տեսնենք»:

Երկրորդ ներկայացման պատրաստուելու վրայ էինք. խաղին մէջ կար տղամարդու դեր մը՝ որուն համար կը պակսէր դերակատար. ես ստանձնեցի այդ դերը, իսկ ինդրեցի օրիորդ Աղաւնի Զապելէն (այժմ տիկին Պիննէմէձեան, որու հետ դասընկեր էինք Փրանսական ուսումնարանին մէջ) ստանձնել իմ դերս, ինչ որ ուրախութեամբ ընդունեցաւ:

Ներկայացման իրիկունը, հասաւ վարագոյրը բարձրացնելու ժամը, բայց օր. Աղաւնին դեռ չէր եկած. մէկ ժամ ուշանալէն յետոյ, վերջապէս եկաւ. հետաքրքրուեցայ թէ ինչո՞ւ էր ուշացեր. խոստովանեցաւ թէ ինքը արդէն դերասանուհի է, և ինդրեց որ այս գաղտնիքը մէկուն չյայտնեմ, որովհետեւ եթէ իմացուէր՝ զինքը կ'արտաքսէին ուսումնարանէն. փորձի էր գացեր, և այդ պատճառով ուշացեր էր: — «Ա՛յ, Աղնի՛ւ, գիտես՞, ըսաւ, մենք պիտի ներկայացնենք «Թափառական Հրեայ», որուն մէջ ես պիտի կատարեմ Պլանչի դերը, իսկ Ռոզի դերը կատարող դեռ մէկը չունինք. եթէ Պ. Մաղաքեանը քեզ տեսներ, կուգար մօրմէր

ինդրելու որ դուն կատարես Ռոզի դերը»: Ես երբ լսեցի թէ Աղաւնին արդէն դերասանուհի է և քանի մը անգամ բեմ ելեր է, ուժերս կորսնցուցի, ձեռքերս թուլցան, և այդ րոպէին՝ սառեցայ մեր սրահէն ու մեր առանին ներկայացումներէն: «Ինդրեմ, Աղաւնի, ըսի, Պ. Մաղաքեանին ըսէ՛ որ քայ ձեր տունը անգամ մը գիս փորձէ, կարելի է յարմարութիւն չունիմ»:

Երկրորդ առտուն կանուխ, Աղաւնին գիս կանչեց մօրմէս գաղանի. գացի տեսայ Պ. Մաղաքեանը, փորձեց գիս և բացագանչեց. «Գի՛ւտ է, գի՛ւտ է»: Անմիջապէս եկաւ մօրմէս ինդրելու որ ինձ թոյլ տայ բեմ ելլել. սրտատրոփ սպասեցի թէ մայրս ի՛նչ դատաւճիռ պիտի արձակէր: Առանց վարանման, մայրս վճռեց.

— Ո՛չ, ո՛չ, իմ աղջիկս թատրոնի աղջիկ ըլլալու համար չէ ծնած, ո՛չ, ըսաւ, առանց ուշ գնելու աչքերէս վազած արցունքներուն: Ի հարկէ, Մաղաքեանը մէկ քանի խօսքով ուզեց բացատրել թատրոնի նշանակութիւնը և ապագային անոր կատարելիք մեծ դերը. բայց մայրս անդրդուելի մնաց:

Կեանքս թունաւորուեցաւ. չճաշեցի, չընթրեցի, գացի մտայ անկողին, ուր՝ սաստիկ ջերմի մէջ՝ մինչև առտու զառանցեր եմ՝ «Թոյլ տուր, մայրիկ, թոյլ տուր»: Առտուն՝ մայրս գիս բժշկին տարաւ, պատմեց թէ ինչպէս զառանցեր եմ և զառանցած ատենս ի՛նչ խօսքեր եմ ըսեր: Բժիշկը լաւ մարդ էր. ստիպեց մայրս որ թոյլ տայ ինձ մէկ կամ երկու անգամ ներկայացնելու. «Գեռ փոքր է. վստահ եմ որ եթէ թոյլ տաք, կ'առողջանայ»: Ուրախութեանս՝ բժշկին ձեռքերը համբուրեցի:

Մայրս յանձնեց գիս Մաղաքեանին՝ ըսելով. — Միմիայն մէկ անգամ, Պ. Մաղաքեան. ու բան մը պիտի չվճարէք. անունն ալ փոխեցէք, ինդրեմ:

Ի հարկէ, Պ. Մաղաքեանը խոստացաւ՝ ոչ միայն անունս, այլ դէմքս ալ փոխելու՝ եթէ մայրս ցանկար: Անմիջապէս երկրորդ օրը գացի «Թափառական Հրեայ»ի փորձին՝ Բերայի Փրանսական թատրոնը: Երբ ներս մտայ, օդային կազի հոտը գիս գինովցուց: Ինձ կը թուէր թէ աշխարհիս վրայ չկայ այդպիսի անուշահոտ բուրմուռք. կ'ամչնամ ըսելու որ մինչև այսօր

նոյն կարծիքը ունիմ. ես ատ անուանեցի «Թատրոնի հոտ» :

Առաջին անգամն էր որ կը տեսնէի իսկահան Թատրոն ու գերասաններ : Այդտեղ տեսայ տիկին Երուսեակ Պէզիրճեանը , իր քոյրը՝ Եղաւնի Վալիտէեանը , և մեր տաղանդաւոր գերասան Ազաւիանը , որ ստանձնած էր Գարբիէլ քահանայի դերը : Փորձը յաջող անցաւ : Ներկայացման իրիկունը , Երուսեակ Պէզիրճեան՝ համբուրելով ու գգուելով ինքը անձամբ հագցուց ինձի ու Զապելին՝ սև զգեստներ : Ես վերացած էի : Չեմ յիշեր թէ ինչ անցաւ շուրջս : Գիտեմ միայն որ այդ երեկոյ իմ փոքրիկ գերիս մէջ անգամ մը ծափահարուեցայ . ուսուցիչս և Թարգմանիչը գոհ էին ինձմէ : Պ. Մաղաքեանը՝ մայրիկէս գաղտնի՝ վճարեց ինձ հինգ մէճիտ . Թարգմանիչն ևս նուիրեց նոյնքան . ստացայ ուրախութեամբ այդ գումարը և տարի գաղտնի մեր տան կտուրին տակ պահեցի :

Չեմ յիշեր ինչքան ժամանակ էր անցեր այդ ներկայացումէն յետոյ , որ մը՝ Պ. Մաղաքեանը եկաւ զիս գտաւ ուսումնարանը , հասկըցուց թէ պիտի ներկայացնեն « Վարդան » . անոր մէջ՝ « Ոգի-Հայաստանի » ի դերը ինձ շատ յարմար էր . թէ՛ պէտք էր երգէի և թէ՛ պէտք էր արտասանէի . մօրմէս գաղտնի գացի մեր հանրածանօթ երաժիշտ Տիգրան Չուխաճեանի մօտ , սորվեցայ երգը , նոյնպէս՝ ոտանաւորը : Սկսայ ինդրել մօրմէս որ թոյլ տայ , կրկին մերժեց , բայց երբ իր առջև արտասանեցի ու երգեցի , տեսնելով որ ես արդէն դերը պատրաստեր եմ , երկրորդ անգամուան համար իր համաձայնութիւնը տուաւ : Այդ իրիկունը շատ ծափահարուեցայ , և երկու անգամ կրկնել տուին երգը : Հեղինակէն ստացայ հինգ մէճիտ , Պ. Մաղաքեանէն՝ տասը , և այդ գումարն ալ տարի դրի Թաքստոցիս մէջ :

Լրագրութիւնը մանաւանդ ուշադրութիւն էր դարձուցեր իմ վրաս . զիս կ'անուանէր « տաղանգ » , և կը խնդրէր Պ. Մաղաքեանէն տալ ինձ մեծ դեր :

Քանի մը շաբաթ յետոյ , ուսումնարանէն արձակման պահուն , կրկին երևցաւ Պ. Մաղաքեանը . կարծես թէ սիրահարներ ըլլայինք . գացինք բովի փողոցը , որպէս զի ոչ ոք մեզ տեսնէ : Այդտեղ ինձ տուաւ մեծ դեր մը՝

« Հայկ Դիւցազն » ի մէջ , Հայկանուշի դերը .

— Պատրաստէ՛ , Ազնիւ . բան մը կ'ընենք , այս անգամ ալ հրաման կը ստանանք :

Եւ որովհետեւ ձմեռնային շրջանին վերջն էր , այդ իսկ պատճառով դիւրութեամբ ստացանք հրամանը :

Առաջին փորձին , իմ դիմացս կանգնած էր Պետրոս Աղամբանը , սիրահարի դերով . այնպիսի ոգևորութեամբ գրկեց զիս՝ « Հայկանուշ , կը սիրի՛մ գրեզ » ըսելով , որ ես խրտչեցայ և սկսայ լալ : — « Պարոն Մաղաքեան , չեմ խաղար այս դերը , առէ՛ք , ինձի նորէն փոքրիկ դերեր տուէք » :

Փորձը խանգարուեցաւ : Երկրորդ օրը՝ Պ. Մաղաքեան զիս համոզեց՝ ըսելով . — « Տե՛ս , ես դերը առի այն պարոնէն և տուի ուրիշի մը , Պ. Գաւիթ Թրեանցի , որ ամուսնացած է և սիրունիկ աղջիկ մը ունի » :

Մեծ էր ուրախութիւնս տեսնելով համեստ պարոն մը , որ պիտի ըլլար բեմի սիրահարս : Պ. Մաղաքեան կարեր էր ինձ համար մասնաւոր կօշիկներ բարձր կրունկներով . շաբաթի մը չափ՝ երկայն փէշ հագցնելով փորձեր ընել տուաւ :

Ներկայացման իրիկունը՝ Թատրոնը լեցուն էր , և մեծ էր ոգևորութիւնը : Այն ժամանակ ողբերգութիւնները մեծ տեղ կը բռնէին . այն գերասանը որ կը կարողանար երեք քայլ առաջ և երեք քայլ ետ երթալ , ձեռքերը օդին մէջ տարածել , ոտքին մէկը բարձրացնել , և աչքերը տախտակամածին վրայ յառելով՝ « Հեռո՛ւ , հեռո՛ւ , արիւնալից ուրուական » պոռալ , արդէն տարած էր յաղթանակը , և կը կօչուէր առաջին գերասան կամ գերասանուհի :

Վարագոյրը բացուեցաւ . ես նստած էի պարտէզի մէջ , սկսայ մենախօսութիւնս . ինչպէս թուութակ , կը խօսէի լեզուով մը զոր չէի հասկնար .

« Հրալար փանդիւն սիրոյս հուրը արծարծելով խանգարեց քնոյս քաղցրութիւնը . ճաճանչք արևուն վարդից թերաբացիկ թերթերը կը համբուրեն և ցօղք արշալոյսին նոցա կարմիր շրթներէն լուսասփիւռ մարգարիտ կը կախնու »

Բայց կը խօսէի բնական կերպով , ձեռքս ու ոտքերս հանդարտ էին , որովհետեւ ինձ ծանօթ չէր « առաջին » ըլլալու պայմանը : Ժողովրդին

համար՝ ատիկա նորութիւն էր. կ'երևայ թէ հաճելի եղան իրեն՝ այդ հանգարտ ու ոչ-բունազրօսիկ ձևերը. շատ շատ անգամներ ծափահարեց զիս և ի տես կանչեց ուրախ տրամադրութեամբ: Այդ ժամանակուան թերթերը, Մաւխո, Մանգուռն, Մաւնուչ, գովեստով խօսեցան իմ մասին: Պ. Մաղաբեանը ինձ վճարեց տասնուհինգ մէճիտ, իսկ հեղինակը՝ Պ. Ռոմանոս Սէտէֆեան՝ տասը մէճիտ նուիրեց. ձեզ այժմ յայտնի է իմ թողքստոցս, այս անգամ ալ կարողացայ յաջողութեամբ այնտեղ հասցնել քսանուհինգ մէճիտը:

Մեր տան մէջ կը բնակէր մօրեղբայրս, որ ունէր կին և երեք աղջիկ. այդ կնոջ լեզուն սուր էր և ուսմիկ, շարունակ կը նախատէր մօրեղբայրս. «Քոյրդ իր մէկ հատիկ աղջիկը հասարակաց կին պիտի դարձնէ. եթէ ան ըլլար Արուսեակ Պէղիւճեան մը, այդ ուրիշ բան. բայց այդ ելլուողը ի՞նչ է որ ընելիքը ի՞նչ ըլլայ»:

«Հայկ Գիւցազն»ի ներկայացման յաջորդ օրը այր ու կին՝ նստած իրենց սենեակին մէկ անկիւնը՝ կանչեցին մայրս և սկսան պատարակել զայն՝ կրկնելով նոյն խօսքերը. «Ի՞նչ է որ ընելիքն ի՞նչ ըլլայ»:

Ալ չկրցայ համբերել. գացի կտուրը, լեցուցի փէշիս մէջ մէճիտներու կոյտը, բերի ու վերէն թափելով անոնց գոգը՝ ըսի.

— Եթէ ես ոչինչ եմ, ինչո՞ւ են տուեր ինձի այսչափ զրամ:

Այս որ տեսան, լեզունին կարկամեցաւ, ալ չկրցան խօսիլ. իսկ մայրս բարկացաւ ինձի. «Քեզի չէի՞ ըսած որ զրամ պիտի չընդունիս»:

— Ինչո՞ւ չառնէի. ես վաստկած եմ այդ զրամները. իմ արդար վաստակս է ատիկա:

Այսքան պիտի ըլլար իմ գործունէութեանս սկիզբն ու վերջը, եթէ անակնկալ զէպք մը չյեղաշրջէր մեր կեանքը. այդ զէպքն էր Բերայի մեծ հրդեհը, որ տեղի ունեցաւ 1870ին:

Թերևս աւելորդ չըլլայ այստեղ քանի մը խօսք ըսել ծնողացս մասին:

Հայրս էր Գրիգոր Մինասեան, փաստարան, ընդունակ և բանիմաց մարդ. ծնած էր Անկորա, պապական ծնողքէ. երեք տարեկան՝ որբ էր մնացած հօրմէ ու մօրմէ, որ իրեն ձգած էին մեծ կարողութիւն. իր հօրեղբայրը պէտք էր

կառավարէր այդ հարստութիւնը, մինչև որ ինքը չափահաս ըլլար: Այդ հօրեղբայրը զինքը իր հետը Պոլիս բերելով կը դնէ գիշերօթիկ վարժարան և ինք կը սկսի վաճառականութեամբ պարապիլ. Պոլսոյ մէջ մեծ վարկ ունէր. տասնեութը տարեկան հասակին մէջ հայրս ուսումնարանէն ելլելով՝ կը պահանջէ իր հարստութիւնը, բայց հօրեղբայրս անոր ձեռքը հինգ հարիւր ոսկի դնելով գլխէն կը հեռացնէ: Հինգ կամ վեց ամիս յետոյ, այդ գումարը վերջացած ըլլալով հայրս կը դիմէ իր խնամակալին, որ նորէն հինգ-վեց հարիւր ոսկի տալով կը լռեցնէ զայն: Այսպէս քանի մը անգամներ կրկնելէ յետոյ՝ այլ ևս կը մերժէ վճարել՝ ըսելով. «Գուն սպառեցիր քու գրամներդ, ալ ոչինչ ունիս իմ մօտս»: Հայրս կը ստիպուի դատարան դիմել, և դատէ դատ՝ խելամուտ կ'ըլլայ օրէնքի բոլոր նրբութիւններուն, օրինագիրքը կ'ուսումնասիրէ, կ'իւրացնէ, և վերջ ի վերջոյ կը սկսի ասոր անոր դատը պաշտպանել և փաստարանութիւնը իրեն պաշտօն կ'ընէ. այն ժամանակ՝ եթէ չեմ սխալիր՝ Պոլսոյ մէջ չկար հայ փաստարան, հայրս առաջին հայ փաստաբանն էր. յետոյ եկան Եւրոպայէն համալսարանաւարտ հայ փաստաբաններ:

Մայրս էր Արմաւենի Մինասեան, ծնեալ Պօզաճեան, շատ գեղեցիկ, բարի, ողորմած, աղքատաց խնամող, անձուէր: Երբ փողոցէն կ'անցնէր, ամէն կողմէ կը գօչէին՝ «Չարս իշի լուպիէ», նմանցնելով ճախարակէ անցած փայլուն լուպիէ ոսկիներուն. շատ հարուստներ ուզեր էին ամուսնանալ հետը, բայց կաթոլիկ ըլլալուն համար մեծ հայրս ու մեծ մայրս հաւանութիւն չէին տուած: Հայրս իմանալով որ պապական մնալով պիտի չկրնայ ամուսնանալ անոր հետ, կ'երթայ լուսաւորչականաց եկեղեցին, լուսաւորչականութիւն կ'ընդունի և հինգ տարի յետոյ կ'ամուսնանայ. կ'ունենան երկու աղջիկ ու մէկ մանչ. մանչը և մեծ աղջիկը մօրս նման հանգարտ տղաք էին, ես՝ հօրս նման անհանգարտ և համարձակ, այդ պատճառաւ զիս շատ կը սիրէր. ես ալ կը պաշտէի զինքը, և սաստիկ ցաւ զգացի երբ վախճանեցաւ:

Քոյրս և եղբայրս մեռան. ես մնացի մինակ: Հայրս շատ կը շահէր, բայց շատ ալ կը շռայլէր: Եւ երբ վախճանեցաւ, երեք հազար

ոսկի ձգեց ինձ համար. ատոնք արժեթղթեր էին, զոր մայրս կտուրին տակ պահած էր իբր ապահով տեղ. այն տունը ուր կը բնակէինք՝ մօրս էր:

Եկաւ յանկարծ Բերայի հրդեհը: Անկարող եմ նկարագրել այդ սոսկալի աղետը, այդ սարսափելի օրը՝ ինչպէս որ էր: Այսքանը միայն պիտի ըսեմ որ ամբողջ Բերա թաղը հրոյ ճարակ եղաւ, հարուստներ ազքատացան, մայրեր անգաւակ մնացին, զաւակներ անմայր. չկար ընտանիք մը որու անդամներէն մէկը կամ երկուքը պահած չըլլային. շատ ընտանիքներ ալ խմբովին խղզուած գտնուեցան քարաշէն տուներու մէջ: Հրդեհը լափեց ոչ միայն անբաւ հարստութիւն, այլ և հազարաւոր կեանքեր. Բերան կը բռնէր տասնուչորս կողմէ, կարծես կրակը երկնքէն կը թափէր. շատ մարդիկ փողոցներուն մէջ այրեցան:

Աղէտը մեծ էր, ժողովուրդի լաց ու կոծի ձայնը հասաւ մինչև Սուլթանին ականջը. ուղարկեց հազարաւոր վրաններ և հաց:

Շատերու հետ մենք ալ էինք այժմ անտուն, աղքատ, կիսամերկ, բոլորիկ, որովհետև փողոցէն կրակին վրայէն՝ անցած աստննիս՝ իմ կօշիկներս և մօրս շրջագգեստը այրեցան:

Մեզ վիճակուած վրանն էր Հայոց գերեզմանատան մէջ: Ամէն մէկ վրանի տակ կար գերեզմանաբար մը. մեր վրանը՝ պատահամբ թէ վերին տնօրինութեամբ՝ կը գտնուէր ճիշդ այնտեղ ուր էր սիրելի հօրս գերեզմանաբարը: Ես նկատեցի քարին վրայի արձանագրութիւնները, և կարդացի՝ «Աստ հանգչի Գրիգոր Մինասեան, Սրբուհի Մինասեան, Մաքսուտ Մինասեան»: Մայրս որ լսեց, այնպիսի սոսկալի ճիշ մը արձակեց, որ մինչև այժմ կարծես կը հնչէ ականջիս.

— Գրիգոր, քովիդ տեղ տուր մեզի. մենք ալ կ'ուզենք թաղուիլ. մենք կենդանի թաղուած ենք ձեր մօտը. տե՛ս, սիրելի գաւակդ, աղքատ, մե՛րկ»:

Ար պոռար, և այնպիսի կսկծալի հառաչանքներ կ'արձակէր, որ մօտակայ վրաններէն հաւաքուեցան մարդիկ և մեզ բռնի դուրս հանեցին, ուրիշ վրան մը փոխադրեցին:

Այդ փիշերը հողի վրայ քնացանք, մայրս ինձմէ գաղտնի՝ ես մօրմէս գաղտնի՝ լալով. կը

մտածէի թէ ի՞նչ ընեմ որ քանի մը ոսկի ձեռք անցընեմ, մօրս շրջագգեստ, ինձ կօշիկ և անկողին ձեռք բերեմ: Յանկարծ գտայ:

Հասակէս երկայն ճօխ մագեր ունէի: Ուսումնարան յաճախած միջոցիս, վարսավիրայ մը շարունակ կ'ըսէր իր քովի մարդոցը. «Ի՞նչ մագեր. ի՞նչ չէի տար»:

Առտուն կանուխ գացի գտայ այդ մարդը: Անոր խանութը Խըննատուլայի ուսումնարանին մօտն ըլլալուն, ոչ այդ խանութը ոչ ալ ուսումնարանը այրած էին:

- Ի՞նչ կուտաս մագերուս:
- Չորս ոսկի, պոռաց անմիջապէս:
- Շուտ կտրէ:

Տասը թողէէն արգէն ամէն բան աւարտած էր: Անաստուածը վերջին ծայր կարճ էր ձգած մագերս:

Չորս ոսկին ձեռքս, իսկոյն մտայ մեր վրանը. մայրս որ զիս տեսաւ, իսկոյն բացագանչեց.

- Հապա մագերդ:
- Չորս ոսկիի ծախեցի. աւելորդ բեռ էին մագերս. հիմա այս դրամով մեր նախնական պէտքերը կը հոգանք:

Մայրս ալ իր կարգին ինձ ցոյց տուաւ երկու ոսկի. պատմեց թէ երկու մարդ են եկեր, զիս են փնտռեր և մօրս յանձներ են երկու ոսկի՝ պատուիրելով որ ինձ լաւ մնունդ տայ: «Ան ապագային հայ բեմին առաջին զարդը պիտի ըլլայ. ըսեր էին. ան մեր յոյսն է»: Յետոյ. գերեզմանատան փոքրիկ մատուռը երթալով, բեմէն գորգ մը վերցուցեր էին, ըսելով՝ «Թող վարդապետը առանց խալիչայի քարոզէ», և տուեր էին մօրս. — «Հիմակուհիմա գետինը փռէ՛ այս գորգը»: Ետքէն իմացայ որ այդ մարդոց մէկն էր Մաւնուչի խմբագիր Գեորգ Այվազեանը, իսկ միւսը՝ կարծեմ՝ Մանգուլեհի խմբագիր Կարապետ Փանոսեանը:

Բոլոր տէրութիւնները, նուիրատուութիւններ ընելով նպաստներ էին ուղարկած հրկիցեալներուն: Հիմա կը բաժնէին վերմակ, անկողին, ձերմակեղէն, բրինձ, իւղ, վերջապէս ամէն բան որու անմիջական պէտք կար, բաժանման գործը յանձներ էին «Գթութեան ֆոյրերուն», որոնք դժբաղդաբար միայն իրենց ցանկացած մարդոց կուտային: Նպաստներու բաշխումը

պէտք էր որ կատարուէր առանց կրօնի խտրութեան, բայց յանուն գթութեան. Գթութեան քոյրերը անգթութիւն կ'ընէին, մեզ լուսաւորչականներս զրկելով: Յանկարծ գազափար մը ունեցայ, երթալ իմաց տալ այս գարշելի արարմունքը Մեծ-Եպարքոսին, որու համար մեծ վրան մը սարքած էին Թուրքիոյ պարտէզին մէջ:

Այո՛, բայց ի՞նչպէս կարողանայի ներհասնիլ: Գունէն քիչ մը հեռու, պահապան զինուորներ կանգնած էին, իսկ անմիջապէս դրան առջեւ կային երկու համր և խուլ պահապաններ: Կերպով մը անցայ զինուորներուն մօտէն, և երբ հասայ դրան մօտ, սկսայ այդ համրերուն հետ նշաններով կատակել: Հազիւ տասը տարեկանի երեւոյթ ունէի: Անոնք չկարծեցին թէ ես կարող եմ համարձակուիլ այդպիսի քայլ մ'ընել, երբ յանկարծ վրանէն ներս սողալով ինկայ փաշային ոտքերը: Ներսը շատ մարդիկ նստած կային. բայց ես անգիտակցաբար ուղղակի նպատակիս հասեր էի: Համրերը վազեցին ետեւէս, բայց փաշան արգիլեց անոնց ինծի դպչիլ:

— Ի՞նչ է, քարակոզ իրզըմ (սեւաչուի աղջիկս):

— Տէ՛ր, շնորհ ըրէք, ո՛չ հայր ունիմ ո՛չ ազգական. հրդեհը մոխրի վրայ նստեցուց մայրս ու զիս: Նպատաներէն մեզի ոչինչ կը հասնի, քանի որ լուսաւորչական ենք: Ողորմեցէ՛ք:

— Ի՞նչ կ'ըսես, փոքրի՛կ, ըսածներդ ձըշմարտութիւն են:

— Տէր իմ, կարող էք ստուգել:

Ձիս այնտեղ պահեցին, և մարդիկ ուղարկեցին որ քննեն թէ արդեօք ճիշդ է ըսածս, ճիշդ է որ մենք ոչինչ ունինք:

Քառորդ ժամ մը յետոյ՝ իրողութիւնը հաստատուած էր. փաշան կանչեց իրեղէններու վերակացուն և հրամայեց տալ ինձ ինչ որ հարկաւոր էր: Մեծ պարկի մը մէջ լեցուցին վերմակներ, ձերմակեղէնի վերաբերեալ կտորներ, բրինձ, ևն, և բեռը տալով զինուորի մը՝ փաշան հրամայեց անոր որ ինձ ընկերանայ: Շնորհակալութիւն յայտնեցի և մեկնեցայ:

Կէս ծամբան հանդիպեցայ խղճալի տեսարանի մը: Արանի մը մէջ կար վեց հոգուով ընտանիք մը,՝ այր ու կին իրենց չորս երախտներով. ամուսնոյն մէկ ոտքը այրած էր. թշուա-

նութեան աղետարչ պատկեր մըն էր աս. խեղճերը կեղտոտութեան մէջ թափախուած էին՝ գարշահոտութեան մէջ ապրելով. երախտները կը ծչային, ու մայրը կուշար:

Ձէի ծանչնար այդ ընտանիքը, բայց կնոջ լացը տեսնելով մօտեցայ իսկոյն և ամէն ինչ հասկցայ: Առի պարկս զինուորին ձէռքէն և այդ խեղճերուն հետ կիսեցի ամէն ինչ որ փաշան ինձ տուած էր: Իսկ իմ բաժինս հասցուցինք մօրս մօտ, որ շատ ուրախացաւ:

Կարծեմ չէր եղեր քառորդ ժամ մը որ ես դարձած էի անզո, յանկարծ զինուորը կրկին երեցաւ. — «Շո՛ւտ, փոքրի՛կ, փաշան քեզ կ'ուզէ, շո՛ւտ ըրէ, շո՛ւտ»:

Մայրս որ լսեց թէ փաշան զիս կը կանչէ, այլալուեցաւ: Ես հանգստացուցի զինքը և զինուորին հետ նորէն գացի վրանը: Փաշան զիս որ տեսաւ, յանդիմանեց. — «Ես քեզ տուի որ դուն ուրիշներուն բաշխես»:

— Տէ՛ր, ան ինձմէ աւելի պէտք ունէր. բոլորը չտուի. ինձի շատ էր, կիսեցի:

Փաշան զիս քովը նստեցուց, և հրամայեց որ ինձ տան աւաջուան տուածնուն կրկնապատիկը. յետոյ՝ «Չուա՛խ, ըսաւ, ա՛ն մայրդ, եկուր իմ ապարանքս բնակէ. մեր տունը եւրոպացի օրիորդներ կան ուսուցչուհւոյ պաշտօնով. ես կուտամ ձեզ երկու սննեակով բաժանմունք մը, և ձեր բոլոր պէտքերը իմ տանս մէջ կը հոգացուին»:

Ապա հրամայեց որ թող տան ինձ աղատ մուտք ունենալ իր վրանին մէջ:

Մօրս պատմեցի թէ փաշան մեզ՝ երկուքս իր տան մէջ կ'ընդունէր:

— Ո՛չ, ըսաւ մայրս՝ սաստիկ յուզուած, ես՝ չեմ երթար, քեզ ալ չեմ ձգեր. անոնք քեզ կը թրքացնեն:

Այդ ըոպէին մեզ մօտ եկաւ Պ. Մաղաքեանը: Առաջարկեց ինձ Արարիկի կողմէն 16 ոսկի տասնէհինգ օրուան համար:

— Թագաւորը թլիփատութեան հանդէս կատարել կուտայ, և այդ առթիւ պիտի տեղի ունենան ժողովրդական ներկայացուցիչներ: Ամբողջ ինձմը վարձուած է: Ես կ'ուզեմ որ դուն ալ մասնակցիս, պիտի ներկայացնենք վճարիչներու Ես ուրախութեամբ ընդունեցայ անոր առաջարկութիւնը, որ իմ փրկութիւնս էր: Խեղճ

մայրս, այլ ևս հարկադրուած՝ յօժարեցաւ զիս յանձնել Մաղաքեանին :

Գացինք անմիջապէս անշուք թաղ մը (արդէն առաջնակարգ ալ չէր մնացեր), վարձեցինք կտուրի մը տակ՝ մէկ ոսկի ամսականով, փոխադրեցինք մայրս այնտեղ, իսկ ևս փոխադրուեցայ այն վրանը ուր կը բնակէր ամբողջ խումբը :

Երբ Մուլթանը իր որդիներէն մէկը թլիփատելու ըլլայ, մեծ հանդէսներ ու ժողովրդական խնջոյքներ սարքել կուտայ, որոնք կը տևեն 15-20 օր : Թաշ-Քըշլա և Կիւմիւշ-Մուլու զօրանոցները հիւանդանոցի էին վերածուած, հագարաւոր հիւանդներ (սոր թլիփատուածներ) պառկած էին. երկու տարեկանէ սկսած մինչև յիսուն տարեկան մարդիկ կային հիւանդներուն մէջ : Թագաւորը ամէն զիւր ու քաղաք կը յայտարարէր թէ ով որ կը ցանկայ կատարելապէս ըլլալ միւսիւման և ազբատութեան պատճառով չէ թլիփատուած, կարող է գալ. թլիփատողներուն համար պատրաստ է անկողին, ձեռք մը զգեստ, տասը մէձիտ փող և ճանապարհածախս : Եւ ահա ամէն կողմէ Պոլիս կուգան, յանուն միւսիւմանութեան արիւն թափելու և դրամներն ստանալու : Թուրք և թըքսհայ թատերական խումբերը, ըմբշամարտներ, լարախաղացներ, թուրք ու եւրոպացի երգիչներ, բողոյն ալ վարձուած էին տէրութեան կողմէ : Տօլմապահչէի հրապարակին մէջտեղը շինուած էր մեծ բեմ մը : Մէկ խումբը միւսին ետևէն ներկայացումներ կուտար անդադար : Մենք ընդհանրապէս վտօմիլներ կը խաղայինք. մեր ձայնը կը կորչէր նուագածութեանց և ժողովրդի գոռում գոչումին մէջ. ժողովուրդը մեր շարժումները տեսնելով միայն կը զուարճանար :

Վերջացան հանգէսները, և Մաղաքեան կրկին ինձ առաջարկեց մանկ Վարդովեանի խմբին մէջ, ուր ինքն ալ ռեժիսորութեան պաշտօն էր ստանձնած. ինձ առաջարկեցին ամսական ութը ոսկի : Պայմանաւորուեցանք Վարդովեանի հետ, և փոխադրուեցանք Իսկիւտար ներկայացումները տեղի պիտի ունենային Ազիզիէ թատրոնին մէջ :

Քանի մը խօսք Մաղաքեանի մասին :

Պետրոս Մաղաքեան կօշիկար է եղած, երբ Արեւելեան թատրոնը բացուած է : Իրրև սիրող ամէն օր ներկայ կ'ըլլայ եղեր փորձերուն :

Արեւելեան թատրոնի դերացուցութեան համար մասնաւորապէս հրաւիրուած է եղեր եւրոպացի մը, կարծեմ Նոչի անուամբ : Մաղաքեան ամենայն ուշադրութեամբ կը հետևի անոր, և սիրողը կը դառնայ դերասան : Արեւելեան թատրոնը փակուելէ յետոյ, կօշիկարութիւնը շարունակելով հանդերձ, իր առաջնորդութեամբ կուտար ներկայացումներ : Մասնաւորապէս՝ «Ռիկոլէթթօ»ի մէջ խեղկատակի դերը կը կատարէր վերջին ծայր յաջող ու բնական : Գեռ կը յիշեմ՝ Պլանչի դերը կատարած ատենս, ես կը սիրահարուէի այդ չեչոտ երեսով տգեղ, կուզիկ մարդուն, այնքան ոգեւորութեամբ կ'արտասանէր՝ «Պլանչ, որդեակ իմ, չեմ կարող ըսել թէ ո՞րքան և ի՞նչպէս կը սիրեմ քեզ» : Մանաւանդ վերջին տեսարանին, երբ կ'իմանայ թէ վիրաւորուածը իր աղջիկն է, ինչպիսի բուռն սիրով և քնքնութեամբ կ'արտասանէր այս բառերը. «Պլանչ, հոգեակ, ո՞րտեղդ է ցաւդ» : Ես կը մտնայի թէ Պլանչը չեմ և թէ ան թրիպուլէն չէ. աչքերէս արցունքը հեղեղի նման կը հոսէր : Նոյնպէս «Թափառական Հրեայ»ի մէջ՝ Տակուպէռի, Տօն Կրիկորիօի, «Աստղագէտի» մէջ Աստղագէտի և Մոլիերի Սկափէնի դերերը, զոր կը կատարէր, իրեն համար մեծ յաղթանակներ էին : Այս դերերուն մէջ՝ մինչև այսօր զինքը փոխարինող չէ եղած : Իբր ըստիս այնքան յաջող էր որքան վերոյիշեալ դերերուն մէջ իբր դերասան : Ան եղաւ իմ մենտորս, կեանքիս առաջնորդը : Ան էր որ կը ծանօթացնէր ինձ չարն ու բարին : Անոր մահէն յետոյ միայն կարողացայ ընտանեացը փոքրիկ ծառայութիւն մը մատուցանել՝ բարեկամներէս խնդրելով ընդունել տալ իր որդին Թուրքիոյ ծխախոտի ընկերութեան մէջ, և ընդունուեցաւ, ու կարծեմ թէ մինչև ցարդ կը հայթայթէ իր մօր ու քրոջ օրապահիկը :

Բ

Ամառուան եղանակի առաջին փորձը տեղի պիտի ունենար Իսկիւտար, նոյն Ազիզիէ թատրոնին մէջ : Նշանակուած էր փորձ՝ ժամը 3ին (ըստ եւր. Գին) : Բայց արդէն ամբողջ խումբը 2 1/2ին հաւաքուեր էր : Խմբապետն էր Վարդովեան, ընկերներս էին

երանուհի Գարագաշ, Վիրգինիա Գարագաշ, Թէրէզա Չուհաճեան, Գարեգին Ռշտունի, Մանուկ Սիսակ, Սերովբէ Պէնկլեան, Նալեան, Թոսպատեան, Սանճարճեան, Չափրաստճեան, Գէորգ Պէրպէրեան, Տէօբաճեան, Տիրան Գալֆայեան, որոնց հետ ծանօթացեր էի թիւատուութեան հանդէսներու ժամանակ: Չախ կողմի քուլիսներու քով նստած էին տղամարդիկ և աջ կողմը՝ կանայք, այսինքն Գարագաշ քոյրերը և Թէրէզա Չուհաճեան, որոնցմէ տասը քայլ հեռու էր փողոցի դուռը: Ես ալ գրեթէ տասը քայլ հեռու նստած էի օրիորդներէն, դրան հակառակ կողմը:

Այդ միջոցին ներս մտաւ պատանի մը, երկար հասակով ու երկար վզով. ունէր երկայն քիթ. գունատ էր: Մոխրագոյն ու շատ մաշած գգեստ էր հագած: Թեկին տակ կար տետրակ մը: Երբ երեցաւ, գերասանուհիները սկսան ծիծաղիլ, ըսելով. «Քա՛ Թէրէզա, քուկինդ եկաւ»: Իսկ Թէրէզան պատասխանեց. «Այնքան գունատ է, որ ինծի պէտք չէ. չուտով կը մեռնի», Ես լսեցի այդ խօսքերը, բայց չէի կարծեր թէ պատանին ալ լսած էր:

Այդ ցնցոտիներ հագած ու գերեզմանին մօտեցած պատանին Գուրեանն էր, մեր բոլորիս սիրելի բանաստեղծը: Իսկ իր թեկի տակի տետրակն էր «Թատրոն» խաղը, զոր կ'ուզէր կարդալ Վարդովեանին և ընդունել տալ խաղացուցակին մէջ:

Երբ իր մահէն յետոյ կարգացի անոր բանաստեղծութիւնները, այն ատեն իմացայ թէ ան ալ լսած էր Թէրէզա Չուհաճեանի խօսքերը, քանի որ գրեր էր.

«Շատերը զիս մերժեցին,
 «Քընար մ'ունի տոսկ» ըսին.
 Մին՝ «գողգող է, գոյն չունի».
 Միւսն ալ բաւ՝ «կը մեռնի...»

Փորձը սկսաւ: Խաղն էր «Ալպեանց Հովուհի», որու մէջ պիտի կատարէի անմեղ ու միամիտ հովուհիի դերը: Մինչև երրորդ արարուածը շատ լաւ տարի դերս: Չորրորդ արարուածէն պիտի սկսէր տռամը, ուր լալով պիտի պատմէի օրիորդի մը իմ գրութիւնս, բայց ես չկարողացայ լաւ պատկերացնել լացը: Քանի մը անգամ՝ Մաղաքեան ցոյց տուաւ, կրկնեց, բայց ես դարձեալ չյաջողեցայ: Այն

ատեն այնպիսի ուժով թեւ կամթոսեց, որ սաստիկ ցաւէն սկսայ լալ. — «Ահա այդպէս պէտք է պատմես»: Թէև այդ միջոցին սաստիկ վշտացայ, բայց յետոյ մտածելով որ ես երբեք չպիտի կարողանայի կատարել այդքան բնական, գացի ու համբուրեցի անոր ձեռքը:

Այդ դերը իմ առաջին հրապարակային «տեպիւ»-ս էր. Իւսկիւտարի ժողովուրդը շատ համակրեցաւ ինծի: Ազգարարութիւններուն վրայ իմ անուանս տեղ իր կեղծանուն տպած էին կարծեմ՝ Օր Մաղաքեան. բայց նոյն իսկ այդ առաջին ներկայացման հետեւալ օրը՝ արդէն Մաղաքեանը սրբուած էր ազգարարութեանց վրայ և տեղը գրուած՝ Հրաչնայ: Ժողովուրդին մէկ մասն ալ զիս անուաներ էր Վարդանուշ, բայց վերջ ի վերջոյ «Հրաչնայ» անունն էր որ յաղթանակեց:

Ամիսը ութը ներկայացում կուտայինք, չորսը թուրքերէն լեզուով, և չորսը հայերէն: Իսկ րամագանին, երեսուն գիշեր շարունակ կը ներկայացնէինք թուրքերէն:

Ըստ պայմանագրութեան, երկու ամսէն տեղի պիտի ունենար իմ նպաստիս ներկայացումը: Թատրոնի ծախքը հանելէ յետոյ, մնացածին կէսը իմս պիտի ըլլար:

Կարծեմ ներկայացուելիք խաղը ողբերգութիւն մըն էր: Հասարակութեան մէջ ոգևորութիւնը այն աստիճանի էր հասեր, որ ազգարարութեանց երկրորդ օրը՝ տոմսակներն արդէն սպառած էին: Այդ առթիւ կը յիշեմ թէ «Մամուլ»-ի մէջ այսպիսի բան մը գրուած կար.

«Կը յուսանք որ Իւսկիւտարի հասարակութիւնը կը գիտնայ գնահատել իր փոքրիկ սիրելի դերասանուհին, որուն քանի մը զոյգ կօշիկ մաշել տուին այս ամառ ամէն ներկայացման տասն անգամ ի տես կոչելով».

Ներկայացման երրորդ արարուածի միջնարարին, քովի սենեակէն ձայներ լսեցի: Գացի այնտեղ, տեսայ որ երանուհի Գարագաշ ուշագնաց է եղեր, և երբ ուզեցի օգնել, օրիորդը՝ ուշքի գալով խփեց ձեռքիս և «կորի՛ր» պոռաց: Ես ոչինչ հասկցայ: Գիմեցի զէպ ի տեսարան, ուզեցի տեսնել Պ. Մաղաքեանը և հասկնալ եղելութիւնը, բայց արդէն Պ. Վարդովեան բանալ տուեր էր վարագոյրը և կ'ըսէր ժողովրդին.

— «Մեծարգոյ հանդիսականք, զուրսը Օր»

Հրաշեայի համար դրամ կը ժողվեն կոր. զիտցէք որ ես չեմ ընդունիր. այդ մուրացկանութիւն է:

Այդ միջոցին հանդիսականներուն մէջէն պարոն մը, ձեռքէն նետելով սիրունիկ կողով մը որուն մէջ կային արծաթ և ոսկի դրամներ, գոռաց սրահին մէջտեղէն.

— «Վարդովեան, մուրացկանութիւն չէ՞, երբ Օր. Գարագաշի ձեռքէն բռնած՝ Թուրքերէ նուիրատուութիւններ կը ժողվես: Գողութիւն չէ՞, երբ Օր. Հրաշեայի նպաստին կէսէն աւելին կ'առնես: Ամօթ չէ՞ որ երկու անօրէն ունենալով հանդերձ՝ մինչև այսօր Օր. Հրաշեան առանց վերարկուի է մնացեր: Եւ երբ մենք կամուտոր նուէրներով կ'ուզենք օգնել իրեն, զուն մուրացկանութիւն կ'անուանես»:

Այդ իսկ րոպէին, Օր. Ե. Գարագաշ, վարագոյրին քովէն այդ պարոնին նայելով՝ բացապանչեց. — «Վայ գլխուդ...»:

Երկրորդ օրը՝ այդ զէպըը լրագրորդներուն մէջ գրուեցաւ: Իսկ Օր. Ե. Գարագաշը անուանեցին «Վայ գլխուդ գերասանուհին»:

Հետաքրքրուեցայ թէ ո՞վ էր այդ պարոնը որ զիս այդպէս կը պաշտպանէր: Ինձ ըսին թէ անոր անունն է Գուանեսան Աւետիս:

Գ

Քանի մը ամիս յետոյ սկսաւ ձմեռնային շրջանը Պոլսոյ կէտիկ-Փաշայի թատրոնին մէջ: Ստիպեցի Վարդովեանը որ աւելցնէ անականս, և մէկ ոսկի յաւելում ստացայ: Այդ շրջանին էր որ մեր տան մէջ պատրաստեցի Աստղիկը, և ընդունուեցաւ խումբին մէջ հինգ ոսկի ամանականով (մինչդեռ սկսնակներուն կը վճարէին երկու ոսկի): Աստղիկը իմ մտաքրոջ թոռն էր:

Մենք ընդհանրապէս կը ներկայացնէինք խառնիխուռն՝ տումներ, կատակերգութիւններ և վօտիլիներ, նամանաւանդ մեծ գերեր կատարելէ յետոյ՝ կ'երգէինք «Հանսօնէթ» մը: Իմ երգերս էին «Քթէն զժգոհ աղջիկը», «Հովիւ-Հովուհի», «Միրելն ինչ բան է՝ բնաւ չգիտեմ», և ասոր նման երգեր: Ժողովուրդը թատրոնէն չէր ուզեր մեկնել եթէ Գարեգին Ռշտունին կամ Հրաշեան բան մը չերգէին:

Գարեգին Ռշտունին միջահասակ, նիհար, թխագոյն, կուրծքի սկարուձեւամբ սառապող երիտասարդ մըն էր: Այս պարոնը ճշմարիտ



ՀՐԱՉԵԱՅ՝ ՀՈՎԻՌՆԻ
(« Հովիւ-Հովուհի » Երգին մէջ).

տաղանդ էր. ախտո՞ս որ չէինք հասկնար ինչ որ կ'ընէր անիկա: Գիտէինք միայն թէ լաւ գերասան է: Այս զիշեր Տօպանթօն դատարարի դերը կը կատարէ, ժողովուրդը զայն կը լսէ իրր Տօպանթօն. վաղը զիշեր Փունչինէլլայի գերին մէջ՝ Փունչինէլլա էր: Ան սեսարան գար թէ չէ, ժողովուրդը կը սկսէր խնդալէն մարիլ: Իր դէմքին վրայ չէր տեսնուեր ո և է ծամածուութիւն: Վերջին ծայր բնական էր իր բոլոր գերերուն մէջ: Ի՞նչ մեծ տաղանդ պէտք էր ըլլար այդ մարդը՝ որ անբնական գերասաններու մէջ բնականութիւնն էր ընդգրկեր:

Մաղաքեան առանց բացառութեան բոլորին ուսուցիչն էր: Ամէն օր սետրակին մէջ կը գրէր ներկայ գերասաններուն անունները: Եթէ ուշանային կամ բացակայ գտնուէին, ըստ ներքին կանոնագրութեանը՝ կ'ենթարկուէին տուգանքի: Կանոնագրութիւնը խիստ էր, և պէտք էր ամենքս ալ հնազանդէինք:

Նոյնպէս թուրքերէն արտասանութեան դասեր կ'առնէինք: Մեր ուսուցիչներն էին յայտնի գրագէտ Քէմալ պէյ և Ապի պէյ:

Այս կերպով կը շարունակէինք գործը , ամառը՝ Իւսկիւտար և ձմեռը Կէտիկ-Փաշա :

Երկրորդ ձմեռնային եղանակին՝ Ֆասուլ-եաճեան Նախջեւանէն գալով իր հետ բերաւ մեզ Ադամեանը : Ի՞նչ գրել Ադամեանի մասին , քանի որ ամենուն յայտնի է թէ ան ի՞նչպիսի գերասան էր . ո՛չ , ան «գերասան» չէր , տաղանդ էր , հանձար էր . բաւական էր զայն անխօս տեսնել բեմի վրայ և դուք արդէն կը զգայիք թէ ի՞նչ խոշոր ուժ մը կանգնած է ձեր դէմը : Ան իր կարծ հասակով բեմի հսկան էր : Ես կ'ըսեմ՝ որ անոր նմանները շատ քիչ են նոյն իսկ եւրոպական բեմերու վրայ : Խեղճ Ադամեան . քանի՛ անգամ անոր ոսկորները գերեզմանին մէջ անհանգիստ ըրած են՝ նորելուկ գերասան մը մէջտեղ ելածին պէս «Ադամեանը վերակենդանացաւ» գոչելով . չէ՛ , պարոններ , այդքան ալ դիւրին չէ Ադամեաններ ունենալ . դարեր դժուար կ'արտադրեն , մայրեր դժուար կը ծնին այդպիսի արուեստագէտ մը :

Ադամեան փորձեց թուրքերէն լեզուով խաղալ , բայց չյաջողեցաւ . արտասանութիւնը շատ գէշ էր , այդ պատճառով հրաժարուեցաւ խումբէն , մանաւանդ որ երկրորդական տեղ բռնելու համար ծնած չէր :

Մինչև երկրորդ «սէզոն»ը , ես կը կատարէի «Սուպրէթ» , «Կրիպէթ» և Էնթէնի«ի գերերը , իսկ առաջին գերերը կը կատարէր Օր. Ե. Գարագաշ :

Այդ թատրոնական եղանակին՝ յանձնախումբ մը կազմուեցաւ թուրք աւագանիէն , Աալի պէյ , Նազըմ պէյ , Ջիա պէյ ևն . ասոնք հարուստ մարդիկ էին , Եւրոպա կրթուած , շատ հասկցող : Թարգմանեցին «Քաթերին Լովաբո» խաղը , և ստիպեցին Վարդովեանը որ ինձ խաղալ տայ Քաթերինի գերը մէկ անգամ , իսկ երկրորդ ներկայացման՝ Օր. Ե. Գարագաշին :

Երբ Մաղաբեան ինձ յանձնեց գերը , ես մերժեցի ու սկսայ լալ .

— Ես առաջին գեր չեմ կրնար կատարել , դեռ պատրաստուած չեմ :

Մաղաբեան համոզեց զիս որ ես կարող եմ , և պետք է փորձեմ վերջապէս :

Իմ սենեակս Մաղաբեանի սենեակին մէկ բաժանմունքն էր , և մուտքս՝ անոր սենեակէն : Գիտմամբ այդպէս էր ըրած , որպէս զի միշտ

կարողանայ հեռու պահել զիս վնասակար տարրերէ : Եղան դերասաններ որ այլ կերպ մեկնեցին այդ հսկողութիւնը , բայց միայն չարամիտները իրաւունք չեն տար քառասուն տարեկան մարդու մը տանըջորս տարեկան աղջիկ մը իբրև իր հարազատ զաւակը հովանաւորելու :

Ներկայացման երեկոյին՝ հագուելու միջոցին՝ կուլայի . Մաղաբեան զիս կը խրախուսէր .

— Կը յաջողիս , բնաւ մի՛ տարակուսիր : Գուն տարիներով չէ որ յառաջ կ'երթաս , այլ օրերով : Հաւատա ըսածիս . մինչև այսօր ես միթէ քու գէշութիւնդ ուզած եմ : Ես շատ աշակերտներ ունիմ , բայց անոնցմէ ոչ մէկը չեմ սիրեր ինչպէս քեզ կը սիրեմ , որովհետև դուն խօսքս մտիկ կ'ընես ամէն կերպով : Եւ ես կը պաշտեմ քեզ իբրև հարազատ զաւակս :

Այս խօսքերը ինձ ուժ տուին , և իմ մենտորիս օրհնութիւնը առնելով՝ բեմ ելայ :

Կէտիկ-Փաշայի փայտաշէն թատրոնը շատ մեծ էր , իսկ բազմութիւնը թատրոնէն աւելի մեծ : Առաջին անգամ ըլլալով պիտի քննէին զիս հանդիսականները մեծ դերի մը մէջ , և եթէ արժանի էի՝ «առաջնութեան» տիտղոս պիտի տային : Անոնք էին մեր փրօֆէսորները :

Յաջողութիւնը շատ մեծ եղաւ , և՛ եթէ կարելի է այսպէս ըսել՝ փոխանակ տիտղոսի ոսկի մէտայլ ստացայ :

Բայց ես ինձմէ միշտ դժգոհ էի : Գիտէի թէ ինչ է որ կը վրիպի անոնց աչքէն . մենախօսութիւնն էր տկար կողմն : Սաստիկ կը նեղուէի այդ միջոցին . չէի ցանկար մինակ մնալ բեմի վրայ . կարծէք երկու ուսերուս վրայ անբերելի ձեռք մը կը ծանրանար : Իսկ երբ մենախօսութիւնը կը վերջանար , արդէն գերիս մէջ էի :

Այդտեղ սկսաւ նախանձը :

Առաջին դերասանուհին , որ Վարդովեանին շատ մտտիկ էր , չհամաձայնեցաւ փորձուիլ Քաթերինի գերին մէջ :

Հայ հասարակութիւնն ալ ցանկութիւն յայտնեց զիս տեսնել առաջնակարգ գերերու մէջ : Բայց մենք մասնաւորաբար հայ ժողովրդի համար կը ներկայացնէինք կամ ողբերգութիւն և կամ հայ հեղինակներու էգրուածքներ :

Ռոմանոս Սէտէֆանի գրած «Հինձքի եղևնագործութիւն» խաղին մէջ պիտի կատարէի

տիպար օրիորդի դերը: Ներկայացման իրիկունը, խմբագիրներ, գրագէտներ և քննադատներ, որոնց մէջ էր և Մինաս Չերազ, գրաւեր էին իրենց օձեակը: Եյս անգամ պիտի քննէին թէ՛ գերասանուհին և թէ՛ հեղինակը:

Մինչև չորրորդ արարուածը մեծ էր յաջողութիւնս: Արարուածի վերջը, ունէի մեծ մեծ նախօտութիւն մը: Խօսքերը պիտի ուղղէի շուրջս կանգնած պարօններուն. կերպով մը՝ խաղին բարոյական դասը պիտի ըլլար ասիկա: Երբ ուղղեցի խօսքս Պէնլեանին, «Գո՛ւ տէր Հայր», քրքջաց ու հեռացաւ: Գարձուցի երեսս Նալեանի կողմը, «Գո՛ւ Միհրան»: Միհրանն ալ խնդալով փախաւ բեմէն: Գարձայ Թոսպապեանին. «Գո՛ւ Վահրամ»: ան ալ խնդալէն մարելով հեռացաւ: Իսկ այդ միջոցին, Ռոմանոս Սէտեֆճեան, որ իր խաղին յուշարարն էր, կիսով չափ ծակէն դուրս ելած սկսաւ պոռալ:

— Հունչանորդիներ, խաղիս խերը անիծեցիք:

Ես որ տեսայ ծակէն դուրս ելած Ռոմանոսը, «է՛յ ա՛ս ալ փրու» ըսելով, բեմին մէջ տեղը կանգնած՝ անպսակի ջղային ծիծաղով մը սկսայ ծիծաղել ու լալ միանգամայն:

Եյս տեսարանը կարծեմ տեւեց տասը վայրկեան: Վարագոյր իջեցնելու նշանը ոչ մէկը կուտար: Իսկ ես անկարող էի տեղէս հեռանալու: Վերջապէս հասաւ Մաղաքեան, փակեց վարագոյրը: Բայց իմ ջղային տագնապս դեռ կը շարունակուէր:

Հանդիսականներէն շատեր ներս խուժեցին ու սկսան զիս միտմարել:

— Գուբ յանցաւոր չէք կ'ըսէին, յանցանքը գերասաններուն է ու հեղինակինը:

Երկրորդ օրը, լրագրութիւնն ալ ներողամիտ էր ինձ նկատմամբ: Բայց Պէնլեանին և հեղինակին քաղաքավար դաս մը տուին:

Ահա այս կերպով չկրցայ հայ ժողովուրդէն տիպիում ստանալ այդ գիշեր:

Թուրք քոմիթէի ազդեցութիւնն ու գուարձութիւնները հետզհետէ կ'աւելնային տեսարանի վրայ: Եյդ պարօնները ամէն փորձի ներկայ կը գտնուէին: Ու փորձերը այլ ևս կանոնաւոր չէին ինչպէս առաջ:

Օր մը, փորձի ժամանակ, ես նստած էի քուլիսին մէջ և ուշադրութեամբ կը հետեւէի

փորձին: Աալի պէյ ձեռքը բռնած ունէր փիէսին երկրորդ օրինակը: Թէև պէյին ուշադրութիւնը ըստ երևոյթին փէսին վրայ էր, բայց ես զգացի որ անոր ուշադրութիւնը իսկապէս իմ վրաս էր, և թէ բան մը կը պատրաստէր մտքին մէջ: Յանկարծ, իրր թէ անուշադրութեամբ, մօտեցաւ ու գիրկս պիտի նստէր: Ես անմիջապէս երկու ձեռքով կոնակէն հրեցի, և տախտակամածին վրայ ինկաւ:

Յետոյ ոտքի ելլելով, բարկութեամբ պոռաց.

— Եյո՛, ի՛նչպէս չէ. կոյսին զպանք, անմեղութիւնը փնտուեցաւ:

Մաղաքեան, իսկոյն նետուելով պէյին վրայ, տոսկալի ապտակ մը տուաւ անոր:

Գործը մեծցաւ: Ոստիկանութիւնը միջամտեց, նոյնպէս և լրագրութիւնը: Մաղաքեան կերպով մը ազատեցաւ անոնց ձեռքէն, և մենք տուինք մեր հրաժարականը թուրքո-հայ թատրոնին:

Դ

Յաջորդ ամառնային «սէզոն»-ին էր որ Ֆասուլեանի և Պ. Գոռանեանի միջոցաւ վարձեր էր իւսկիւտարի Ազիպիէ թատրոնը, և ինքը կը բնակէր Ենի-Մահալլէ կոչուած թաղը:

Մաղաքեանի հաւանութեամբ, գացի մասնակցելու Ֆասուլեանի խմբին, ուր և ծանօթացայ Պ. Գոռանեանին:

Հաղիւ մէկ քանի ներկայացումներ էինք տուած, Ենի-Մահալլէն ամբողջովին հրոյ ճարակ եղաւ: Ֆասուլեանի գոյքերը, զգեստներն ու գրքերը այրեցան, և ինքը հարկադրուեցաւ թողուլ խմբապետութիւնը և մանկ Վարդովեանի թատրոնը իրր գերասան:

Ես մնացի անգործ. իւսկիւտարի Ս. Խաչ վարժարանին հոգաբարձութիւնը Պ Ա. Գոռանեանի միջոցաւ առաջարկեց ինձ ամսական եօթը ոսկի նպաստ, գովելով իմ պատուոյ նախանձախնդրութիւնս՝ որով հեռացայ թուրքո-հայ թատրոնէն:

Մերժեցի քաղաքավարութեամբ.

— Մենք երկու հոգի ենք. ես կարող եմ մայրս պահել: Մեծ ծախք չունինք: Կ'աշխատիմ, և կար ու ձեռագործ ընելով՝ կ'ապրինք: Միմիայն, կը խնդրեմ, թող հոգաբարձութիւնը

ըլլայ այնքան բարի որ թոյլ սայ ինձ ուսում- նարանէն փոխ առնելու հարկաւոր եղած գոր- ծիքները: Աւսումնարանին մէջ կոյին կարի և ձեռագործի ամէն տեսակ գործիքներ: Խոստա- ցան ինձ ընծայել ամէն գիւրումիւն:

Աւրբաթ օր մը, մայրս հետ առնելով գացի Քիւչիւկ-Չամլըճա, ուր Թըքուհիներ յաճախ կը հաւաքուին զուարճանալու:

— Հանրմներ, ըսի, շատ գեղեցիկ զգեստ- ներ կը կարենք, և ամէն տեսակ ձեռագործ: Չեզ ծառայելու պատրաստ ենք: Հասցէնիս այս ինչ փողոց այս ինչ թիւ:

Հետեւալ օրը՝ արդէն բաւական յաճախորդ ունէինք: Կարելը շատ աժան կ'ընդունէինք: Օրինակի համար՝ հասարակ կերպատէ շրջա- զգեստ մը մէկ լուպլիի կը կարէի. երեւակայե- ցէք սակայն, կունկը ծուռ, քղանցքը կարճ: Երբ ինձ գիտողութիւն կ'ընէին,

— Այ հանրմ, կը պատասխանէի, ձեր կազմը ծուռ է. ես ի՞նչ յանցանք ունիմ:

Այս գործը երկու ամիս շարունակեցի: Այդ միջոցին Պ. Գօռան ամէն կիրակի ճաշէն յետոյ մեզ մօտ կուգար ինձ լուրեր բերելու Պ. Մա- զաքեանէն որ միշտ Բերա կը բնակէր, կամ հարցնելու թէ արդեօք ո՛ր է գործիքի պէտք ունիմ ուսումնարանէն:

Լուր օրերը աշխատութեամբ կ'անցընէինք. կիրակի օրերը կարծէք մէկ մէկ դար էին:

Մեր բնակարանը աղքատիկ ու փայտաշէն տուն մըն էր. մեր նստած սենեակէն կարող էինք չուանը քաշելով զուռը բանալ:

Երբ կը հասնէր Պ. Գօռանեանի այցելու- թեան ժամը, այն բոլորին արդէն չուանը կը քաշէի, քաջ գիտնալով որ ան վայրկեան մը իսկ պիտի չուշանար: Զուպելով ուրախութիւնս իմ մէջս, անտարբեր՝ բայց շատ քաղաքավար ձևով կ'ընդունէի զինքը: Ան վերջին ծայր ուրախ տրամադրութեամբ կը բարեկէր մայրս և զիս. մէկ քանի խօսք Մազաքեանի, մէկ քանի խօսք թատրոնի, մէկ քանի խօսք քաղաքի եղելու- թեանց մասին. այսպէս՝ քանի մը ժամ խօսելէ յետոյ, կը հեռանար:

Մօրմէս ինչորստ էի որ զիս յմինակ չթողու պարոնին հետ, և անոր մեկնելու պահուն՝ ինք ալ հետս գայ մինչև սանդուխը՝ զայն ձանա-

պարհ գնելու: Չեմ՝ գիտեր ինչո՛ւ կը վախնայի անոր հետ մինակ մնալու:

Կարծեմ վեցերորդ կիրակին էր որ Պ. Գօ- ռան այցելութեան կուգար մեզի: Երկայն բազ- մոցին վրայ նստած էինք այդ օրը՝ երեքս, մայրս մէջտեղը, ես աջ կողմի ծայրը, պարոնը ձախ ծայրը:

Յանկարծ հարցուց ինձի.

— Օրիորդ, նախանձո՞տ էք:

Ես շուարհցայ.

— Չեմ հասկնար, Պ. Գօռան, ի՞նչ կ'ու- գէք ըսել:

— Օրիորդ, ներեցէք, ես թաքուն նպա- տակով չհարցուցի. ալ պարզապէս ուզեցի իմա- նալ թէ արդեօք այդ զգացումը ունիք: Խնդրեմ, ըսէք, կ'ազաշեմ՝ ըսէք, նախանձո՞տ էք:

Այնքան պաղատեցաւ, որ վերջապէս մայրս հրամայեց ինձ որ պատասխանեմ:

— Գուր ինձ կը հարցնէք քաղցրութեանը կամ դառնութեանը մասին այնպիսի կերակուրի մը որ զիս չեմ ճաշակած: Չեմ սիրած մինչև այսօրս, և չեմ կարող գիտնալ ապագան: Կարող եմ միայն երեւակայել որ եթէ օր մը մէկը սիրեմ, չպիտի նախանձիմ, քանի որ քաջ գի- տեմ թէ ան ալ զիս պիտի սիրէ: Ինձ համար ուրիշ մը գոյութիւն պիտի չունենայ, ուրեմն անոր համար ալ նոյնը պիտի ըլլայ. միայն, կրնայ ըլլալ որ փորձեմ զինքը:

1 [— Ի՞նչպէս, օրիորդ, ըսէք՝ ինչորստ:

— Բայց ի՞նչ պէտք կայ այժմ, քանի որ չեմ սիրեր և ոչ որ կը սիրէ զիս:

Կրկին մայրիկը միջամտեց:

— Օրինակ... ի՞նչ բան... պատուիրել որ օրիորդ *** ը թեք չաւնէ երբեք, տեսնելու համար թէ իմ խօսքս, իմ կամքս կարո՞ղ է յարգել:

— Օ՛, այդ ի՞նչ դժուար բանով կ'ուզէք փորձել. ատիկա ամենագիւրին բանն է:

Քանի մը շարաթ յետոյ, Մազաքեան եկաւ ինձ ծանուցանելու թէ ինքը բռներ է Օրթա- գիւղի թատրոնը և անտեղ պիտի կատարէի առաջին դերեր: Պէտք էր նոյն գիշերն իսկ հաւաքել մեր գոյքերը և հետեւեալ առտուն կանուխ փոխադրուիլ Օրթագիւղ:

Այդ լուրը զիս ուրախացուց: Աւերջապէս

նորէն պիտի սկսէի իմ սիրած գործս : Այդ լուրը միենոյն ժամանակ տիրեցուց զիս . պէտք էր մնաս բարով ըսէի Իւսկիւտարի մէջ անցուցած կիրակիներու :

Յանկարծ փողոցէն լսեցի ծանօթ ոտնաձայնը : Անգագալաբար՝ քաշեցի չուանը , «Պ. Գօռանն է» , ըսելով : Ան , ստիպուած , ներս մտաւ : Բայց ա՛լ այն ուրախ մարդը չէր . տխուր էր և յուզուած : Մոռցաւ որ Մաղաբեան և մայրս նստած են :

— Օրիորդ , ըսաւ , Օրթագիւղի երիտասարդութիւնը՝ ձեզ գլխէ պիտի հանէ :

— Պարոն Գօռան , Իւսկիւտարի երիտասարդութիւնը չկրցաւ զիս գլխէ հանել , կ'ապահովցնեմ ձեզ որ Օրթագիւղի երիտասարդութիւնն ալ չի յաջողիր :

Անոր մեկնելու միջոցին , աչքով մօրս նշան ըրի որ հեռեի ինձ , բայց մայրս չհասկցաւ : Ստիպուած՝ ծրագն առի և հետեւեցայ պարոնին :

Հասանք սանդուխի գլուխը : Այդտեղ , մէկ ձեռքը դնելով չուանի վրայ , միւս ձեռքը ինձ երկնցուց՝ մնաք բարով ըսելու : Եւ երբ ես ձեռքս երկնցուցի , յուզուած՝ համբուրեց ձեռքըս , չուանը քաշեց և հեռացաւ :

Չեռքէս ծրագն ընկաւ : Նստած՝ սանդուխին վրայ , թէ՛ կ'ամենայի , և թէ՛ ուրախ էի : Չէի ուզեր ձեռքս տեղ մը դպցնել՝ որպէս զի չապականուի :

Վերջապէս՝ տեղէս վեր կենալով , մտայ սենեակ : Կարծեցի թէ անոնք կարդացին երեսիս վրայ ինչ որ տեղի էր ունեցեր սանդուխին գլուխը :

— Մայրի՛կ , գոչեցի յուզուած , ես քեզի աչքով նշան ըրի , դուն չեկար , զիս մինակ ուղարկեցիր , ան իմ ձեռքս համբուրեց :

Մաղաբեան անմիջապէս պատասխանեց .

— Ոչի՛նչ . ան քեզի շատ կը հաւնի . ինձի խօսեր է այդ մասին : Դէպ ի քեզ շատ մոքուր զգացումներ և մտածումներ ունի :

Տեղափոխուեցանք Օրթագիւղ : Մեր տան դիմացը սենեակ մը վարձեր էր Պ. Գօռանը : Թատրոնը սաստիկ կը սիրէր , և ուզեր էր ներկայացման իրիկունները բացակայ չմնալ՝ և գիշերելու համար այդ սենեակը վարձեր էր :

Ե

Այդ «սեղօն»ը պոլսահայ թատրոնի ոսկեզարն էր : Մեր խումբը կազմուած էր սապէս . Մաղաբեան՝ խմբապետ և ընթացիկ , Ադամեան , Մնակեան , Սիսակ , Թրեանց , Անտոն Ռշտունի , Վարժապետեան , ևն . Հրաչեայ , Ասաղիկ , տիկին Վաչիտէեան և Սիրանոյշ , զոր «Փիէր ա'Արեցցօ»ի մէջ Մետածձայի դերին համար պատրաստեցի և ընդունուեցաւ : Մեր խաղացանկն էր՝ Փարիզու աղխասներ , Սեր առանց համարման , Երկու յիսնապէս , Փիէր ս'Արեցցօ , Բարեբիւն Հովնաւարդ , Արեան թիծ , Լիսնի սուրհանդակ , Լիւսի Տիսիե , Սաւնդուխս , Ենկը եւ Հաւասարմուրիւն , Արխայն զքօսնու , ևն . :

Ներկայացումները կը տրուէին Բարեսիրաց ընկերութեան թատրոնը : Շատ խորհրդաւոր էր . դպրոցի բակը՝ թատրոն , զիմացն ալ եկեղեցի :

Այս երրորդութիւնը դուրս էր վաներ Օրթագիւղէն խաւարը , և իսկապէս՝ Օրթագիւղ Պոլսոյ Հայոց ամենէն լուսաւորեալ թաղն էր : Այնտեղ Հայերը մեծամասնութեամբ շատ լաւ հայերէն կը խօսէին , կրթուած էին և ուսեալ : Այդ միջոցին լեզուաբանական պայքար կար . Ժողովուրդը երկու մասի էր բաժնուած . Յակոբ պէյ Պալեան և Տօթթ . Ռուսիներն աշխարհաբարը զարգացնելու և կոկելու ուղղութեան պարագլուխներն էին , իսկ Էմմանուէլ Եսայեան՝ գրաբարին : Ռուսիներն դպրոցին համար՝ հորեղբորդին հօքորդի պէտք էր ըլլար , մօրեղբայրը՝ մօքար , հօրեղբայրը՝ հօքար , պարոնը՝ սիայր : Ադամեանին և ինձ առաջարկեր էին ամէն մէկ սիայրի և հօքարի համար զոր պիտի արտասանէինք բեմէն՝ մէկ ոսկի օսմանեան : Անոնք՝ ձեռքերնին բռնած մատիտ և թուղթ , նստած էին օթեակին մէջ մեր սիայրներուն հաշիւը նշանակելու : Պէտք է ըսել որ երկուքնուս ալ հաճելի էր սիայր բառը , լաւ կ'արտասանուէր՝ բեմէն : Ատկից զատ , գիտէինք որ ամէն մէկ սիայր կ'արժէր մէկ ոսկի : Ուստի՝ փոխանակ մէկ սիայր ըսելու , կ'ըսէինք՝ սիայր , սիայր : Այդ միջոցին , Ժողովուրդին մէջէն կը լսուէր Էմմանուէլ Եսայեանի ձայնը՝ Տէր , տէր . բայց մենք ուշադրութիւն չէինք դարձնել :

Ամէն մէկ ներկայացման իրիկուն, Ադամեան
և ես կը ստանայինք յիսունական ոսկի Յակոբ
պէրէն :

Մէկ ամիս հազիւ անցեր էր «սեղօն»ի սկիզ-
բէն . գիշեր մը , թատրոնը պէտք էր լսարանի
վերածուէր : Թօփհանէլեան պիտի խօսէր , չեմ
յիշեր ինչ բանի մասին : Այդ իրիկուն , ես
չգացի թատրոն , բայց Պ. Գօռան այնտեղ էր :
Ես՝ սենեակս նստած , մուտ տեղը , կը սպասէի
անոր վերադարձին :

Աէս գիշերին , լսեցի ոտնաձայններ հեռու-
էն , և Օր. * * *ի ձայնը .

— Թւեքնիդ ինձ չէ՞ք շնորհներ , Պ. Գօռան :

— Խնդրեմ , ըսաւ ան ու թեք տուաւ
օրիորդին : Միտակն ալ կ'ընկերակցէր անոնց :

Երբ հասան օրիորդի դրան առջև , խնդրեց
որ մանեն սուրճ մը ընդունելու : Երկու պա-
րոնները հազիւ թէ համաձայնութիւն յայտնած
էին , ես բացի պատուհանս : Զիս որ տեսաւ
Պ. Գօռան ,

— Օրիորդ , խնդրեմ , դուք ալ եկէ՛ք ,
ըսաւ , օրիորդը կը խնդրէ որ գաւաթ մը սուրճ
խմենք :

— Շատ շնորհակալ եմ , ինձ համար ար-
դէն ուշ է , ըսի , պատուհանը փակելով ինկայ
բազմոցին վրայ և կուշտ մը լաց եղայ :

Յաջորդ իրիկունը պիտի ներկայացնէինք
Ննեգ եւ Հաւասարմութիւն :

Այդ գիշեր , Պ. Գօռան կանուխ եկաւ քու-
լիսները . բայց ես չբացի դուռս , մինչև վարա-
գոյրը բացուելու բոլորէն : Յուսահատած , գնաց
Միտակէն խնդրելու ,

— Միտակ , գնա՛ ըսէ՛ , անգամ մը թող
լսէ զիս :

— Ա երջապէս , Միտակին անսալով , բացի դու-
ռը : Ներս մտան :

Գօռան կուշտ , կը պաղատէր .

— Ներէ՛ , ներէ՛ , ներէ՛ :

— Զեմ հասկնար ձեզ , պարոն . ի՞նչ նե-
րեմ : Դուք ինձ բան մը չէք ըրեր :

— Օ՛ , պիտեմ . դուք ինձ ըսեր էիք այդ
օրիորդը թեւ չառնել . իսկ ես առի :

— Դուք շատ սխալեր էք , այդ խօսքը ձեզի
համար չըսի . ես դեռ չեմ սիրած :

— Մի՛ ըսեր այդպէս , դուն զիս կը սի-
րէիր , ես ալ քեզ կը սիրեմ :

— Գիտէ՞ք ինչ , պարոն , ցաւալի է որ
տեղի եմ տուեր ձեզի կարծել թէ ես ձեզ կը
սիրեմ : Ո՛չ , ես ձեզ յարգած եմ իբր ամենա-
լաւ բարեկամս , ուրիշ ոչինչ :

Ես դուրս ելայ սենեակէն :

Ինձ համար «պահ» էր այդ պարոնը : Տան-
ջուեցայ երկու շաբաթ , ամէն գիշեր լաց ըլ-
լալով : Յետոյ անցաւ :

Զիս ամուսնութեան ուզողներ պակաս չէին ,
թէ՛ հարուստ և թէ՛ միջակ դասակարգէն : Բայց
ոչ մէկը զիս կը հետաքրքրէր :

Յակոբ պէյ Պալեան կը ցանկար որ ես
Ադամեանի հետ ամուսնանայի : Ադամեան կու-
գար պէյին ցանկութիւնը յայտնել ինձ : Ես
լուռ էի , և չէի պատասխաներ , բայց օր մը
ուզեց անպատճառ կարծիքս իմանալ :

— Ադամեան , գիտե՞ս ինչ , երկու լա-
րախաղացներս չենք կրնար մէկ չուանի վրայ
խօսալ :

Ար բարկանար , բայց քիչ մը յետոյ կը
մոռնար ու կ'ըսէր .

— Շի՛ք պիտի երթանք , օրիորդի , շի՛ք
պիտի երթանք :

Ար շարունակուէր ամէն ներկայացման յի-
սունական ոսկին : Ես այդ դրամը կուտայի մօրս :
Ադամեան նոյն գիշերն իսկ կը հալեցներ . առ-
նելով հետը Օրթագիւղէն քանի մը ընկերներ ,
կը վարձէր առաջին կարգի կառք ու կ'երթար
Բերա՛ մինչև լոյս կը ծախսէր ունեցածը , նոյն
իսկ շատ անգամ ժամացոյցը գրաւ դնելով առ-
տուն կը դառնար Օրթագիւղ :

Մենք ընդունուած էինք առաջին սալօնե-
րուն մէջ : Առանց Ադամեանին և ինձ՝ երեկոյթ
չէր ըլլար :

Գիշեր մը , Նշան Օտեան լէֆէնտի տունը
երեկոյթ կար : Գիւղին բոլոր մեծամեծները այն-
տեղ էին : Յակոբ պէյ ինձ առաջարկեց ամուս-
նանալ Ադամեանի հետ :

— Ո՛վ գիտէ , թերևս մէկ ուրիշին կինն
ըլլաս և հայ բեմը զրկուի քենէ : Ադամեան
գեղեցիկ է , լաւ արթիստ է , և քեզ շատ կը սիրէ :

— Պէ՛յ , ներեցէք որ ձեր խօսքը կը կտրեմ
Ան զիս չկրնար սիրել : Անոր սէրը հինցած է ,
իսկ իմս շատ նոր : Հին կտորը նոր կարկտան
չի բռներ :

Այդ միջոցին , երաժշտութիւնը քատրիւ

կը ծանուցանէր : Ներողութիւն խնդրելով հեռացայ : Խոստացեր էի պարոնի մը՝ հետը պարել :

Ազամեան, Յակոբ պէյի մօտէն գալով սրահ, ընդհատեց պարը , և սկսաւ պղաւել :

— Օրիորդ , դուք զիս խեղճ գնդակ էք դարձուցեր , երբեմն օդը կը բարձրացնէք , երբեմն գետին կը հաւասարցնէք : Այո՛ , պարոններ , ես օրիորդ մը կը սիրեմ , թէև ան գեղեցիկ չէ , աչքին մէկը կոյր է , ոտքը կաղ , ինքը տգեղ և երեսը չեչոտ , բայց անոր սիրտը ազնիւ է , ան զիս կը սիրէ , ես ալ ան կը պաշտեմ , և պիտի ամուսնանամ հետը :

Սրահին մէջ ծիծաղ յարուցին այս խօսքերը :

— Պարոն Ազամեան , ըսի , ոչ ոք ձեզ կ'արգիլէ ամուսնանալ անոր հետ . միթէ դուք ազատ չէք :

Չեմ յիշեր ո՛րքան ժամանակ էր անցեր , որ մը Օրթագիւղի երիտասարդութիւնը պիտի ներկայացնէր խաղ մը՝ յօգուտ աղքատներու : Խնդրեր էին Մաղաքեանէն որ ան ալ իր խմբով ներկայացնէ զաւելտասաղ մը :

Սիրողներու փորձերը ձեզ ծանօթ են . ժամանակին չէին եկեր , և կը փորձէին ուշ :

Գացի թատրոն : Սենեակս դեռ չէի մտեր , տեսայ որ սիրողները կը փորձեն : Հետաքրքրուեցայ տեսնել և նստայ առաջին օթեակը , ուր կը գտնուէր տիկին Վալիտէեան :

Մեր օթեակին կրթընած էր երկայն հասակով ու թափանցիկ դէմքով համեստ երիտասարդ մը , որ սիկար կը ծխէր : Ուշադրութիւնս գրաւեց . նայեցայ պարզապէս : Մեր աչքերը իրարու հանդիպեցան :

Պարոնին ձեռքէն սիկարը վար ինկաւ : Ես ետ քաշուեցայ : Տիկին Վալիտէեան ինձ դարձաւ .

— Ի՞նչ ըրիր խեղճ տղուն որ ապշեցաւ մնաց :

Քիչ յետոյ գացի սենեակս քաշուեցայ :

Մեր զաւելտասաղի միջոցին , կը տեսնէի բեմէն նոյն երիտասարդը որ նստած էր ժողովրդի մէջ՝ մտածկոտ , տխուր :

Հարաթ մը յետոյ , փորձի ժամանակ , ինձ նամակ մը բերին :

Ազամեան բարձրաձայն դերասաններուն ըսաւ .

— Օ՛հ , մեր օրիորդը սկսեր է գրսէն նամակներ ստանալ :

Նամակը բացի , յանձնեցի Մնակեանին .

— Իս գաղտնիքներ չունիմ , խնդրեմ՝ կարգացէք ամենուն առջև :

Մնակեան աթուռի մը վրայ ելլելով , սկսաւ բարձրաձայն կարգալ նամակը : Պարոն մը , յայտնելով ինձ իր սէրը , կը խնդրէր խղճալ իրեն : Եթէ խղճայի , յառաջիկայ ներկայացման , «Փարիզի աղքատներ»ուն մէջ , առաջին անգամ բեմ դուրս եկած ատենս , թաշկինակս ձեռքս պէտք էր ունենայի : Այն ատեն , պարոնը ճակատը պիտի սրբէր իր թաշկինակովը , և ես պիտի տեսնէի թէ ո՛վ էր նամակին հեղինակը : Նամակը ստորագրութիւն չունէր :

Այս որ լսեցին դերասանները , խնդրեցին ինձմէ որ այդպէս վարուիմ :

Ներկայացման ժամանակ , երբ առաջին անգամ բեմ դուրս եկայ , ձեռքս բռնած էի մանչօն : Ազամեան , որ կը կատարէր եղբորս դերը , ծաղիկ գնեց ինձ նուիրելու : Չեռքս մանչօնէն դուրս քաշած միջոցիս , թաշկինակս վար ձգեցի : Եւ երբ գետնէն վեր առի , նայեցայ հասարակութեան : Ինձ հետ նայեցաւ Ազամեան ինչպէս և Մնակեան որ բեմի վրայ էր այդ պահուն՝ Պրանտրօզի դերին մէջ . բայց ոչ ոք երեսը սրբեց :

Իրկորդ օրը , նամակ մը ևս բերին մեր տունը : Այդ անծանօթ պարոնը կը յայտնէր թէ չէր կարողացած երեսը սրբել , որովհետև Ազամեան և Մնակեան ալ ուշադրութիւն էին դարձուցած : Այս անգամ ևս նա իր ցաւերուն վրայ խօսելէ յետոյ , ստորև գրած էր իր անուան սկզբնատառերը , Ա . Ս . Գ :

Ներկայացման երեկոյին , հարցուցի թէ ի՞նչ է այդ պարոնի անունը — իմացայ որ Անտոն Ս . Գարա է : Այժմ գիտէի թէ ո՛վ է նամակ գրողը :

Ստացայ երրորդ նամակ մը , որուն մէջ կար սիրուն մատանի մը , մէջի կողմը գրուած . «Յիշէ՛ զիս» : Այլ ևս չպատասխանել կարելի չէր :

Տարի նամակը , նոյնպէս և մատանին , Մաղաքեանին և ըսի .

— Ետ տուէք պարոնին թէ՛ նամակը և թէ՛ մատանին . զեռ կանուխ է ինձ համար պսակուելու մասին մտածել :

Մաղաքեան, յանձնելով մատանին, յայտնիր է որոշում: Բայց պարոնը, Մաղաքեանի ներկայութեանը, մատանին նուիրեր է ծառային:

Դերասանները արդէն Օրթագիւղի մէջ տարածայներ էին այս զէպքը: Պարոնին ընկերները ծիծաղելով կ'ըսէին.

— Ան քիզ հետ չ'ամուսնանար: Դուն քանի'նրորդ թեկնածուն ես:

Օր մը՝ ուղարկեր էր իր բարեկամներէն մին, խնդրելու համար որ երկու ըոպէ լսեմ զինքը, և եթէ չէի ցանկար իրեն հետ ամուսնանալ, ուղղակի ըսել իրեն, որպէս զի ինքն ալ յոյսը կարէ:

Մայրս ըսաւ. «Թող գայ»: Իսկ ես խնդրեցի որ գայ փողոցի պատուհանին մօտ և զրոէն խօսի: Մեր պատուհաններուն բարձրութիւնը մարդու հասակ էր: Այդպէս ալ եղաւ: Եկաւ կէս-գիշերին պատուհանին առջև, բարեկց զիս և լսեց:

Ես խզեցի լուռութիւնը:

— Պարոն, դուք ուզեր էք ինձ հետ խօսիլ. խնդրեմ, ինչ որ ունիք ըսելու՝ շուտ ըսէք. կարող են անսնել, և լաւ չ'ըլլար:

— Ինչ որ ըսելու եմ՝ գիտես արդէն, ես առանց քիզ չեմ կարող ապրիլ:

— Մեր միութիւնը անկարելի է, քանի որ դուք պապական էք և ես լուսաւորչական: Դուք փնտռեցէք պապական օրիորդներէն ընկեր մը ձեզ համար, ես կ'ամուսնանամ լուսաւորչական երիտասարդի մը հետ:

— Եթէ դուք հրէայ ըլլայիք, հաւատացէք այս վայրկեանիս կ'ընդունէի մօփսիսական կրօնքը: Դուք ինձ ըսէք ձեր վերջին խօսքը: Եթէ ոչ ըլլայ ձեր ըսելիքը, այն ատեն զիտցէք որ իմ մահուանս դատավճիռը կարդացած պիտի ըլլաք:

— Գիտէք որ ես մայր ունիմ, նոյնպէս Մաղաքեանը որ իմ հայրս է ու մենտորս. ուստի պէտք է անոնց ալ խորհուրդ հարցնեմ: Վաղը՝ Մաղաքեանէն կ'իմանաք իմ վերջնական պատասխանս:

Երկրորդ օրը, Մաղաքեան գնաց կրկին յայտնել թէ օրիորդը կը մերժէ ամուսնանալ:

Նպատի ներկայացման ժամանակը հասեր էր: Առաջին նպատար իմս էր: Չեմ յիշեր խաղը ինչ էր: Օրթագիւղի փոքրիկ փայտաշէն

թատրոնին մէջ՝ մէկ աթոռի փոխարէն երկուք էին դրած: Օթեակներու տոմսակներուն վրայ գին չէր նշանակած Մաղաքեան: Այդ իրիկունը, ստացայ շտեբրէն՝ պահարանի մէջ ներփակուած դրամատոմսեր, ամենաքիչը՝ հինգ ոսկինոց. յետոյ, Յակոբ պէյ Պալեանէն յիտուն ոսկի, տիկին Պալեանէն յիտուն ոսկի, Աբրահամ փաշա Երամեանէն յիտուն ոսկի, Սիմոնովիչէն քսանուհինգ ոսկի. վերջապէս, զուտ հասոյթ՝ երեք հարիւր յիտուն ոսկի ստացայ:

Յաջորդ շաբթու նպատար Ազամեանինն էր: Ան ալ ստացաւ նոյնքան:

Պ. Բաշինջաղեան, Ազամեանի մահուան տանամակի առթիւ գրելով, ըսեր էր թէ անիկա՝ առաջին անգամ ըլլալով ձեռքը ունեցաւ հարիւրնոց մը, գլուխը դրաւ սիլինտար ու շտապեց դէպ ի կովկաս: Ո՛չ, պարոնը կը սխալէր: Ազամեան գլուխը սիլինտար դրաւ ո՛չ պոլսեցոց դրամներով ո՛չ կովկասեցոց: Անիկա որդին էր Հերոնիմոս աղային որ Պոլսոյ մէջ բարեկեցիկ դասին կը վերաբերէր: Չեմ գիտեր ինչ ցաւ է դարձեր մեր բոլորիս՝ որ մէկ գրող կամ դերասան մեծ ցոյց տալու համար՝ կ'ուզենք որ ան աղքատ, լքուած, փողոցները մնացած ըլլայ: Ըստ իս՝ Ազամեան անով էր մեծ, որ ունենալով բարեկեցիկ վիճակ, թողուց ու փարեցաւ փշոտ ասպարէզին:

Ներկայացումները վերջացան: Այլ ևս չէի տեսներ Անտոն Գարան սրահին մէջ: Բայց պէտք կը զգայի դայն տեսնելու:

Ես տկարացայ, զիս վերջին ծայր թոյլ զգացի: Կուգար տղթ. Շիշմանեան (Ծերենց) և ուրիշ բժիշկներ, կը հարցնէին թէ ինչ կը զգամ: Ես կը պատասխանէի թէ գլուխս կը ցաւի: Կը ստէի: Սիրտս էր որ կը մաշուէր, բայց չէի ուզեր խոստովանիլ:

Մնակեան օր մը եկաւ ինձ մօտ ու խնդրեց.

— Ընէ՛ ինձի, սիրելի՛ աղջիկս, ինչէն է որ կը մաշուիս: Կ'երզնում որ մէկուն չեմ ըսեր: Այն ատեն ըսի.

— Ամէն իրիկուն, մութ տեղը ման կուգայ Անտոն Գարան. կը լսեմ անոր ոտքի ձայնը, բայց հպարտութիւնս չի ձգեր որ պատուհան ելլելով տեսնեմ զինքը: Իսկ ես պէտք կը զգամ զինքը տեսնելու:

— Լա՛ւ, եթէ կը սիրես, հապա ինչո՞ւ

չես ուզեր ամուսնանալ հետը: Ան պատրաստ է: Խեղճը մինչև առտու փողոցները կը թափառի:

— Ո՛չ, Մնա՛կ, կարծեմ թէ՛ աս ալ կ'անցնի: Ես կը վախնամ ամուսնութենէն: Ո՞վ գիտէ, կարելի է մեր բնութիւնները չյարմարին: Ես լսեր եմ որ անոր ընտանիքը չ'ուզեր զիս: Ես ալ չեմ ցանկար անոնց որդւոյն հետ պսակուիլ:

— Կ'ուզէին ներկայացնել "Հաւատք, Յոյս, Սէր", ըսաւ Մնակեան, բայց տեսնելով որ դուն տկար ես, անոնք յետաձգեցին: Ես կ'ըսեմ թէ կարող ես, այն պայմանով որ փորձերը քու տունդ կատարուին: Այդ իրիկունը, ան անպատճառ թատարն կուգայ, դուն ալ կը տեսնես ու կը հանգստանաս:

— Ի՛նչպէս, Մնա՛կ, միթէ՞ ես կարող եմ ներկայացում տալ:

— Կարող ես, կարող ես, ըսելով հեռացաւ, փորձերն ըրինք մեր տունը: Ներկայացման իրիկունը, չեմ գիտեր ի՛նչպէս գացի թատրոն: Կիսով չափ լեցուն էր: Առաջին արարուածէն՝ արդէն ուժերս սպառուեցան: Ան նստած էր օթեակի մը մէջ՝ բարեկամի մը հետ: Երբ վարագոյրը իջեցուցին, Մնակեանին ըսի.

— Ա՛խ, Մնա՛կ, կարողութիւն չունիմ ոտքի վրայ կանգնելու. ի՛նչպէս պիտի տանիմ մինչև վերջը:

— Ես քեզ կ'ազատեմ գերէդ, ըսաւ:

Ես ոչինչ հասկցայ: Այդ թատրոնին մէջ, լուսաւորութիւնը հասարակ լապտերներով էր: Քուլիսներէն կախուած էին քանի մը լամպարներ: Մնակեան կունակով զարկաւ քուլիսին, լամպարներէն մէկ քանին վար ձգեց, փոքրիկ վէրք մը ստացաւ գլխէն: Տախտակամածին վրայ լամպարին մէկը բռնկեցաւ: Մնակեան ուշաթափ եղաւ, և ներկայացումը խափանուեցաւ:

Ես, զարմացած ու դող ելած, տուն գացի: Չէի կարծեր թէ այդպիսի բան մը կարելի էր ընել:

Այդ տարօրինակ ներկայացումէն յետոյ, զերասանները ցրուեցան, ամէն ոք իր տեղը գնաց, "սէզոն"ը վերջացաւ:

ՀՐԱՉԵԱՅ

(Շարունակելի)

Հ Ա Յ Է Ջ Ե Ր

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Սերն սիրով պիտի, գեմ չպիտի նորով, քեզ ասեմ, ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ, ես լալով ծուռ կուգամ, դուն ծիծաղելով:

Ես'ր՝ վարդ ու մանուշակ դու անուամոտ, ել կամկար փայլէն երբան՝ մեզի մօտ. Դու մարդ ես քապաներ, ձեռվիդ արիւնոտ. քեզ ասեմ, ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ, ես լալով ծուռ (1) կուգամ, դուն ծիծաղելով:

Այսօր զարուհն եկեր, ամիսն է մայիս, Այդ քո ծով աչվերովդ խոլոտ կու նայիս, երբոր նօսա փայլես՝ խելիս կու սանիս. քեզ կ'ասեմ, ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ, ես լալով ծուռ կուգամ, դուն ծիծաղելով (2):

Երեսդ կարմիր է գէս կախու արիւն, Իմացա՞ր, խե եղայ ես ի քո սիրուն. Քանի՞ մէկ կու պանեա դու զիս երեւուն. քեզ ասեմ, ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ, ես լալով ծուռ կուգամ, դուն ծիծաղելով:

Աչվրնիդ քո թուխ է, ընձվիդ է կամար, Երեսդ լոյս կուսայ քան զօսաւ ու դամար. Դու մի՛ մեռցիր, մեղ էս, մեռցիմ քեզ նամար. քեզ ասեմ, ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ, ես լալով ծուռ կուգամ, դուն ծիծաղելով:

Երեսդ լոյս կուսայ գէս ըզարեւին, Խրնձոր ես՝ կու փայլիս ներեւ սերեւին, քեզնէ զաւիլն ինձի մեռցիլ կ'երեւին. քեզ ասեմ՝ ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ, ես լալով ծուռ կուգամ, դուն ծիծաղելով:

Ծոցդ զրգամ բամպակ, ներմակ ինձու է, Պրկլներդ քամար քարքաք ու նու է. Անի կու սիրեմ զքեզ՝ լեզուդ անու է. քեզ ասեմ, ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ, ես լալով ծուռ կուգամ, դուն ծիծաղելով:

1) Չեռագրին մէջ՝ ռուռ:
2) Չեռագրին մէջ այս տողը կը պակսի:

Այվերոյդ կու հանչեմ որ սիրոյ սէր ես .
 Թէ պագ (1) մի այլ չի սառ՝ նայ մեղաց սէր ես ,
 Գիտեմ որ հօր ու մօր՝ ազգերու սէր ես :
 Քեզ ասեմ , ինձ լրտէ՛ , կարմիր ու ներմակ ,
 ես լալով ծուռ կուգամ , դուն ծիծաղելով :

Աչար ես հեղի մեղրոյ չե՛մ ի գար .
 Երբ կանանչիդ վրայ կար իրոյ հագար ,
 Անկաւ խելս ու գրեաց՝ այլ վերայ չի գար :
 Քեզ ասեմ , ինձ լրտէ՛ , կարմիր ու ներմակ ,
 ես լալով ծուռ կուգամ , դուն ծիծաղելով :

Ծառայ լինիմ , եար , քո սեւ սեւ աչվերոյդ .
 Ա՛ն դու զիս ըզգերիս ի մեջ ծրծերոյդ ,
 Գիտեմ որ կու մոռնիմ ես ի քո սիրոյդ .
 Քեզ ասեմ , ինձ լրտէ՛ , կարմիր ու ներմակ ,
 ես լալով ծուռ կուգամ , դուն ծիծաղելով :

Հոգի՛ , դու զե՛ս բարբ լուսին բոյորեալ ,
 Ծամերդ ի յաւոյ ի վեր իջեալ յոյորեալ ,
 Երբոր ի յիս նայիս աչք խոլոռեալ (2),
 Քեզ ասեմ , ինձ լրտէ՛ , կարմիր ու ներմակ ,
 ես լալով ծուռ կուգամ , դուն ծիծաղելով :

Հա՛յ քաճիք , իմ հալրս դեռ չես իմացեր .
 ես այլ , ա՛մ , քո սիրոյն ո՛նց եմ դիմացեր ,
 Քեզնէ ի զաւ մարդոյ հոգի՛ չեմ ասեր .
 Քեզ ասեմ , ինձ լրտէ՛ , կարմիր ու ներմակ ,
 ես լալով ծուռ կուգամ , դուն ծիծաղելով :

Ղարիբուկ եմ եկեր ես ի ձեր գեղին .
 Երեսքս կու քրփեմ ոսիւրոյ հողին ,
 Հիւանդ եմ քո սիրուն , դարձեր եմ դեղին ,
 Քեզ ասեմ , ինձ լրտէ՛ , կարմիր ու ներմակ ,
 ես լալով ծուռ կուգամ , դուն ծիծաղելով :

Ղարիբ Մրկրտիչքն զիս եարն է գովեր .
 Իւր սեւ աչվրներն նրմանի ծովեր ,
 Բարակ միջիլունմ ունիս , եա՛ր , հօնան քեւեր .
 Քեզ ասեմ , ինձ լրտէ՛ , կարմիր ու ներմակ ,
 ես լալով ծուռ կուգամ , դուն ծիծաղելով :

(Էջմիածնայ թիւ 1999 ձեռագիր , Տաղարան)

1) Ձեռագիր՝ Պախ :
 2) Ձեռ. Յոյրուեալ :

ԽՈՐԷՆ ՆԱՐՊԷՅԻ ԱՆՏԻՊ ՏԱՂԵՐ*)

Ս Ի Ր Ի Է՝ Ջ Ի Ս

Սիրե՛ զիս . Աղեճիկ ,
 Իմ կուսա՛ն գեղեցիկ .
 Տո՛ւր ինձ զեք սիրոյն կիս
 Իւ ըզֆեզ սիրեմ ես :

Ձի ըզֆեզ բոյորով
 Կը պաշտեմ ես հոգւով ,
 Եւ զիմ սիրս բովանդակ
 Քեզ ձօնած եմ , հրեշտա՛կ :

Մըսածմունք իմ եւ բախս ,
 Բարբախտունք բոցնուանդ ,
 Պատկանին լուս ֆեզի ,
 Ո՛վ իմ կոյս գեղանի :

Թե՛ ի սիւ քե՛ զիշեր
 Տոջորե զիս քո սէր .
 Եւ կեանքս վշտայեռ
 Դու ես աստղն ու բերեռ :

*) Խորեն Նարպէյ արքեպիսկոպոսի անտիպ տաղերու այս հաւաքածունն առաջին կտորները արդէն հրատարակած ենք Առաջին մէջ (Է. տարի, թիւ 12, Ը. տարի, թիւ 1-2, Թ. տարի, թիւ 1-2) : Այս թիւէն՝ կը վերսկսինք մնացեալ կտորներուն հրատարակումը : Մեծ մասամբ սիրային տաղեր են : Յայտնի է որ Նարպէյ, թէպէտ Ս. կոյսին երկրպագու, Աստղիկին ալ անտարբեր չէ մնացած : Իր Վարդէի հատորը արդէն իսկ փունջ մըն է սիրային գեղծներու՝ որոնք՝ թէև՝ պատշաճութիւնները յարկելու համար քրոջ մը ուղղուած, յայտնապէս կը պարունակեն եղբայրականէն տարբեր և աւելի վրդովիչ զգացում մը . իսկ այս անտիպ տաղերուն մէջ՝ քերթողը իր ներքին յոյզերն անքող պատկերացուցած է : Մեծ մասամբ՝ առանց շատ ինքնատիպ ու խոր ըլլալու, այս տաղերը, քնքուշ ու մաքուր՝ համակ ուժանթիկ՝ զգայնութեամբ համակուած՝ ազոր փափուկ հայերէնով մը գրուած՝ նրբահիւս գաշներգու տողերով սիրուն էջեր են, արժանի՝ հեղինակին քերթողական ստուար ու ալլազան գործին մէկ անկիւնը իրենց որոշ անըզ գրաւելու :

Բո լոկ սեր, ո՛վ Ադին,
Կազմուրե գիւն հոգին.
Ձերդ վարդին բարշաւոս
Տայ կեանք ցոյն յոսուսոս:

Սեաւ աջացդ անուշ յոյս
Թափանջե յայս հոգւոյս.
Եւ երբ ինձ կը ժպտիս,
Ըզնայլմամբք լընուս գիս:

Ա՛յնքան քաղցր է քո ձայն՝
Որ երբ 1) ես լռեմ գայն,
Կարծեմ քե թըրթռի յար
Ձրարքնոյն ի քընար:

Պայծառ դեմքդ, իրան ևնորք,
Ազդեմ սեր ա՛յնքան սուրք,
Որ ով քեզ կը մերձի
Ակնածմամբ կը լըցուի:

Եւ կըրտեր ծայրայեղ՝
Բորբոսմամբ ցանկազեղ,
Ի քո կոյս մի ևայրած
Ձգաստանան երկիրդած:

Ձի յանձեղ յուսարոյր
Սրտուս ա՛յնքան սուրք քոյր,
Որ առ քեզ շիջանին
Յոյզք եւ սոխիք երկրային:

Այլ իմ սիրտ, Ադինե՛,
Ոչ ի սոխի բարախե,
Այլ ի սուրք սեր միայն,
Որ մարմինն չունի ձայն:

Երբ ես քեզ ևրսիմ մոտ,
Բորբոսիմ ի կուրտ,
Այլ զգայունս է անմեղ,
Ձերդ քո սիրտ յուսազեղ:

Ձի սիրտն զքեզ, Ադին,
Ո՛վ իմ կոյս յուսածին,
Որ՛սան սիրտ մանայրին՝
Մի հրեշտակ երկնային:

Ո՛հ, սիրե՛ եւ գիս դու,
Իմ հրեշտակ յուսասու.
Ձի քո սեր լոկ, Ադինե՛,
Ձիս կ'ընե՛ երջանիկ:

Կ Ո Յ Ս Ե

Ի՛նչ կայ յերկրի հիանալի
Քան գեղեցիկ կոյս 1).
Ի՛նչ քան ըզնա կայ շնորհալի
Եւ քաղցր իբր ըզոյս:

Ոչ քանկեա սպիտակարոյր,
Ոչ վարդ գեղսնուշ,
Ձազդեմ սրտի ա՛յնքան հրապոյր՝
Որքան կուսին քուշ:

Յամբիժ ձակասն երբ արկեայ քո
Կ'երեւի յսկումբ,
Կ'ըսես՝ յուսինն է հեշտաշող,
Յամպոց անունակ խումբ 2):

Երբ ցանգրահուն գեւք իւր սրտին
Ձուսով վիտ ի վիտ,
Վարսազեղն է՝ կ'ըսես՝ ոռնին
Ի սիւզ այգաւիտ:

Աջացն հանդեպ իւր յուսազեայ
Շիկնին շողակումբ,
Կ'ըսես՝ մեղի ընդ ևնուն վայր
Ձեն կարող սաստումբ:

Երբ քանայ շուրթն իւր վարդազեղ՝
Ի գոդորիկ բարբառ,
Կ'ըսես՝ տխրակ չունի գեղեղ
Ա՛յնքան ոգեվառ:

1) Վարիանք՝ Քան սիրուն դեխոյս:

2) Վարիանք՝ Յամպոց քեքեւ խումբ, յամպոց ևնորք ի խումբ:

1) Վարիանք՝ Մի՛նչ:

Մեջք նուրբ, ծրղիս յոյր, գոզր իրան
 Երբ տեսնես կուսին,
 Կ'ըսես՝ բնութեան կախ աշխատան
 Փափկութիւն չունին:

Իսկ երբ տեսնես կոյսն հոշանի
 Գեղովն հրաշայից,
 Դոջես՝ Աշխատան հրաւայս չունի
 Հրեշտակն իսկ երկնից 3):

ՆԱՀԱՊԵՏ ԳՈՒԶԱԿԻ ԱՆՏԻՊ ՏԱՂԻԿՆԵՐ *)

Գիշերս ես ի դուրս ելայ իչ մի լուրջ ու իչ
 մի գինով 1) .
 Իմ եարրն 2) ինձ դեմ դիպաւ 3) ծոցն ի լի
 կարմիր խնձորով .
 Ձեռքս սարայ այն սրբի 4) նայ կանչեց սարաւ
 ճրղներով .
 Մանկեփ, ձեր արեւն ասեմ, ամ, 5) չառի ես
 իրմէն ճորով :

Քանի՛ ու քանի՛ անգամ ասեմ. մի՛ երբայ ի սե-
 րն կրնկան,
 Որ նա չաւրե կանուկ ու լընիս ի փողոց
 նրման 6) .

3) Լուսանցիին մեջ հետեւեալ խիզախ վա-
 րիանքը .

Իսկ երբ ինձ պես ունեիր բախտ
 Կոյսն առնուլ ի գիրկ,
 Քաղել համբոյր շուրթէն անախտ,
 Կը մոռնա՛ս զերկինն :

*) Այս չորս տաղիկներ, զոր գտանք էջմիածնայ
 միաբան Տիրայր վարդապետի Օսեփոսի հայերէն ձեռագրեւէ
 քաղած օրինակութեանց մէջ, անտարակուսելի կերպով
 Քուչակեան շարժին կը պատկանին: Կը գտնուին թիւ 7
 ձեռագրին մէջ: Օրինակիչը զանոնք խառնած է ուրիշ սիր-
 երգի մը հետ, որ լեզուով ու ոճով բոլորովին տարբեր է եւ
 չեւ է կապ չունի այս տաղիկեան տաղին հետ. այդ տար-
 բեր սիրերը՝ կը սկսի « Երկինն էր ամպեր գեթիքն ու
 տար » տողով, ունի հինգ տուն, չորսը՝ Քուչակեան տաղ-
 շին տաղիկէն առաջ, հինգերորդը՝ երկրորդէն յետոյ:

էն որ բողբեր զիւր հալալն ու եկել քեզիկ
 երեւան,
 Կարող է ըզքեզ սրեւ ու մեկ ելանք քեզ փո-
 խան :

է՛ իմ կարմրիկ խնձոր, բարակիկ ճուղրդ կը
 կենաս .
 . . . զ 7) տեւել քեզ, արեւեղ մահրում կու
 մընաս 8) .
 Երեսդ ի լուսին արա՛ Սուրբ եաչին՝ որ կար-
 մըրանաս,
 Քաղեն ի սաւհաթ սանին՝ դու ամէն մարդոյ
 պիտեմաս :

Իմ բարձրագընաց 9) լուսին, շատ բարեւ տար
 իմ զօղալին 10) :
 — Բարեւըն ես սանիմ, չեմ գիտել տունըն
 զօղալին :
 — Գօզալն ի վերին բաղին, բարձր պատն ու
 ծառն ի միջին .
 Գընա՛ ու կամար կապե՛, շողն իջեր ի դրախտին
 միջին .
 Ըսկրսի՛ր բարեւըն տու՛ր աչքն բաց զէն իմ
 զօղալին :



- 1) Ձեռ. Մի լուրջ ու իչ գինով;
- 2) Ձեռ. Իմ այրն ;
- 3) Ձեռ. Դիպօ :
- 4) Թեւեա՛ Ձայն սրբի ?
- 5) Ձեռ. Կամ :
- 6) Ձեռ. Փողոց նման :
- 7) Չորս վանկ՝ պակաս :
- 8) Ձեռ. Կու զընաս ;
- 9) Ձեռագիր՝ Բարձրայ զընաց ;
- 10) Ձեռ. Գաղալին :

Հ Ա Յ Ք Ա Ն Գ Ս Կ Ա Գ Ո Ր Ծ Ո Խ Թ Ի Ի Ն



Քանդակագործական հասակոսոր. Բագարանէն քերուած
(Եջմաշույ Բանդարու)

Ծ Ե Ր Կ Ո Ո Ի Ն Կ Ը

Գետափին վրայ, կրօնունկներու շարքին մէջ,
Ան իր գլուխը ծըռեց .
Դըրաւ կըտուցը թեւին սակ, և ձեր, խոնջ,
Նուազկոտ բիբով ըսպասեց
Իր վերջին սեւ վայրկեանին .
Երբ ընկերները ալ մեկնել ուղեցին

Ան չըկըրցաւ անոնց թուիչքին միանալ .
Հազիւ բացաւ աչքն ու դիտեց օդին մէջ
հրմխակին չուն՝ որ կ'երթար
Երգերէն վար կըրկուալով
Յանձնուած լուրեր, բարեւներ,
Նւ արցունքներ պանդուխտի:

Ա՛Տ, խեղճ թըռչուն. արդ դալկահար գրկին
մէջ

Աշնանային ցուրտ լըռութեան՝ կը մեռնի :
 Փո՛ւճ է այլեւս երազել
 Գարուն մ'՛հեռուն , գաղջ հոսանքները օդին
 Ճախրող թեւին տակ զօրեղ ,
 Կամ սրունքներով ջրեբաց
 Անցքը պաղուկ առուակներէ . մեծ վըզին
 Մըխըրճումները շամբերուն մէջ կանանջ
 Փո՛ւճ է այլեւս երազել :

Թեւերը հայ կըռունկին
 Ա՛լ յոգնած են ճամբորդելէ : Ան եղաւ
 Հաւատարիմ՝ սըրտաճրվիկ պաշտօնին .
 Փոխադրեց շա՛տ արցունքներ .
 Ո՛րչափ հարօսեր իրենց սըրտերն հըրատապ
 Իր քընքշական փետուրներուն մէջ գըրին ,
 Ո՛րչափ մայրեր և որդիներ բաժնըւած
 Անոր թեւերը բեռցուցին համբոյրով . . .

Արդ սարսուռով մ'օրհասի
 Ան վըրայէն կը թօթուէ
 Մեծ վիշտն Ազգի մը նըժգեհ ,
 Ուխտեր յանձնուած , լացեր գաղտ
 Նըշանածի մ'որ տեսաւ ա՛լ իր յետին
 Վարդի թօշնումը գեռ բընա՛ւ Հճամբուրուած .
 Տըրտում օրհնէնք մը մամու ,
 Սէրեր , իղձեր , կարօտներ
 Ա՛լ վըրայէն կը թօթուէ :
 Եւ գետափին գորշապատ
 Ամայութեան մէջ բանալով վերջին հեղ
 Յոգնած թուիչներն ուղղաբերձ՝
 Հայ բլուրներուն , գիւղերուն վրայ կիսաւեր ,
 Կըրկըռոցովն օրհասի
 Գաղթումը ան կ'անիծէ՛ .
 Եւ կ'իյնայ , լուռ : — Խիճերուն վրայ գետափին
 Կ'որոշէ իր գերեզմանն ,
 Ու մըխելով կըտուցն իր
 Քարի մը տակ , բընակարան դօդօշի ,
 Քարը ձըգած վիզն իր ճապուկ ,
 Ալիքներուն երգին մէջ
 Դողով մը վեհ կը մեռնի . . .

Հոն օձ մ'որ լուռ , երկա՛ր ատեն , կը դիտէր
 Այդ ձըգնածամն ակնկառոց բիբերով՝
 Գետեզրէն վեր կը սողայ
 Ու վրէժէ մ'հին օրերու ,
 Վատ ոստուկով մ'հապըշտապ՝
 Անոր մեռած պարանոցին կ'ոլորուի . . .

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ



ՉՐԱՂԱՆԻ ՊԱԼԱՏԸ

Տեսա՛ր թընաւ գայն հրաշակերս՝
 Որ ըսպիտակ կ'անդրադառնայ
 Ծովուն յայիս կապուսակերկ՝
 Որ կը փշրին յափուկն ևնրա .

Որ Բարրարս եւ Մարեարիս ,
 Եւ ծովագեղ Պրոպոնդիսեակե՛ր՝
 Յըղեն ևնո՛ք կըձեայ յերիկն՝
 Որ կը դառնան հոս ապարակե՛ր :

Հարիւրաւոր դարուց շիրմէն
 Արթըննալով ոգիք ազգաց՝
 Իրենց գանձերը քափեր են
 Մէջ յուսարձակ այն սըրսնաց ,

Յորոց քաւիղ կանարակապ
 Լայն քեւերով կը բըռչըրին
 Մըսածուքիւնք գընորակակե՛ր
 Եւ արխայից ստուերք անագին .

Ասորեսական եւ Բաբելոն՝
 Սիւնեացիկն , Արուսականայն ,
 Եգիպտականն՝ Հընդիկն ըզգօն
 Եւ ևագելին Խսարակակն

Արեւելից մեծ Սուրբակին
 Ընծայ քերեր են բիւրաւոր .
 Հոն ձեռն ի ծեօս ևայի ծովին
 Եւ մըսածի արխայն հըզօր :

Պասսաւալիւր ևնո՛ք միկն ի կայն
 Նորս շուփին սակ ընկղլեալ՝
 Այն տեղեկէն յակնիոլոս կան՝
 Արեւելեան անուրջ կարծեալ :

Քան գՅոնիակակն եւ Դորացի ,
 Քան ըզԴորաց ձեւ ևնրակնայն ,
 Պարսն Արաքիկն հոն կը կըրցի ,
 Հայ հանձարոյ մը ի հրանակն :

Որոտակիւս յուսակցից մօս
 Ի վեր սրակակն սիւնք մարմարոյ
 Կը մոլորին արեւուն շողք
 Բիւր գարդերու մէջ մանուածոյ :

Կապուտ ծովուն շերկից մեջտեղ
Աննահախան ժրպիտ մ'ի աչն ,
Եւ անօրով ե երկնագեղ
Կասիլացոյն իսկ Աշխատարայն :

Եւ աստեղաց ի յոյս աղօս'
Երբ ուրուագիծն իւր օղեղեն
Կը նըկարուի երկնից յոյրոս'
Շուրջ պարփակեալ անստններեն ,

Կարծես այդ վիճի հոգի առնուն
Եւ ի յուրեան գիշերային'
Դաշնակաւոր երգ կը դառնան
Ձոր երագոտ լրահ հոգին :

Տեսա՛ր բընաւ գայն հրաշակեալ
Որ ըսպիտակ կ'անդրադառնայ
Ծովուն յայնս կապուտակերկ
Որ կը փշրիկն ափանցը վրայ :

Ո՛չ կիճ ե այդ, ո՛չ հող, ո՛չ վիճ,
Այլ մեծագոր Հայ հաւնճարին
Մըսածուքիւն մի ե վրսեմ'
Հոն սարսուկիք հազած մարմին :

ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶԵԱՆ

ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶԵԱՆ

Թրքահայոց մտաւոր ու ազգային կեանքին
ամենէն աղւոր ու լուսաւոր շրջանին է՛ն
պաշտելի դէմքերէն մէկն էր Թովմաս Թերզեան,
զոր անա մահը եկաւ խլեց մինէ :

Այն երջանիկ օրերուն , եւրոպական քա-
ղաքականութեան ինչպէս քաղաքակրթութեան
օսմանեան մայրաքաղաքին մէջ տիրական
Թափանցումին հետեւանքով , Մէճիտ ու Ազիզ
բարեհամբոյր ու հայասէր Սուլթաններուն հո-
վանուոյն տակ , Թուրքիոյ Հայութիւնը ուժեղ
ու խանդոտ Թափով մը Թօթուելով բիրտ
բռնապետութեան մը խաւարին մէջ դարերէ
ի վեր իր վրայ ծանրացող բարոյական թմբու-
թիւնը , եւ նորածագ արեւուն քաղցր ու կազ-
դուրիչ լոյսին մէջ նորոգելով իր հինաւուրց

ուժերը՝ յառաջ բերաւ մտաւոր , գեղարուես-
տական , ազգային ամենէն ճոխ ու մաքուր
փթթինազարդութիւնը , զոր մենք ունեցած
ըլլանք Ե. դարու սկի Օրերէն ի վեր :

Այդ պահուն է որ կը հիմնուի յառաջդի-
մասէր արի մամուլ մը . կրթական գործը մեծ
թռիչ կը ստանայ . հայկական թատրոնն ու
լսարան կը ստեղծուի . սանմանադրական կազ-
մակերպութիւն մը կը յաջորդէ ամերայակա-
նին . « սալօն » ներ երեւան կուգան , ուր
հայկական կեանքը կը նրբանայ , ուր հայերէն
լեզուն կը յղկուի . եւրոպացի մեծ գրագէտ-
ներուն հրաշակերաները հայ լեզուով կը խօ-
սին մեր ժողովրդին , կը լայնցնեն , կը լու-
սաւորեն անոր սրտին ու մտքին հորիզոնը .
Եւրոպայի մէջ այդ շրջանին տիրապետող ու-
մանթիկ ոգին , խանդավառ , ազնիւ , իտէալա-
պաշտ , սաւառնաթեւ , հաւատալից , կուգայ
մեր մէջ ալ տարածուիլ , կ'արթնցնէ ու կը
բեղմնաւորէ մեր ցեղին հոգեկան թաքուն ու-
ժերը . Թուրք բեժիմը , ինչքան ալ դեռ
իսկութեամբ բռնապետական ու անկարգ ,
Հայուն դէմ սիստեմական հալածանք չի ցցեր .
մայրաքաղաքին ու ծովեզերեայ մեծ քաղաք-
ներուն մէջ մանաւանդ , գրեթէ բացարձակ
ազատութիւն կը վայելէ Հայը՝ տնտեսապէս ու
մտաւորապէս զարգանալու . դեռ գրաքննու-
թիւնը իր խեղդիչ ճանկերը չէ սեղմած հայ
մտքին շուրջ . ու կոտորածին ուրուականը
դեռ չէ ցցուած Հայոց գլխուն . արհաւիրքի ,
ամօթի , խեղճութեան , ցաւի , յուսահատու-
թեան օրերը դեռ չեն բերած իրենց խաւարը
հայ երկնքին մէջ , ու ոչ մէկուն մտքին իսկ
կը ներկայանան իբր կարելիութիւններ , չեն
վրդովեր , չեն կասեցներ , չեն խանգարեր հայ
մտքին խոյանքը դէպ ի աղւոր իտէալները . . .
ու հաւատքով , աւիւնով լեցուն , Հայը կը
գործէ , կը ստեղծէ , կ'երգէ . անմահ արուես-
տագէտներ կը յառնեն , որ ցեղին տաղանդը
փառասանած կ'ապացուցանեն՝ բեմին վրայ ,
Պոլիսը զարգարող հոյակապ շէնքերու մէջ ,
երաժտութեան մէջ , եւ մանաւանդ բանաս-
տեղծութեան մէջ . քերթողական համաստե-
ղութիւնը որ կը յայտնուի այդ պահուն ,
ամենէն ճոխը , հզօրն ու վսեմն է որ երբեք չու-
ղացած ըլլայ Հայոց մէջ . Բագրատունի , Հիւր-

միւզ, Ալիշան, Նարպէյ, Պէշիկթաշեան, Հէ-
քիմեան, Աճեմեան, Պետրոս Դուրեան ասու-
ղերն էին այդ բոլորն. եւ այդպիսի բոլոր մը
պատիւ կարող է բերել ամենաքաղաքակիրթ
ազգերու իսկ, եւ արդար հպարտութեամբ մը
կարող է մեզ լեցնել՝ երբ մանուանդ կը խոր-
հինք որ միեւնոյն ատեն, թրքահայ արձակին
մէջ կ'երեւային Միսաքեանի, Մերենցի, Գրի-
գոր Օտեանի, Մամուրեանի, Պարոնեանի պէս
վարպետներ, եւ՝ անդին՝ արեւելեան հայու-
թեան մէջ՝ Արտվեանէն յետոյ՝ Նալւանդեանի,
Նազարեանի, Շահազիզի, Բամառ-Բաթիպայի,
Պոռչեանցի, Աղայեանի, Բաֆֆիի նման գրա-
կան մեծ դէմքեր :

Այդ երանելի շրջանին ամենէն թանկա-
գին երեւոյթներէն, այդ շքեղ բոլորն ամենէն
պայծառ աստղերէն մէկն էր Թերզեան : Իր
տեղը՝ Պէշիկթաշեանին ու Դուրեանին միջեւ
է : Մեր երեք ամենաքնքուշ, ամենաքաղցր
քնարերգակներն են ատոնք : Ու՝ ներքն ալ,
թէպէտ՝ գեղեցկագիտութեան ու խառնուածքի
որոշ տարբերութիւններ ունենան, անով մա-
նուանդ կ'եղբայրանան, որ Պոլիս քաղաքին
արբեցուցիչ գեղեցկութեանը ամենէն հարա-
զատ թարգմաններն են. — ինչպէս՝ Պարոն-
եան մեծագոյն արտայայտիչն է Պոլսոյ ինքնա-
յատուկ համեղ սրամտութեան :

Պոլիսը՝ զոր մարդկային ապուշութիւնն
ու վայրագութիւնը՝ ընկերական տեսակէտով
անէծքի ու փտութեան ոստանն են դարձու-
ցած, ամենէն դիւթական հրաշակերան է զոր
բնութեան սքանչելարուեստ ձեռքերը կերտած
ըլլան մեր երկրագունդին վրայ : Վոսփորն ու
ու Մարմարան՝ Աստուծոյ Իլիականն ու Ուրի-
սականն են : Լոյսը որ գարնան առտունները
կը խնդայ Պոլսոյ երկնքին մէջ, շուշանթոյր
բարակ մշուշները որ Վոսփորի ջրերուն ձա-
ձանշարձակ շափելալային վրայ կը թրթռան,
քաղցրութիւնը զեփուռներուն որ մեղրանուշ
օդի մը մէջ կ'երգեն անպատում երգերը գեր-
երկրային երանութեան մը, ու ծառապսակ
բլուրներուն շնորհագեղ կատարները, որ կա-
պոյտին վրայ կը տողեն իրենց ներգաշնակ
տաղաշարքը, եւ լուսնակ գիշերներուն դիցա-
կան հարսնիքը որ խաւարը կը վարդալուսէ,
ու Ոսկեղջիւրին հինաուրց մեղաճաղձութեան

վերեւ՝ մայրամուտներուն փառքը եղերական,
ու այն գրախտակերպ երազը մարմնացած՝ որ
կղզիներն են, այս բոլորը, եւ դեռ ա՛յնքան
հրապոյրներ, մոգութիւններ, փպիտներ, տե-
սիլներ, գանձեր, յաղթութիւններ, նուա-
զամներ, արբեցութիւններ որ հոն կը պար-
զուին, կը փութին, կը ախրեն, մարդկային
արուեստը անկարող է զանոնք լրիւ արտա-
յայտելու. միայն՝ այդ բոլորին քաղցրութե-
նէն, մաքրութենէն, վեհութենէն ու ճո-
խութենէն՝ նշոյլ մը ինկած, թափած, տարա-
ծուած է՝ աւելի՛ քան ո՛ր եւ է քերթողի՝ մեր
երեք քնարերգակներուն մէջ. եւ կը լուսաւորէ,
կը զովացնէ, կը թեւաւորէ անոնց տաղերուն
ներշնչումն ու ձեւը : Պէշիկթաշեան կը յի-
շեցնէ՝ մասնաւորապէս՝ կղզիները, եւ անոնց
խաղաղ, վճիտ, կատարեալ գեղեցկութիւնը,
գարնանավերջի գիշերներուն՝ երբ ամէն բան,
աստուածութիւնով հրաշագեատուած, կ'ան-
նիւթանայ հոն. կը պայծառակերպի ու
կ'երգէ, ու կ'երգէ « Ջնջ է նշոյլ լուսնակն որ
ձիթաչ յերեւը ջուրց » . եւ ուր ամբան օրերուն
պերճ արեւը՝ ոսկեհուռ ծիրանիի կը փո-
խարկէ շուրջը գաշնաթաւալ վէտվէտող Մար-
մարան, ու վեհ զուարթութիւն մը կը կախէ՝
եղեւիններուն մեյամաղձիկ կանանչին մէջ :

Հուր հեր աբփոյն կը ծաւալի
ի դաւս յարօս գեղաժրպիս,
Ծովն ի յերկինքս կը գմայի,
Երկինն ի ծով ձիժաղախիս :

Ու աշնան քաղցրօրէն ու մեծավայելչօ-
րէն ու խաղաղօրէն տրտում իրիկուններուն՝
ծովուն լայն կշռաւոր ծփանքները որ կուգան
անոնց վրայ հառաչել ցաւ մը անհուն ու
լուսաւոր եւ մարիլ երգելով, կ'արձագան-
գուին քերթողին տողերուն քաղցրածաւալ
ներգաշնակութեանը մէջ :

Ընթացայց մեծաւոր ըզնանապարհն ամայութեան . . .

Դուրեան իր Սկիւտարին ցոյցաբեւեմ է :
Իր բանաստեղծութիւնը՝ շեշտ ու գոյն կար-
ծես փոխ առած է այդ դիւթական բարձունքին
տեսիլներէն. անոր մէջ կը զգացուի հոծ ու
լուռ տրտմութիւնը նոճիներուն որ հոն կը
խոկան՝ կարծես տառապելով ծայրայեղ գե-
ղեցկութենէն Վոսփորի կապոյտին :

Ո՞ն , կը յիշես՝ս . Չամբնայի
Սարը նրսած լուռ միխայիճ
Ուր մեզի ետք սային նոնիք
Սեւ հովանոց վեսահաւի :

Կսրամայոյի կապոյս գօտոյն ,
Վոսփորի ծուփը դիտէիճ ,
Ուսկից եւ մերք զանամայ երկիճ .
Ո՞ ախորժներ լուռ մեր հոգւոյն :
... Մեր հոգիքը նոնիներու
Թուխ քիթներ՝ էին սրտու . . .

Անոր մէջ կը ցլանան գերեզմաննոցները
որ կը փռուին՝ տուններուն մօտիկ , եւ

Երբ աստղայոց գիշեր է գով,
Իրենց ծառերուն սօսափիւնովը գիշերին մէջ
մահուան խորուրդը կը թուին պատմել ,

Գերեզմանոցին ցուրտ ծառեր
Կը փրփսսան իրարու մօտ . . .

ու անպատմելի վերջալոյսները որ կը բռնկին
հեռուէն՝ Սթամպուլի վերեւ՝ քաղաքը այլա-
փոխելով Անուրջի Ոստանի մը , ու արշալոյս-
ները որ Վոսփորեան երկիրն քը հրեզէն Դրաս-
տի մը կը փոխարկեն .

Շաղի շողի ծամք էին
Վարդից հրդեհ կար յերկին .
Փոխան ամպոց հուր հիւսփի
Տեղար մարգրիս ու ոսկի :

Թերզեան կ'ոգէ վերին Վոսփորը , թարմ
ու զուարթ եւ իր գերագոյն գեղեցկութեանը
մէջ ինքն իսկ իրմով գինով , իր ջրերուն
գերբնական կապոյտովը , իր բլուրներուն
սիրահրաւէր թեւարացումներովը , իր վրայ
իջնող լոյսին օրհնուած քաղցրութեամբը , իր
գիշերներուն անլուր լուսնահոսութեամբը .

Ա՞ն , գերեզմանս այնտեղ բլլար
Ուր Վոսփորի դարեանդներ ,
Սաղարքագեղ եւ միտս դալար ,
Թանան յալիս գիւրեանց պահեր :

Եւ այն ծառի ծառի այեակի
Գային փերի շրմիս վրայ ,
Եւ հոն նոնեաց մէջէն կաթեր
ձերմակ մահկին լոյս արծաթեայ . . .

* * *

Թերզեան նուազ դասականօրէն կատար-
եալ է քան Պէշիկթաշլեանը , ու նուազ ջղուտ
քան Դուրեանը , բայց աւելի այլազան է քան

այդ երկուքը , աւելի ճօխ , աւելի լեցուն՝
գաղափարով , աւելի հրապուրիչ՝ իրեն յատուկ
աննման քնքշութեամբ . Իր քերթուածները
երբեք հատորով հրատարակած չըլլալով , քի-
չերը ծանօթ են իր բանաստեղծական գործին
ամբողջական անգին արժէքին : Հայոց բնդ-
հանրութեան մէջ թերզեան աւելի ծանօթ ու
ժողովրդական է դարձած իր թատերադու-
թիւններով քան բանաստեղծութիւններով .
այդ թատերադութիւնները , նմանողական գոր-
ծեր , համեմատութեան իսկ չեն կրնար դրուել՝
ըստ իս՝ իր քերթուածներուն հետ . Թերզեանի
փառքը իր քերթուածներուն մէջ է . Կար-
ծուածէն աւելի բաղմամբիւ են անոնք , մա-
սամբ՝ հին ու նոր թերթերու ու հանդէսներու
մէջ ցրուած , եւ մասամբ՝ անտիպ : Գերազան-
ցօրէն փափուկ , նուրբ եւ ազնիւ զգայնու-
թեամբ մ'օժտուած , ամենէն հարուստ ու
գիտակից գրական ու գեղարուեստական մշակ-
մամբ մը մարդուած , այդ չքնաղ հոգին՝
ժպտուն գորովի , բարձր ու մաքուր լուսա-
տեսութեան , ջինջ ոգեպաշտութեան , ան-
գրդուելի հաւատքի , լուսաւոր իտէալակա-
նութեան , ազնուական գեղասիրութեան ան-
հուն ու անթառամ երգ մը հնչեցուցած է , որ
պիտի մնայ մեր գրականութեան ու լեզուին
գերազոյն հարստութիւններէն մին : Իր վեր-
ջին քերթուածը , հոյակապ տաղ մը է Մահ ,
զոր Բաշմաշկո հրատարակեց , կ'ամփոփէր կար-
ծես այդ հատընտիր հոգւոյն ամբողջ լուսա-
տարր գեղեցկութիւնն ու իր արուեստին
բովանդակ հրապոյրը թեւաւոր , միեւնոյն
ատեն ըլլալով՝ աւանդ , իր հրաժեշտի երգը ,
իւր իսկական վերջին խօսքը կեանքին , ու իր
ողջոյնը Մահուան , զոր թերեւս ինքն իսկ
մօտ կը զգար եւ որուն կը նայէր այնքան
արի , վստահ ու ժպտուն նայուածքով մը .

... Հիմայ պարզէ՛ ոսկեթեւեղ անհունիճ մէջ ,
Հոգի՛ անմահ , շնչէ՛ ազատ եւ աներկիւղ ,
Արեւներու մէջէն անցիր որ երփնալոյս
Անեղահրաւ ամբառի մէջ կ'երթան ի լիւղ :

Տե՛ս , ասդերէն կ'իջեն բոլոր լուսամարմին
Արհամարհեալ յերկէ՛ հանճարք բոխանչելի ,
ձբւարսուքեան ցանցակներ , եւ Տեսանող ,
Եւ գիտութեան ինքնանրէր զոնք փաշարի :

Եւ սուրբ Բերթողն՝ հանդերձելոց գուռակ՝ Կ երգիչ,
Աւետարան կորստաբեր խոնջ մարդկութեան,
Եւ աղջիկն հէ՛ք գոր պատեցին ու վրան բրբին
Եւ մաշեցաւ նա ծաղր ի շուրթն եւ սիրտ յարեան:

Եւ անարատ հուսաւորն իւր բսփոփած
Թրուաւ ներուն արցունքներով աստղապրակ,
Եւ այն որ լուռ տառապեցաւ՝ եւ յոյս սրբին
Յարդարութիւնն անմահ մրնաց անայլայլակ:

Սուրբ լուսեամբ՝ որ իբրեւ ուղիս մի շողերու
Ասոց յաստեղէ վերելակէ դէպ յաղբերն իւր՝
Մեծ ովկէանն երջանկութեան եւ լոյսերու
Ոյր բիւր տարագրէ կր ծաւալին համայնասփիւռ:

Մահուան սեւ փոխ ի վուրս՝ հանգարտ եւ պերճաբար
Մրսիւ՝ հոգի՝՝ շիրմին զրուկն: Այլ ցաւերէդ
Ազատեցար:—Լոյս գունդերուն մէջէն սլացիր,
Մէկ արփենի շողով պսակեալ՝ յղծից փոց կէտ:

Թերզեանի բանաստեղծական գործին վեր-
լուծումն ընել չէ որ կը յաւակնիմ հաս:
Պաշտումի եւ երախտագիտութեան քանի մը
խօսքեր են միայն, զոր կը թափնս ամենա-
սիրելի վարպետիս գերեզմանին ոտքը, որ-
դիական ցաւի մը արցունքներուն հետ: Այդ
վերլուծումը կարելի պիտի ըլլայ միայն՝ երբ
հրատարակուի ամբողջական հաւաքածուն
Թերզեանի քերթուածներուն: Ու կը յուսամ
որ իր որդիներուն՝ գործին ու սքանչացողնե-
րու խնամքը պիտի փութացնեն այդ հրատա-
րակումը, որուն անհամբեր կը սպասէ Հայու-
թիւնը:

* * *

Ուսուցիչը որ եղաւ Թերզեան՝ այնքան
մեծ էր որքան բանաստեղծը: Այն գերը զոր
Պէշիկթաշլիան կատարեց՝ ընտանիքներու մէջ,
Թերզեան զայն՝ բազմաթիւ տարիներ՝ կատա-
րած է մեր ազգային վարժարաններուն մէջ՝
նոյնքան ձեռնհասութեամբ, եւ աւելի լայն
արդիւնաւորութեամբ: Մէկէ աւելի հայ սե-
րունդներ իրմէ սորված են սիրել, ըմբռնել,
ճաշակել գեղարուեստն ու գրականութիւնը:
Ու ոչ միայն Հայերը, այլ Պոլսոյ բոլոր ցե-
ղերը օգտուած են այդ ուսուցչէն. պետական
վարժարաններուն, ուր Ֆրանսերէն լեզուն
ու գրականութիւնը կ'ուսուցանէր, ամենէն
սիրուած դասատուներէն մէկն է եղած. թուրք
երիտասարդութիւնը 4-5 տարի առաջ, խորին
յարգանքի ու երախտագիտութեան ցոյց մը
ըջաւ իրեն՝ տօնելով անոր ուսուցչութեան

երեսնամեակը: Թրքահայ արուեստագէտներէն,
գրագէտներէն շատերը իր աշակերտներն եղած
են: Ես ինքս՝ իրեն շատ բան կը պարտիմ:
Երբեք պիտի չմոռնամ իր դասերը կեդրոնա-
կանին մէջ: «Դաս» եր չէին անոնք (Թերզ-
եան «փրոֆէսոր» ի ծանր ու յաւակնոտ տի-
պարը չէր): արուեստագէտի մը խօսուրու-
տուքներն էին. կ'առնէր եւրոպացի մեծ բա-
նաստեղծի էջ մը ու կը կարդար, ու կը
մեկնէր, կ'ապրէր զայն, ու մեր հոգւոյն ու
մտքին մէջ թափանցել կուտար անոր գեղեց-
կութիւնը. ուսուցչութիւնէ վեր բան մըն էր
իւր ըրածը. մեծ բանաստեղծ մըն էր որ մեծ
բանաստեղծներու հոգին մեզի կը բանար:
Ա՛խ, անպատմելի գեղեցկութիւնը զոր իր
դէմքը՝ արդէն այնքան գեղեցիկ՝ կը զգենուր
այդ պահերուն. գանգուր մագերով պսակուած
լայն ճակատը աւելի կը լայննար, դէմքին
գծերը կ'այլափոխուէին, կը լուսավառէին,
ներքին անճառ բերկրութիւնով մը կը ծաղ-
կէին. աչքերը՝ Գեղեցկին գինովութեամբը
ճաճանչաւորուած, ամբողջ դասարանը ընդ-
գրկող սաւառնագին նայուածքի մը մէջ տա-
րածուած, կը խօսէր, մինչ իր ժեսթները՝ այն
նուրբ, բարեշնորհ մարդու անմասն ժեսթերը
պարզ, փափուկ ու գողտր, կը ստորագծէին
իր խանդոտ, սրամիտ, ընտանի ու խորա-
թափանց, հմայող, համոզող ու սնուցանող
խօսքը: Մեր ամենէն քիչ գրասէր ընկերներն
իսկ «բանուած» կը զգային զիրենք այդ
հրապոյրէն, արբշիտ՝ մտիկ կ'ընէին, ու կը
սորվէին սիրել գրականութիւնը: Ու գրակա-
նութիւնէն զատ, ինքը գիտէր նաեւ սորվե-
ցնել կեանքի գեղարուեստը, քաղաքավարու-
թիւնը, որուն պակասը տեսակ մը ազգային
ախտ է մեզի համար, եւ որուն անհրաժեշ-
տութիւնը զգացնող ամենէն ազդեցիկ ուսու-
ցիչն եղած է ինքը մեր մէջ: Այո՛, ես շատ
բան պարտական եմ իրեն: Բայ ի կեդրոնա-
կանի դասերէն, ինքը՝ հայրական համակրու-
թեամբ մը՝ զոր կեանքիս մեծագոյն պատիւ-
ներէն մին կը համարիմ, իմ առաջին քայլե-
րուս մէջ զիս քաջալերած, թերութիւններս
ուղղած, ինձի առաջնորդ ու զօրավիգ է եղած:
Իբր բանաստեղծ՝ զինքը միշտ պաշտած եմ,
բայց բանաստեղծը չէ որ զիս առաջնորդած է.

իր քերթողական արուեստը , իր ուղղութիւնն ու աշխարհայեացքը տարբեր էին անոնցմէ զոր ինծի տրուեցաւ ունենալ . բայց իր վարպետ արուեստագէտի խրատները ,, իր անթերի ճաշակով զբաղէտի ցուցմունքները , իր սէրը , իր խրախուսանքը , եւ մանաւանդ իր փափուկ ու ինծի այնքան սիրելի հեգնութիւնը՝ նորընծայ եռանդի մը չափազանցութիւններուն ու կաղուճներուն հանդէպ՝ ինծի բարերար եղած են . եւ ես զինքը միշտ համարած եմ եւ այսօր իր գերեզմանին առջեւ կը համարիմ նորէն իր խոնարհ ու շնորհապարտ աշակերտը :

* * *

Ու Հայ չէր արիւնով : Գէթ այսպէս ըսին : Մայրը Յոյն , հայրը Իտալացի : Մանուկ հասակի մէջ՝ ուղարկուած Վենետիկ՝ Ռափայէլեան վարժարանը , Մխիթարեան մթնոլորտին մէջ , մասնաւորապէս իր գլխաւոր ուսուցչին Ալիշանին հրացայտ շունչին տակ , կը դառնայ Հայ : Ինծի քիչ մը դժուար կը թուի ասիկա ամբողջապէս ճշմարիտ ընդունիլ : Ես զինքը միշտ « Հայ » եմ ճանչցած , խորապէս Հայ , սրտով , մտքով , կեանքով Հայ : Պոլսոյ մէջ կան « լրվանիթէն » ներ , որոնք խալաքի կամ Քրէնի կը կոչուին , բայց շատ մը ցեղերու խառնուրդ են . եւ յաճախ լատինացած Հայերու զաւկրներ : Թերզեանի հայրը ատոնցմէ եղած ըլլալու էր : Հայ արիւնի բաժին մը իր մէջ անհրաժեշտ է նսթադրել՝ իր անձն ու գործը բացատրելու համար : Յունական արիւնը ու եւրոպական դաստիարակութիւնը իր մէջ մեծապէս զգալի էին անշուշտ , բայց կար իր մէջ խորունկ բան մը , որ Հայ էր , եւ աս՝ չի ստացուիր , ժառանգական է : Ի՞նչպէս կը սիրէր հայ լեզուն , ի՞նչ գործով , ի՞նչ պաշտումով , ի՞նչ սքանչացմամբ . « Ես ալ չեմ գիտեր Հայ եմ թէ ոչ , կ'ըսէր օր մը , բայց հայերէնը այնքան աղւոր է , զայն այնքան կը սիրեմ , որ անով զիս Հայ կը զգամ : » Եւ իսկական Հայու շնչոյ մը չէ՞ որ այնքան հայաշունչ հպարտութեամբ կը փառարանէր « հայ հանճարը » Զբաղման պատճառ զմայլելի քերթուածին մէջ :

Օր պիտի գայ որ Պոլսոյ գեղեցիկութիւնը պղծող մարդկեղէն աղբը պիտի սրբուի , բնա-

ջինջ ըլլայ՝ լաւագոյն մարդոց կամքին տակ : Կեանք մը պիտի ծաղկի հոն՝ ազատ ու ազնիւ , լուսաւոր ու ներդաշնակ՝ ինչպէս բնութիւնը որ հոն կը ճառագայթէ : Այն ատեն , այդ քաղաքին բոլոր գեղասէրները , թափօր կազմած , պիտի երթան կանգնել ի պատիւ Պոլսոյ այդ աննման Այտին՝ Վոսփօրի « սաղարթագեղ ու միշտ դալար » ավերուն վրայ , երկիւղած յարգանքի ճերմակ յիշատատակարան մը՝ հայ հանճարին մատներովը կերտուած :

Ա. ԶՕԳԱՆԵԱՆ

ԵՄՄԱՒՈՒՍԻ ՃԱՄՐՈՂՆԵՐԸ *)



Խոնջ ու սքրսում կ'երթան երկուքն Եմմաուս .
Անցիմաղիր վիճ մը գիրեն կը քանի . . .
Ո՛րքան յոյսեր իր հետ քաղած էր Յիսուս ,
Ու այ՛ մը դեռ չէր տեսած զինք կենդանի :

Ճամբուն վրայ արեւու գո՛ւնքը նրաղ՝
Որ անպայտիկ գոգն անդունդին կ'իջնէր ցած՝
Կանգ առած մերթ՝ կը դիտէին մրսազբաղ ,
Սքրսանդիկ խոկումներով ծանրացած :

— Ո՛վ Կղեովպա , Անոր արե՛ւն ալ իջաւ .
Հրաւանքան խորհուրդներու խորն ի վար ,
Ու անթրուկ իբրեւ ատուպ մը շիջաւ .
Կենդանութեան կայծերու հնոցն այն հրավառ : —

Քիչ մ'ալ յետոյ տրապետոյ խաւարին
Թանձր լեզուն պիտի պատմէր թէ ի՞նչպէս
Մեծ Հաւաստի արեւմուտն ալ խորին
Պիտի բերէր հոգիներու մութն անտա :

Խոնջ ու սքրսում կ'երթան երկուքն Եմմաուս՝
Խաբկաններու խայթ մը գիրեն կը քանի . . .
Ո՛վ տեսաւ զինք մեռելներէն եկած դուրս .
Հրեւա՞կ թէ կին . ա՛հ , խօլ երազ Սասանի :

*) Նոր լոյս տեսաւ Եղիշէ Եպիսկոպոս Դուրեանի հերթուածներու լիստորը , Հովուական սրինգ տիպոգրով : Մեծանուն եկեղեցականը , այս հաստով ինկզիմէր կը յայտնէր ազնուախոն ու նրբարուեստ բանաստեղծ մը : Այդ սխալները գրին վրայ մասնաւոր յօդուածով մը պիտի խօսիմք : Այս անգամ կը շատանան արեւմտեան հաստիկն՝ եւ հայ բանաստեղծութեան՝ ճամբէն հոյակապ էջերէն մին , « Եմմաուսի նամուրդները » : Գրին վանառման հասոյթը պիտի յատկացուի հայ սովետներուն :

Երբ իրիկուան առկայծեց շողն ալ վերջին ,
Ու յամբողջն կը սողար շեն ու սարսուռ ,
Անձանօք մարդ մը մօտեցաւ . . . ու հաշին
Բացաւ ճառէն էջ մը կարմիր՝ օսկեհո՛ւն :

« Ինչո՞ւ անհուն խոռով մ'է պատեր ձեր հոգին ,
Թախտուքեան մէջ կ'ալեկոծի՞ր դիր ու սար .
Անյոյս հոգին մեծունն է լոկ հաւատքին .
Այլ մ'որ հրաւիր լոյսին անգամ է օտար :

« Ինչ որ կանուխ իսկ սահմանած էր երկինք ,
Նազովրեցին զայն իր գոհովն հանեց յանգ ,
Ու անիրաւ խաչի մահուամբն եղաւ Ինք
Հօրն իրաւա՛ցքը դատաւոր ու ժառանգ :

« Ի՞նչ է մանր արգարին . կա՛րն գիշեր մ'որ
Կը լուծուի խոր երկունք մը նոր արեւու ,
Անգորր ու կարն բան այս գիշեր՝ը զբաւր՝
Որ վերահաս օտակու՛մով զծեզ կը լրնու :

« Կենդանի է նա իր փառքին մէջ դարձեալ ,
Հաւատացէ՛ք , երբ Աստուծոյ մեծ գործին՝
Անմեղուքիւնն երկին՝ երկրի սուրբ սերն ալ՝
Հրեւակ ու կին՝ կը վրկայեն առանձին :

« Մե՛ղք այն աչին՝ որ վայելեց լոյսն Անոր՝
Ու կը հաւատայ անեւութեան գիշերին .
Մե՛ղք այն խիղճին՝ որ լրսեց ձայնն երկնաւոր՝
Ու կը պատէ ամալուքի՛ւնը լրո՛ւին :

« Պիտի քալէ՞ք դեռ այսպէս խոնջ ու սրտում ,
Չառնելով վե՛ր հակաս ու սրտ անվեհեր .
Ի՛նք Հրգօրին նոյս մեծութեանն անպատում .
Կ'ուզէ՞ք ըլլալ նեղ ու զրկար վրկաներ »...:

Անձանօքին խանդաղակաթ ձայնին շեւս
Այդ երկունքին ցրնցեց աշխարհը ներքին .
Եւ երբ կ'ուզէր ընդհուպ անոնց սալ հրածեւ՝
Տենդոս մրդմամբ մը փառեցան իր ոտքին :

« Մի՛ նեռանար մեզմէ , կ'ըսեն անձկութեամբ ,
Ո՛վ որ ալ ետ , մեզ մօտ հանգչէ այս գիշեր ,
Ա՛ն , Բու խօսերդ փարատեցին հոձն այն ամպ՝
Որ զմեզ վիհի մը դարն ի վար կը բրէր » :

Մրտան յարկի մը սակ յոյսով անասան .
Բայց անձանօքն երբ սեղանէն առաւ հաց՝
Օրհնե՛ց , սրա՛ւ... բացուած աչերն ալ չսեւան
Անեւելոյթ խուսափող Տէ՛րը փառաց :

— Ո՛վ Կդեովպաս , Ինճն էր ուրեմն որ մեզի
Հանդիպեցաւ անյուսութեան ճամբուն վրայ .
Չե՛մ կատկածիր , պատահմ մը չէ՛ր երազի ,
Իր շունչն ու կեանքն է որ մեր շուրջ կը թրթռա՛յ .—

Այդ թրթռումէն առած թեւեր երկնասլաց՝
Դարձան երկունքն ալ գիշերուան մութին մէջ՝
Հո՛ն՝ անոնց մօտ՝ որոնց աչքե՛րը դեռ բաց
Կ'ողջունէին Յարուցեալին լոյսն անձեջ :

* * *

Բանիներո՛ւ դեռ անձանօք մ'ես Յիսուս ,
Որ՛ սրտամառ լրնումներով կատկածի՝
Ուրացումի ընդլըզումով մալ անյոյս՝
Կ'ընդգրկեն մութն՝ որ թեւաբախ կը յածի :

Գիշերագնաց անոնց ճամբուն վրայ մոյար՝
Ուր կը քաջի անբասուեր փայլն արեւուդ՝
Իբր ծանօթ մը մօտեցիր . ու մի՛ դար
Չարչարանիդ պատմելու փառն ու խորհուրդ :

Վէն մասներուդ ծաւալէ բոյրն օրհնութեան
Սեղանի վրայ՝ ուր կայ նրէր մը հացի ,
Ու յարկի սակ՝ ուր պատգամներդ կը թրթրան՝
Անեւելոյթ սեւեւամբ եղի՛ր մեզ դրացի :

Ուր կամ կանուխ պիտի հասնի արգարեւ
Տարածամած օրն անցաւոր մեր կեանքին ,
Բայց թող հոգին չը նեւեւի անարեւ
Տարակոյսի մրուայլ ճամբու երկայնին :

Խոնջ ու սրտում թէ եմսաւուս երթանք մե՛ն՝
Մեզ երեւցի՛ր , մեզ հետ խօսէ՛ իբր ընկեր ,
Հրնչէ՛ , ցոլա՛ , մեր էութեան խորն աննե՛ց՝
Ո՛վ անձանօք Աստուծոյն Չա՛յն ու Պատկեր :

ԵՂՆՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

Էջ ՄԸ ՍՈՒԻՆՊՈՐՏԷՆ

Ժամանակակից Անգլիոյ ամենէն հզօր ,
ամենէն վրդովիչ ու ճարտարարուեստ քնար-
երգակներէն մին , Չարլզ Ալկերընըն Սուին-
պըրն , վախճանեցաւ վերջերս : Ստորեւ կը
հրատարակենք թարգմանութիւնը *) իր ամե-
նէն հոգեւից քերթուածներէն մէկուն , որ
կը գտնուի՝ իր « Այգէն առաջ երգեր » հատո-
ւրին մէջ , գրուած՝ իտալական յեղափոխութեան
միջոցին՝ յաղթանակէն առաջ :

*) Այս թարգմանութիւնը կատարուած է
Կապրիել Մուրիի ջրաներեւն բառական թարգ-
մանութեան վրայէն :

ՀՍԿՈՂՆԵՐԸ ԳԻՇԵՐԻՆ ՍԷՋ

1

Հսկո՛ղ, գիշերն ի՞նչպէս է :

— Փոթորիկ, որոտում ու անձրև, — լոյսեր որ կը դողդոջեն ու կը նուաղին, — և պահակ հուրերը ա՛լ լոյս չեն տար: — Միայն՝ նշանալոյսերը կը դողան, — ու նաև կանթեղներու փայլը մերթ ընդ մերթ, — որ կը ցոլայ պալատէ մը ուր կողոպտիչները կը գահեն — մարդոց որդիները կոխտակով :

2

Մարգարէ՛, ի՞նչպէս է գիշերը :

— Կանգուն եմ ծովուն ափը, — վտարանդի, անմխիթար, ազատ, — մտիկ ընելով կոհակներուն շոխոզը — և յանկարծաշող փայլակները որ կը հարուածեն — բռնաւորի մը գլուխը — որոտման շառաչիւնով մը որ մեռելներու ամբոխներ ծածկող գերեզմաններուն մէջ կը լսուի :

3

Լալկաններ՛, ի՞նչպէս է գիշերը :

— Գիշերն ի բուն, անբուն — կուլանք, կուլանք ու կուլանք: — Ո՞վ մեզի պիտի դարձնէ մեր որդիները: — Ագռաւին ու անգղին կտուցները, — գայլին ու որսաշունին երախները — մեզի կը դարձնեն անոնք զոր թնդանութները պատերազմի դաշտերուն վրայ ձեզի համար սպաննեցին :

4

Մեռածներ՛, ի՞նչպէս է գիշերը :

— Թնդանութը, կառափնատը և սուրը, — կախողանին ու ճուղանին արհաւիրքը — մեզ հնձեցին ինչպէս որաներ գերեզմանին համար, — մեզ հնձեցին՝ Իրաւունքին համար: — Ո՛չ ցաւ կը զգանք, ո՛չ զղջում: — Ազատորէն՝ գրաւականներ տուինք աղատութեան, — մինչև որ կեանքը վերջանայ :

5

Պետակա՛ն մարդ, ի՞նչպէս է գիշերը :

— Գիշերը ինձի համար պիտի տևէ ինչքան

որ ապրիմ: — Ոսկին թագի մը վրայ կամ ոճրի մը վրայ — դեռ աղւոր կ'երևայ՝ կանթեղներու լոյսով: — Չէ՞ որ մատներ ունինք գրելու համար, — շրթներ՝ ի հարկին երգուըննալու համար: — Այն ատեն, երբ վտանգը կծիկը դնէ, — երգումը գործին հետ կը թաղենք :

6

Պատերազմի՛կ, ի՞նչպէս է գիշերը :

— Գիշերը ըլլայ կամ ոչ, ինձ համար միևնոյն բանն է: Ե՛ս միայն, գոնէ, — չեմ հարցներ ցողին թէ կը խամրեցնէ՞, — չեմ հարցներ բոցին՝ թէ կը սպաննէ՞, — չեմ հարցներ իշխանին կամ քահանային — թէ ի՞նչքան ատենուան մէջ գիրենք գահընկէց պիտի ընենք :

7

Վարպե՛տ, գիշերն ի՞նչպէս է :

— Որդեա՛կ, գիշերը ո՛չ մէկ տեղ — փարատած է կամ պիտի փարատի — եթէ ոչ աստղերէն զարնուած մեր աչքերուն մէջ: — Մեր աչքերէն դուրս, ան իր թռիչք կ'առնէ: — Ընայինք երբեք ո՛չ մեր առաջըր ո՛չ մեր ետին, — այլ շիտակ գէպ ի երկինքը: Այն ատեն՝ գիշերը այլ ևս գոյութիւն չունի :

8

Աքսորեա՛լ, ի՞նչպէս է գիշերը :

— Ալիքներն ու ժամերը կը հոսին, — մահուան ու տարակոյսի եղանակները, — գիշերական հսկումները՝ դառն ու ցաւագին: — Շարժուն աւազներուն մէջ, աջ ու ձախ, — ոտքերս՝ մարմնոյս տակ կը խորատուզուին: — Բայց կը ձանձնամ փունքին բուրումները — և ծովուն լայն հոտաւէտ շունչերը :

9

Գերի՛, ի՞նչպէս է գիշերը :

— Գուրսը, մեր վերև, անդադա՛ր, կը թափի — անձրև մը որ կարմիր է, — և մեր գէմքերը կ'աղտոտին այդ անձրևէն: — Հոս, ինչ ալ ըլլայ եղանակը, գիշերն ու ցորեկը նման են, — մինչև որ թագաւորներուն անէծքն ու մեր շղթաները — փշրուին, և իրենց թակարգները խորտակուին :

10

Քրիստոնեայ, ի՞նչպէս է գիշերը :

— Չեմ կրնար ըսել. կոյր եմ: — Կանգ կ'առնեմ ու ետեւ կը նայիմ, — թէ արդեօք ժամերը պիտի նահանջե՞ն — ու պիտի վերագառնա՞ն սիրելի մեռած լոյսին, — պահակ հուրերուն և աստղերուն որ երբեմն կը շողային հոն ուր այժմ երկինքը սև է, — կը տաքցնէին երկիրը հոն ուր այժմ ան ցուրտ է :

11

Քահանայապետ, գիշերն ի՞նչպէս է :

— Գիշերը, հոս, ահա ելի է, — սարսափին դժնէ դէմքերովը լեցուն, — և արիւնով, ու հրդեհներով: — Աչքերս զրկուած են իրենց կեանքէն, — ձեռքերս լի են մոխիրով: — Եթէ իմ հաւատքիս Աստուածը ստախոս մըն է — ինչի՞ հաւատամ:

12

Եշխաններ, գիշերն ի՞նչպէս է :

— Գիշերը, իր ժահահոտ շունչով — մեզ՝ մահու զաւակներս՝ կը սնուցանէ, — և իր աղջամուղջովը մեզ կը պարարէ: — Թալանը, սովը և արհաւիրքը — մեր ոտքերուն տակ կը կծկտին և մենք զանոնք կը սնուցանենք: — Հողը, ուր մենք կ'անցնինք, գերեզման մըն է, — կեանքը ուր մենք յաղթական ենք՝ մեռած է:

13

Մարտիրոսներ, ի՞նչպէս է գիշերը :

— Չէ՛. միթէ դեռ գիշեր է մեզի համար: — Մենք կը մոռնանք — ինչ որ էր գիշերը, — եթէ երբեք ան գոյութիւն ունեցած է: — Պայքարին կարմիր, փառաշող բերանները — լուռ են դւ փակ՝ հոն ուր մենք կանք: — Մեր աչքերուն մէջ, միրկոտ օդը — կը փայլի ինչպէս աստղի մը դէմքը:

14

Անգլիա՛, գիշերն ի՞նչպէս է :

— Գիշերը եղած է հանգստեան ու քունի համար, — և հրատապ լալու ատեն չէ: — Ձիս մինակ ձգեցէք մինչև լոյս: — Կ'ուզէի

դեռ քնանալ՝ եթէ կարենայի, — ես որ երկու հարիւր տարի քնացայ: — Ատենով ես մեծարուած էի՝ կ'ըսէն. — բայց քունը աւելի քաղցր է քան արցունքը:

15

Ֆրանսա՛, գիշերն ի՞նչպէս է :

— Գիշերը կէս-օրն է՝ — համբուրուած ու մինչև թալկացում յագեցած, — թուքով ծածկուած, կոխտուած, տիրացուած բոլին: — Արիւնի պէս կարմիր վարդերու զրասանգներով պճնուած, — իմ շուրջս պարելով կը դառնայ — Մահը՝ պսակաւոր, իմ ազատիչս, իմ տէրս. — ա՛լ Ֆրանսա չկայ:

16

Իտալիա՛, ի՞նչպէս է գիշերը :

— Ա՛խ, զաւա՛կս. ի՞նչքան երկար է ան: — Լուսնին ճառագայթները, աստղերուն ճառագայթները և երգերը — հիմայ գայն լուռ ու մունջ կը թողուն: — Կը զգամ սակայն բարձունքներուն վրայ — արևելքի կողմը, այժմ ո՛չ շատ հեռաւոր, — երգ մը որ շատ ուժեղ է՝ արտոյտին երգն ըլլալու համար, — լոյս մը որ շատ հզօր է աստղի մը շողն ըլլալու համար:

17

Գերմանիա՛, ի՞նչպէս է գիշերը :

— Երկայն ատեն, ան զիս օրօրեց երազներով. — հիմայ, հսկման մէջ, ինծի կը թուի թէ լոյսը կը վերածնի իմ աչքերուս. — և թէ երբեմնի տիրապետութիւնն ու գօրութիւնը — ձեռքերուս յօդերուն մէջ կ'ապրին, — կ'ամրացնեն անգամներս որ կը կանգնին, — կ'ուժով-ցընեն ոտքերս որ կը ցցուին:

18

Եւրոպա՛, գիշերն ի՞նչպէս է :

— Հարցուցէք երկնքին ու երկրին, — և ծոցիս վրայ ունեցած ստնդիաց մանուկներուս, — իմ ազգերուս որ կազմուելու վրայ են: — Անոնցմէ մէկը կայ, որ ապահովապէս վրէժը պիտի լուծէ — անոնց որ կը տառապին կամ կը թափառին: — Ան միայն կարող է պատասխանել — ինծի մի՛ հարցնէք, այլ անոր:

Ազատութիւն , գիշերն ինչպէս է :

— Չեմ գգար կարմիր անձրևներուն տեղալը , — ա՛լ չեմ լսեր փոթորիկը , — ոչ ալ որստումը երկնքին մէջ : — Ամբողջ միջոցը սպիտակ է՝ — արևուն լուռ ոտքերէն . — գիշերը , բոլոր անէծքներովը զոր իր մէջ կը կրէր , — գիշերը՝ ա՛լ անցած , վերջացած է :

ՍՈՒՆՆՊԵՐՆ

Վ Ի Ծ Ա Պ Ը

Ութնամեայ հովուերգութիւնը յանգեցաւ ամենէն ահաւոր ողբերգութեան . . .

Անգամ մը եւս , եւ ի՛նչ վայրագ յստակութեամբ , կ'ապացուցուի Հրաչքի անկարելիութիւնը :

Անարիւն յեղափոխութեամբ , մոգական արագութեամբ՝ ազատական բեփմի մը բռնապետական թուրքիային մէջ հաստատուելու , զոր քաղաքակիրթ աշխարհը իբր եղած վերջացած իրողութիւն մը ընդունեցաւ ու փութկոտ սքանչացմամբ մը ծափահարեց , եւ զոր Հայոց իսկ ամենէն թերահաւատները՝ իրենց շուարման ու յուսահատութեանը մէջ՝ տիեզերական խանդավառութենէն համակուած ու յաղթուած՝ վաւերական կարծեցին , ահա կը յայտնուի՝ մօրեմերկ՝ իր ահեղի պատրանքի չարածիծաղ երեւոյթովը . . .

Ուրախութեան երգերը , հաւատքի ճառերը , եղբայրութեան աղաղակները , կը խեղդուին արիւնի ու հուրի հեղեղի մը մէջ՝ ահագնածաւալ ու քստմեկի , ինչպիսին 95-96ի շրջանին ալ չէինք տեսած , եւ որուն իսկական համարժէքը գտնելու համար մինչև ձիւնկիզխանի եւ Լէնկթիմուրի օրերն ընկրկելու ենք . . .

Մղձաւանջը , որ տարիներէ ի վեր իր հսկայ սեւ դափան դէմքին սարսափը կը կախէր մեր հոգիներուն վրայ , ուրեմն պահ մը՝ անգութ կատակով մը՝ վարդաթոյր երագի

մը դիմակն առեր է , որպէս զի մեր միամիտ անմեղ ինքնախաբէութեան օրօրումին մէջ յանկարծակի վերերեւայ իր իսկական պատկերին բերրապատկուած ահագնութեամբը եւ մեր ապուշ հրճուանքին արիւնհեղձ քայքայմանն ի տես՝ նորօրինակ ու նրբամուկ հեշտանքով մը զբօսնու . . .

Ահեղի՛ ճակատագիր . . .

Համիտը գահավէժ կը գլորի իր Եւլտրգի որջէն , ու կ'երթայ կալանաւոր՝ զղեակ-բանտի մը մէջ փակուել , — ու այս մեծ իրողութիւնը , զոր Հայութիւնը տարիներէ ի վեր անձկագին կ'երագէր , որ պէտք էր ո եւ է ցեղէ աւելի՛ արիւնլուայ Հայութեան շնորհէր արդար ուրախութեան մը սփոփանքը , մեզի կը հասնի այնպիսի բոպէի մը երբ մինք կարողութիւն չունինք , սիրտ չունինք , իրաւունք չունինք ցնծալու :

Ի՞նչպէս ցնծալ երբ ամբողջ նահանգ մը՝ մեր արիւնին մէջ կը լողայ , երբ գազաններու տարափ մը մեր քոյրերը , մեր երախաները կը բզկտէ , երբ կը տեսնենք լպիրջ ու վատ քանդուածի կոհակը որ բազմամեայ խաղաղ իմաստուն ու բեղմնաւոր Աշխատանքին ծաղկազարդ մարգը կ'ողողէ ու կը փճացնէ . . .

Ու ինչո՞ւ ցնծալ :

Համիտը կը վտարուի գահէն , ու մինչ՝ Ալլաթինի վիլլային պատուհաններէն՝ իր չորնալիք աչքերը դեռ կը ծծեն բարի արեւուն լոյսը՝ Սելանիկի զմայլելի ծովախորշին վրայ նազելածաւալ , անդին՝ իր հոգին կանգուն ու կենդանի է միշտ , կը գործէ , կը յաղթէ , — կամ՝ աւելի ճիշդ՝ այն հին հոգին , հին ինչպէս Ահրիմանը , ամուլ ու անողորմ կործանումի ոգին . Ասիոյ ցաւը դարաւոր , եւ որուն Համիտ էն վիթխարի մարմնացումներէն մէկն էր լոկ . . .

* * *

Եւ ի՞նչպէս կարող էր ուրիշ կերպ ըլլալ չընչները , որ տասնհինգ տարի առաջ գործադրեցին այն հակամարդկային վիթխարի ոճիրը որ տիեզերքը սարսափէ տօգունեցուց , անհետացած հալածած ցնդած չէին՝ Սահմանադրութեան մը հուշակմամբը : Կային՝ միշտ , ու կը սպասէին : Իրենք ալ շուարած՝ յանկարծածին

մեծաթխոր նորափոխութենէն , կծկտած կեցեր էին իրենց տեղը , դժգոհ , բայց վախցած : Բան մը փոխուած էր երկրին մէջ՝ անտարակոյս , եւ այդ փոփոխութիւնն իրենց աննպաստ էր , որովհետեւ Օրէնքն ու Արդարութիւնը հաճելի չեն կրնար ըլլալ յովազին ու օձին : Բայց չէին համարձակիր շարժիլ , կարծելով տեսնել նորեկ Սահմանադրութեան մէջ դազանազուսպ մը իսկապէս զօրեղ : Իրենք չէին փոխուած : Չեն կրնար փոխուիլ : Յովազը յովազ կը մնայ եւ օձը օձ : Կը սպասէին թուրքերուն ազնուագոյնները աղաղակեցին — եւ մենք ալ անխոհմտութիւնն ունեցանք ատիկա չափազանց յեղեղելու — թէ Հայն էր որ ռահվիրան եղաւ այս մեծ փոփոխութեան : « Ուրեմն՝ ըսին իրենց մտքին մէջէն՝ Հայն է պատճառ որ ա՛լ մենք յովազութիւննիս անարգել կատարելու կարող պիտի չըլլանք . . . վա՛յ անոր՝ երբ մեր ժամը գայ » : Իրենց ժամը եկաւ , ու տասն անգամ աւելի կատարութեամբ քան առաջ՝ խուժեցին Հայուն վրայ , ու այս անգամ՝ այդ Ոճիրի արուեստագէտները ինքզինքնին գերազանցեցին :

Եւ ինչո՞ւ այդ ժամը չգար : Ազատական թուրքերու պոլիտիկոսները՝ ամենամեծ մասամբ՝ ըրին ամէն ինչ որ կարելի էր որպէս զի գայ անիկա : Ինչ որ զինուորական ազատամիտ պետերն ըրած էին բարի , պոլիտիկոսները լղրճեցին ու աւրեցին զայն : Անոնք , այդ պետերը , Եւրոպայի մէջ ուսում ստացած , իսկապէս եւրոպացած , ազատութեան եւ արդարութեան վրայ առողջ ու լիալիր գաղափար ունեցող մարդիկ , ուղղակի դիմած էին դէպ ի նպատակը , եւ բացած էին ճամբայ մը , որ լեցուն էր յոյսերով : Պէտք էր շիտակ քալել անկէ , անխնայ ջախջախելով ինչ որ խոչընդոտ հանդիսանար : Պոլիտիկոսները՝ շիտակ յառաջանալու տեղ՝ կողմնակի կածաններն սկսան մոլորիլ , յամենալ , ցրուել , ժպտելով կարծեցին յաղթել թշնամիներուն . նոյն գծին վրայ ալ ու ձախ երթեւեկելով կարծեցին թէ յառաջ կը քալէին , եւ մանր շաւիղներու մէջ թափառած ատենին , իրար ալ կորսնցուցին , եւ օր մը իրարու անծանօթ ու նոյն իսկ հակառակորդ դարձած , զիրար բզքտելով սկսան

զբաղիլ , մինչ թշնամին կը զօրանար ու ճամբուն բերանը կը գոցէր հետզհետէ : Գահուն վրայ՝ հանդարտ՝ ձգեցին ճիւղապետը , ու կարծելով զայն իրենց կամքին հլու գործիքը դարձրնել , իրենք եղան անոր խաղալիք : Մաշեցուցին տկարացուցին անոր դէմ՝ այլ եւ այլ պատճառներով՝ նոյն իսկ մահմետական տարրերու մէկ ստուար մասին մէջ սարածուած ատելութիւնը . ամէն յանցանք՝ քամարիլային վրայ նետելով՝ զայն չքմեղացնելու ձգտեցան , ու տեսակ մը նոր ժողովրդականութիւն շահել տուին անոր . յետոյ սկսան յայտնապէս շողոքորթիլ , շփացնել զայն՝ խանդաղատագին յարգանքի որպէս թէ դիւանագիտական ցոյցերով : Անոր հետ , եւ անոր պէս , բոլոր մեծ ոճրագործները , որ մեծածաւալ արիւնհեղութեանց կազմակերպիչներն եղած էին՝ հանգիստ ձգեցին : Հայու արիւնին մէջ լոգացած քստմնելի պաշտօնատարներ մնացին կանգուն իրենց պաշտօնին վրայ : Օսմանեան խորհրդարանին մէջ՝ մահմետականները կեղեքող երեսփոխաններու ընտրութիւնը չվաւերացուեցաւ , բայց Հայերու ջարդ սարքող երեսփոխաններունը մեծամասնութեամբ վաւերացուեցաւ , Հայուն ու Յոյնին դարձան ու հազար անգամ կրկնեցին՝ « Ա՛լ Հայ , Յոյն չկայ , Օսմանցի կայ միայն » , բայց մահմետականներուն չըսին հարկ եղած բոլոր կորովովը եւ անվերապահ յատակութեամբը՝ « Ա՛լ տիրող ցեղ ու տիրող կրօնք չկայ , օրէնքին առջեւ հաւասար Օսմանցիներ կան միայն » : Սահմանադրութեան բեժիմին վերահաստատման է՛ն քնարերգական օրերուն , Պէշիկթաշի մահմետական խուժանը ամենէն զազիր վայրագութեամբ ոստիկանատան իսկ մէջ՝ կոչկոճելով փառաստեց խեղճ յոյն թոտորին որ իրեն սիրահարած Թըքուհիի մը սիրոյն պատասխանելու յանցանքը գործած էր . . . եւ թուրք ազատականները չփութացին՝ այդ ոճրին հետեւեալ օրն իսկ՝ խստիւ եւ լրջօրէն պատժել շարագործները՝ յօրինակ այլոց , այլ հին-թըքական ձեւով ամիսներով երկարաձգեցին քննութեանց եւ դատաւարութեանց զաւեշտ մը , որ յանգեցաւ քանի մը մահմետականներու թեթեւ պատուհասմանը միայն :

Չհասկցան որ « կոտորածը » մեծագոյն ամօթը , եւ մեծագոյն արտոն էր օսմանեան պետութեան . թէ ան է եղած Թուրքը վարկարեկող գլխաւոր իրողութիւնը , պետութեան անդամահատման միակ պատճառը , եւ թէ անոր յարատեւումը պետութեան վերջնական անպատուումն ու քայքայումը միայն կրնար յառաջ բերել : Ընդհակառակն , իրենց մէջ գտնուեցան որ կոտորածի « միջոցը » առձեռն պահել ներքնախորհեցան՝ ի հարկին գործածելու համար զայն . եւ նոյն իսկ ոմանք Հայերու հետ խօսելով՝ բացէ ի բաց ըսել չխպնեցան . « Եթէ շարժում մը ընէք , կը կոտորենք » — չկարենալով ըմբռնել որ նոյն իսկ եթէ հայ յեղափոխականները սահմանադրական բեօթիմի օրով անջատական շարժում մը ընել մտածէին — ինչ որ մտքերնուն չանցուցին — ազատական թուրք վարիչները պէտք էր միմիայն պայքարող տարրերուն հետ գործ ունենային եւ անմեղ անզէն ժողովուրդը կոտորելու վայրենի եւ անբարոյական մէթոտէն զգուանքով խորչէին . . . Ասիկա չըմբռնեցին , եւ այն եռանդը զոր պէտք էր ջարդողներուն , քանդողներուն , յառաջընթացական ու համերաշխութեան իրենց իսկութեամբ իսկ արգելք հանդիսացողներուն դէմ ցոյց տային , թափեցին՝ Պերլինի դաշնագրին ՁՅրդ եւ ՅԼրդ յօդուածները ջնջել տալու համար . . .

Այսպէս , ստեղծուեցաւ կացութիւն մը խառնաշփոթ , ուր ազատականութիւնը ինքզինքն իր ձեռքով կը վարկարեկէր , կը տկարացնէր , կը պատռէր , մինչ բռնապետութիւնը իր « ջարդող » ներուն հետ կը կազդուրուէր ու կը զօրանար՝ մութին մէջ : Ժամը եկաւ՝ այդ ներքին պառակտմանց իսկ սուր մէկ պայթմամբը , ու խաւարի ուժերը իրենց գործը վերակսան՝ Պոլսոյ մէջ՝ յարձակելով Սահմանադրութեան վրայ եւ կիլիկիոյ մէջ Հայուն վրայ :

* * *

Ու հիմայ , ի՞նչ կը վերապահէ մեզի վաղը : Պատմութեան ամենէն հոյակապ դիւցազներգութիւններէն մին կիլիկիոյ քստմնելի ողբերգութեան հետ չգուղադիպեցաւ : Ինչքան ալ մեր սրտերը , ցաւով խաւարած , բնախօսապէս անկարող են հրճուելու , մեր միտքը ամե-

նայն արդարութեամբ կը գնահատէ արու գեղեցկութիւնը վիշապն զգետնող Ս. Գէորգի այն խոյանքին որով Մանուէտ Շէվքէթ փաշայի բանակը նետուեցաւ Սեւանիկէն դէպ ի Երլտրզ ու ահագնագոր անմատչելի նկատուած , ամբողջ պետութիւն մը երեսուներեք տարիէ ի վեր սարսափի մէջ զողացնող վամփիրին իր առջեւ միս-մինալ , Լքուած , գողահար ու աղերսարկու գալստուիլը տեսաւ . քաջեց զայն իր որջէն դուրս , տարաւ փակեց Սեւանիկեան օսկեզօծ բանտին մէջ , ու գահուէն վրայ բարձրացուց բարի ու խաղաղասէր Սուլթան մը , երէկ ինքն իսկ մարտիրոս :

Այս շքեղ դրուագին վեհութիւնը անհնար է չընդունիլ ու չձափել : Ինչ ալ ըլլայ ապագան՝ Տաճկաստանի համար , Շէվքէթ փաշայի , Նիազիի , Էնվէրի եւ իրենց զինակից լուսամիտ ազատական զինուորապետներուն ճիգը , պիտի մնայ յաւիտենապէս գեղեցիկ : Բայց այդ մեծ դրուագը արդեօք պիտի բերէ՞ իր հետ վերջնական բացումը ցանկացուած Նոր Շրջանին : այդ ճիգը պիտի յանգի՞ լիակատար յաղթանակի :

Այս հարցման ոչ ոք կարող է այսօր տալ վճռական պատասխան : Վիշապը զգետնուած է , բայց կենդանի տակաւին : Ս. Գէորգ այդպէս չըրաւ : Ողջ ողջ կոյսեր լափող վիշապները վտանգաւոր է ողջ պահել , նոյն իսկ կապուած : Անոր վերականգնումը երազող անհամար վիշապիկներ՝ կան հեռուն , եւ անոնց համար՝ պետը Սեւանիկ կը գտնուի հիմայ , ո՛չ Պոլիս : Ու շատ , չափազանց շատ են այդ վիշապիկները :

Տարիէ մը ի վեր գործուած սխալները , ցոյց տրուած տկարութիւնը , անոնց տուին գիտակցութիւնը իրենց ուժին , ու արիւնի հսկայ խնջոյքը զոր վերջերս կարողացան ըմբռնանել , բիւրապատկեց իրենց այդ գիտակցութիւնը եւ առաւել եւս սրեց իրենց մարդակեր արտոժակը :

Նորէն պոլիտիկոսները կը թուին ձեռնարկել կատարուած յաղթանակին արդիւնքը պղտորելու : Երկդիմի վարմունքները կը վերբեւան : Ամբողջ օսմանցի ազատականութեան կողմէ Գազաններուն հանդէպ վճռական եւ անվերապահ միահամուռ գայրոյթի յառնումի մը տեղ ,

կը տեսնենք շատերը որ կոտորածին ահագնութիւնը մեղմացնելու, անոր պատասխանատուութիւնը Հայոց Վրայ նետելու ջանքեր կ'ընեն . . . : Ու ջարդերը դադրեցնելու համար Տէտէադաճէն զրկուած Սելանիկեան զինուորները, վարակուելով տեղական փուտ մթնուորային ազդեցութենէն Ատանայի երկրորդ ջարդին կը մասնակցին, ու առաջին կոտորածէն ճողոպրած խեղճերը իրենց ապաստարաններուն մէջ կ'այրեն . . . Եւ Ասիական հասնագներէն, ամէն անկիւնէ ուր Հայ կայ, խռովիչ լուրեր կուգան. կոտորածի երկիւղ՝ ամենուրեք :

Մոսկու ու ահաւոր կացութիւն. վճռակա՛ն վայրկեան, ուր պէտք է անպատճառ ու տիրաբար, վերջնապէս յաղթէ ընդդիմադիր երկու տարրերէն մէկը. աւելի կատաղօրէն քան երբեք իրարու դէմ լարուած են հիմայ, այդ երկու տարրերը, — մին՝ եւրոպական քաղաքակրթութիւնը ներկայացնող ուժերու խումբը, միւսը՝ ո եւ է քաղաքակրթութիւն չնեակայացնող, քաղաքակրթութեան գաղափարին իսկ թշնամի՝ մարդկութեան պատկանելու անարժան՝ լուսատեաց ու արիւնարբու ճիւղներու վոհմակը :

Ոչ ցեղային, ոչ կրօնական է՝ իսկապէս պայքարը : Ամէն ցեղէ մարդիկ կան երկու կողմը, եւ ամէն կրօնքէ : Լոյսի ու խաւարի, առողջութեան ու փտութեան պայքարն է : Պոլսոյ Համիտականներու ապստամբութեան միջոցին՝ թուրք սպաները խողխողուեցան, որովհետեւ «գպրոցէ ելած», եւրոպական զարգացում ստացած էին. ու Հայերը կը մորթոտուին՝ որովհետեւ գպրոց կը սիրեն, եւրոպական քաղաքակրթութեան ռահվիրաներ են, ազատականութեան ուսուցիչներ : Եւրոպական քաղաքակրթութիւնը այս կամ այն կրօնքին վրայ չէ որ հիմնուած է, այլ հելլէն-լատին ազնիւ, առողջ, կատարեալ մտածումին վրայ, որ Արդի Աշխարհը յօրինեց, եւ որ սահմանուած է տիրապետելու ամբողջ երկրագունդին վրայ, որովհետեւ հասունութեան բարձրացած մարդկութեան ամենամաքուր յրդացումն է : Ճիւղները կը մերժեն այդ քաղաքակրթութիւնը, որովհետեւ ան թող չի տար մարդկային էակին՝ իր նմանները նուա-

տացնել, հարստահարել, թալանել, երախաներ կտրել, կիներ բզկտել, տգիտութեան ու վայրագութեան մէջ անասնաբար թաւալել :

Այո՛, երկուքէն մէկը պէտք է յաղթէ : Ու անտարակուսելի է որ լոյսը պիտի յաղթէ խաւարին : Բնութեան օրէնքը, տրամաբանութեան պահանջքը, տիեզերական ներդաշնակութեան պէտքը անխուսափելի կը կացուցանեն զայդ : Ժանտախտը, Ֆիլօքսերան, հրաբլխային պայթումները ահարկու գորութեամբ չարիքներ են, բայց վաղանցուկ. իսկական, տեւական, գեղեցիկ զօրութիւնը՝ բեղմնաւոր բարերար, շինիչ զօրութիւնն է, ստեղծագործ մարդն է, խաղող տուող այգին է, բլուրներուն ոտքը ժպտող քաղաքն է : Կեանքը պիտի յաղթէ փտութեան :

Ի՞նչպէս, ո՞րքան ատենէն : Չեմ գիտեր : Ի՞նչ արիւնով, թէ դարձեալ ահագնագէզ գիակնաբլուրներու կանգնումէն յետոյ : Չեմ գիտեր : Միայն՝ համոզուած եմ որ Կեանքը պիտի յաղթէ :

Ամէն Հայ կը մաղթէ որ այդ յաղթանակը կատարուի օսմանեան ազատականութեան ներքին ուժերովը : Հայը, Սահմանադրութեան թուրքիոյ մէջ հաստատուելէն ի վեր, հեռու անջատական ծրագիրներ սնուցանելէ՝ ինչպէս վատերը կ'ըսեն, ամենամեծ վեհանձնութեամբ՝ մոռնալով դարաւոր ստրկացման ցաւը եւ վերջին տասնհինգ տարիներու իր մարտիրոսութեան կսկծանքը, անձնուիրաբար ու անվերապահօրէն իր ուժերը նուիրեց օսմանեան պետութիւնը քաղաքակիրթ, ազատական, բարգաւաճ ու հզօր երկիր մը դարձնելու ձգտումին : Ու գեւերէկ, այն պահուն ուր Կիլիկիոյ մէջ Հայերը կը յօշոտուէին, Հայը՝ Պօլսոյ մէջ կամաւորներ կ'ուղարկէր օսմանեան ազատարար բանակին ու վիրաւորուած թուրք զինուորները կը խնամէր :

Բայց եթէ ճակատագիրը վճռած է որ պետութեան առողջ ուժերը պիտի չյաջողին զգեանել փտութեան գորութիւնները, եթէ գրուած է որ Ոճիրը նորէն հոն պիտի ցցուի անկաշկանդ ու իր սեւ գործը շարունակէ, այն ատեն արտաքին ուժերն են որ հարկաւորաբար՝ պիտի կատարեն Ս. Գէորգին ժեսթը՝ վերջնական ու փրկարար :

Ա. ԶՊԱՆԵՍԱՆ

ՆԻՔՈՒԱ ԿՈՎՈՒԻ ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ

«Ռուս Գպրութեանց Բարեկամներու Ընկերութենէն», հրաւիրուած ըլլալով մասնակցել Նիքոլա Կոկոլի հարկերամեակի հանդէսին որ կատարուեցաւ Մոսկուա՝ Մայիս 6ին, Անհիբի անօրէնը ղրկեց Փրանսերէն լեզուով՝ հետեւեալ ուղերձը .

«Ռուս գրականութիւնը խորին ազդեցութիւն ունեցած է ռուսական Հայաստանի գրագէտներուն և նոյն իսկ Թուրքիոյ հայ նորավեպագիրներէն ոմանց վրայ : Ահհանձն գթութեան ոգին, մարդկային լայն եղբայրութեան մը բուռն ծարաւը, բացարձակ արդարութեան բաղձանքը, կեանքի ուղղակի զիտողութեան և պարզ ու հաւատարիմ արտայայտութեան ճշգտումը, արուեստը առանց արուեստականութեան՝ որ կը յայտնուի իբր ինքնաբեր ու կենդանի ծաղկափթիթում մը մարդկային հոգւոյն, այս բոլոր յատկանիշները ռուս մեծ գրագէտներուն, խանդավառօրէն սիրուած են ժամանակակից հայ գրականութեան մէկ քանի լաւագոյն ներկայացուցիչներէն, և կազմած են էական տարրերէն մին որ, ցեղային խառնուածքի և ազգային գեղեցկագիտական աւանդութեանց հիմնական տարրին ու արեւմտեան Եւրոպայի մեծ գրականութեանց ազդեցութեանը հետ, ձևացուցած են Հայոց նոր գրականութիւնը :

«Իմ հիացման հարկս մատուցանելով ռուս գրականութեան հայր ու հիմնադիր Նիքոլա Կոկոլի յիշատակին, ուրախ եմ ուրեմն որ կարող եմ այս առթիւ՝ յայտնել միևնոյն ատեն հայ գպրութեանց երախտագիտութիւնը հանդէպ ռուս մտածման վարպետներուն :»

ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ ՄԻԹԻՆԿԸ

Ապրիլ 25ի իրիկունը, Գաֆէ տիւ Կլօպի սրահին մէջ, Փարիզի Հայերը գումարեցին միթիսկ մը՝ Կիլիկիոյ կոտորածներուն դէմ բողոքելու համար : Կը նախագահէր Տիգրան խան Բելէկեան : Հայոց և Եւրոպացոց խուռն բազմութիւն մը ներկայ էր : Խօսեցան բազմաթիւ բանախօսներ, — Շիրվանզադէ, Շահմուրատեան, Մ. Ճանրմեան, Անթուան Պրիմօ, «Անահիտ»ի տնօրէնը, ևւն. :

Որոշուեցաւ պատգամաւորութիւն մը ուղարկել օսմանեան ղեսպանին և Ֆրանսայի արտաքին գործոց նախարարին : Որոշուեցաւ նաև ղրկել երախտագիտութեան հետագիր մը Մերսինի անգլիական ղեր-հիւպատոսին՝ իր ցոյց տուած ղիւցաղնական մարդասիրութեանը համար, և հետեւեալ հեռագիրը՝ Սելանիկի «Միութիւն և Յառաջգիմութիւն» Բօմիթէին .

«Միութիւն և Յառաջգիմութիւն» Բօմիթէին, Սելանիկ. Փարիզի հայ զաղուքը 1. Ձեզ կը շնորհակալուի զանհաւուրէ ջանքերուն համար զոր կը քափէ՛ք Սահմանադրութիւնը պաշտպանելու և բուսպեսական բեծիւր կործանելու : 2. Ձեզ կը յայտնէ իր ցուակցութիւնները ազատութեան մարտին սպանելու վաս սպանման համար : 3. Կը յայտնէ իր զայրոյթը Կիլիկիոյ ջարդերուն հանդէպ և ձե՛նէ կը պահանջէ միջամեթ՝ զինուորական մարմնի մը անմիջական ուղարկման համար՝ որպէս զի կոտորածները դադրին և յանցաւորները պատժուին : 4. Կը մտքէ յաղթանակը՝ բոլոր ցեղերուն համար հաւասարութեան, արգարութեան և ազատութեան բաղաձակութեան մը, և միութիւնը բոլոր անկեղծ ազատականներուն :»

Սելանիկի «Միութիւն և Յառաջգիմութիւն» քօմիթէն պատասխանեց հետեւեալ հետագրով .

«Սազանք ձեր մարդասիրական նեւագիրը՝ չորս յօդուածով . զգածուած ե՛նք ձեր ցուակցութիւններէն . շնորհակալութիւն ձեր մաղթանքներուն համար . բնութեան էլք կ'իմանա՛մ . այժմ հանդարտութիւն Ասանայի մէջ . կ'ապահովցնենք որ ամէն բան պիտի ընենք անկարգութեանց վաւարանք ջնջելու համար . չորրորդ յօդուածին մէջ յայտնուած իղձը մերն ալ է :»

Այս հեռագրին «քննութեան ելքը կ'իմանաք» խօսքը քիչ մը երկդիմի է . կը թուի որ Սելանիկի քօմիթէն ալ կարծած է թէ Հայերն ալ պատասխանատուութեան բաժին մը ունին Ատանայի ջարդերուն մէջ . «Ատանայի մէջ հանդարտութիւն» կը հուշակէ այդ հեռագիրը, և միևնոյն պահուն Ատանայի երկրորդ ջարդը կը սկսէր :

Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Փարիզի Հայերը՝ նախաձեռնութեամբ Տիգրան խան Բելէկեանի՝ կազմեցին հանգանակիչ մասնախումբ մը, որ արդէն հաւաքած է Հայոց մէջ 30,000 Փրանք . մէկ քանի Ֆրանսացիներ

ալ մասնակցած են այս հանգանակութեան .
 Պ. Բելէկեան արդէն Պոլսոյ Հայոց պատրիար-
 քարանը ուղարկած է 17,700 ֆրանք : Հան-
 գանակութիւնը կը շարունակուի :

Ֆրանսացի նշանաւոր անձնաւորութեանց
 խումբ մը այս օրերս պիտի հրատարակէ կոչ
 մը՝ ուղղուած ֆրանսական հասարակութեան ,
 հանգանակութիւն մը բանալու համար ի նը-
 պասս Կիլիկիոյ սովիւրոց :

Ֆրանսական կառավարութիւնը ուղարկած
 է 30,000 ֆր., ֆրանսական պանքաները՝ 15,000,
 Արեւելքի զպրոցներու Վարչութիւնը՝ 7000 :

Կարմիր Խաչի ֆրանսական ընկերութիւնը
 մտադիր է օգնութիւն հասցնել :

ՖՐԱՆՍԱ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Ֆրանսական մամուլը՝ բազմաթիւ յօդուած-
 ներով՝ պայրոյթի ու բողոքի միահամուռ աղա-
 ղակ մ'արձակեց Կիլիկիոյ կոտորածներուն առ-
 թիւ, պահանջելով յանցաւորներուն պատժուիլը
 և այգօրինակ վարագուծեանց կրկնման վերջ-
 նական արգիլումը : Դժբաղդաբար, այն երկու
 նամակներուն մէջ, զոր Կիլիկիա ուղարկուած
 ֆրանսական մարտնաւերու սպաները գրած
 էին, և զոր հրատարակեցին Ֆիլարք և Ժոզֆալ,
 սպրդած էին տեղական թուրք իշխանութեանց
 ստեղծած տարաձայնութիւնները՝ որոնք կը ձգ-
 տին այդ դժբաղդութեանց պատասխանատու-
 թիւնը Հայոց վրայ նետել . ֆրանսայի կէս-
 պաշտօնական լրագիրը, Թան, իր Մայիս 7ի
 խմբագրականով՝ յստակ ու հեղինակաւոր հեր-
 քում մը տուաւ այդ ապուշ և անազնիւ ամբաս-
 տանութեան, ցոյց տալով աղէտքին ծագումը
 իր իսկական գոյնով և մատնանիշ ընելով իսկա-
 կան յանցաւորները :

Մայիս 17ին Պ. Տընի Քօշէն, խորհրդարանին
 մէջ, Արտաքին գործոց նախարարին հարցում մը
 ուղղեց Կիլիկիոյ ջարդերուն մասին . մեծանուն
 ֆրանսացին, իր փաստալից, վեհօգի ու կորովի
 ձառովը՝ կատարուած խժգժութիւնները պատ-

կերացնելէ և ապացուցանելէ յետոյ թուրք
 իշխանութեանց մեղապարտութիւնը այդ ահ-
 ուելի աղէտքին պայթման մէջ, ցաւ յայտնեց
 որ ֆրանսական կառավարութիւնը աւելի ուժեղ
 և ազդեցիկ միջամտութիւն մը ըրած չըլլայի
 ազատելու համար կոտորածի մատնուած ժող-
 վուրդը . պահանջեց որ՝ եթէ ջարդի վտանգը
 յարատեւէ, մարտնաւերու զօրքը ցամաք ելլէ
 և պաշտպանէ հայ բնակչութիւնը :

Պ. Ժօրէս միջամտեց՝ ըսելու համար թէ
 ֆրանսայի զինեալ միջամտութեանը համաժիտ
 չէ, որովհետեւ ասիկա աւելի կրնայ գրգռել
 մահամտականները . այլ՝ կը պահանջէ որ Պոլ-
 սոյ մէջ ֆրանսական դիւանագիտութիւնը աւելի
 ուժեղ ու պարկեշտ կերպով գործէ :

Պ. Փիշոն յայտարարեց թէ ֆրանսական կա-
 ռավարութիւնը ըրած է ամէն ինչ որ կարելի
 էր՝ առաջին անգամ համար ջարդերուն, խա-
 բանեց իսկական յանցաւորները, որոնց գլխա-
 ւորը՝ Ատանայի վալին՝ յակնեւ անուանէ մատ-
 նանիշ ըրաւ . յոյս յայտնեց որ քննիչ յանձնա-
 ժողովը արդարութեամբ պիտի վերաբերուի և
 պատժէ ջարդ կազմակերպողները . յայտարարեց
 որ ֆրանսա պիտի պաշտպանէ երիտ . թիւրք
 կառավարութիւնը, պայմանով որ ան ինքզինքը
 ցոյց տայ իսկապէս քաղաքակիրթ, թոյլ չաալով
 որ մարդկութիւնն անպատուող այսպիսի խժգը-
 ժութիւններ կատարուին այսուհետեւ Տաճկաս-
 տանի մէջ : Թէ՛ Պ. Քօշէն և թէ՛ Պ. Փիշոն
 շեշտեցին Պերլինի դաշնագրին ՅԱրդ յօդուածը
 ինչպէս և Տաճկաստանի վերաբերող միջպայային
 դաշնագրերու բոլոր տրամագրութիւնները պահ-
 պանելու անհրաժեշտութիւնը :

Թիւրքերը պէտք է ըմբռնեն թէ Հայը ամենէն
 անկեղծ և ամենէն անհրաժեշտ դաշնակիցն է
 իրենց՝ պետութեան մէջ իսկական ազատութեան
 հաստատման համար . Հայուն դահիճները պատ-
 ժել, Սահմանագրութեան թշնամիները խոր-
 տակել ըսել է : Երկրի մի ընթացք մը՝ անիշխա-
 նութեան առջև դուռը բաց պահել և արտաքին
 միջամտութեան կարելիութիւնը պահպանել,
 օսմանեան պետութեան կործանումը փութացնել
 կը նշանակէ :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ



Catalogue des manuscrits arméniens et géorgiens

de la Bibliothèque Nationale

PAR FRÉDÉRIC MACLER

Ernest Leroux, éditeur, 28, rue Bonaparte

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ
ԵՒ

ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ ՀԱՅ ԿԵԱՆՔԻ
Կազմեց

Հ. ԱՐՍԷՆ ՂԱԶԻԿՅԱՆ

Առաջին պրակ (Ա.—Թ)

Վեներիկ. Ս. Ղազար — (գին 7 զ. 50)

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Զ Ա Ր Դ Ը

(1895—1896)

Դինն է՝ 50 սանթիմ

Դրմել՝ Կուստէմբէրկ գրավաճառանոցին

Թիֆլիս

Ա. ԶՕՊԱՆԵԱՆԻ
ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գին՝ Ծրագ

Les massacres d'Arménie,	
Préface de G. Clémenceau,	3,50
L'Arménie, son histoire, sa littérature, son rôle en Orient ; introduction d'Anatole France.	1
Zeitoun, depuis les origines jusqu'à l'insurrection de 1895, par Aghassi ; traduction française : préface de Victor Bérard.	—
Նահապետ Բուշակի դիւանը (քննական ուսումնասիրութեամբ հրատարակուած)	3
Poèmes arméniens anciens et modernes, traduction française, précédée d'une étude sur la poésie et l'art arméniens par Gabriel Mourey.	2
Chants populaires arméniens, traduction française avec une introduction et des notes: préface de Paul Adam. (պատկուած՝ Յրանասկան Ակադիմիային) :	3,50
Մկրտիչ Պէտիկբաշեանի բերուածներն ու նաոերը, ծանօթագրութիւն ներով հրատարակուած,	4
Les Trouvères arméniens, traduction française, avec une introduction et des notes.	3,50
Մկրտիչ Պէտիկբաշեանի կեանքն ու գործը, քննական ուսումնասիրութիւն .	5
Գերբուածներ	5

ԱՆԱՀԻՏԵ պիտի հրատարակուի այսուհետեւ կանոնաւորապէս՝ երկու ամիսն անգամ մը :
Ներկայ տարեւոյնը կը սկսի Ապրիլ-Մայիսին եւ պիտի լրանայ 1910ի Մարտ-Ապրիլին :

ԱՆԱՀԻՏԵ պիտի ունենայ բովանդակութիւն մը այլազան ու բազմակողմանի (գրականութիւն , գեղարուեստ , գիտութիւն , իմաստասիրութիւն , բաղաձայն եւ ընկերական հարցեր , ե.ն.) , յիշող բաժինը պիտի կազմեն հայոց հին ու նոր կեանքին , գրականութեան եւ արուեստին վերաբերող գրուածքներ :

ԱՆԱՀԻՏԵ ունի իր որոշ ուղղութիւնը , որ կը յայտնուի իր տեղեկներն ստորագրութիւնը կրող գրութեանց մէջ , բայց եւ կը հիւրընկալէ գրուածքներ տարբեր ուղղութեամբ , երբ անոնց հեղինակը ունի անկեղծութիւն եւ տաղանդ :

ԱՆԱՀԻՏԻն աշխատակցիլ խօստացած են ռուսահայ եւ քրմահայ ամենէն հեղինակաւոր գրագէտներէն , ինչպէս եւ մեր նորածիլ տաղանդաւոր գրողներէն շատերը :

ԱՆԱՀԻՏԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Բազու	Պարոն	Ստեփան Ալշրճեան
Գանիրե	»	Արմենակ Ատիլեան
Դարիզ	»	Վ. Բժշկեան
Թիֆլիս	»	Ս. Մեղքումեան
Իսր Բեմպրին	»	Գաբրիէլ Մուշեղեան
Իսր Ուօրըրթաուն	»	Կ. Մալխասեան
Նեուէ	»	Յ. Արողեան
Նիւ Եօրֆ	»	Եղիա Գուգուճեան
Նիւ Պրիքէյն	»	Ս. Սաչտըլեան
Ուսթըր	»	Յարութիւն Տ. Խաչոյեան
Ուօֆեկըն	»	Տ. Մաճեան
Չիֆաօ	»	Ս. Մուրատեան
Ռուսնուզ	»	Գառնիկ Մազմանեան
Սենթրըլ Ֆօլս	»	Նշան Մինասեան
Փրովիսեմս	»	Աւագ Կարապետեան
Ֆիլիպֆ	»	Թագաւոր Հինդլեան
Ֆրեկնօ	»	Գ. Նալպանտեան

„ԱՆԱՀԻՏ“Ի ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԱՆԱՀԻՏԵ կը հրատարակուի երկու ամիսն անգամ մը :

Բաժանորդագինն է տարեկան՝ 10 ֆրանք (ֆրանսա) , 12 ֆրանք (օտար երկիրներ) , 2 ռուպլ (Ամերիկա) , 5 ռուպլի (Ռուսիա) :

Վեցամսեայ՝ 5 ֆրանք (ֆրանսա) , 6 ֆրանք (օտար երկիրներ) , 1 ռուպլ (Ամերիկա) , 3 ռուպլի (Ռուսիա) :

Յօդուած եւ բաժանորդագին դրկել հետեւեալ հասցէին .

A. TCHOBANIAN

17. Rue La Bruyère, Paris